

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

**►B ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2006 թվականի դեկտեմբերի 20-ի
2006/126/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**

Վարորդական վկայականների մասին (վերամշակված տարբերակ

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

(ՊՏ L 403, 30.12.2006թ., էջ 18)

Փոփոխվել է՝

Պաշտոնական տեղեկագիր

թիվ էջ ամսաթիվ

"M1 Հանձնաժողովի 2009 թվականի օգոստոսի 25-ի L 223 31 26.08.2009թ
2009/113/ԵՀ հրահանգով

"B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2006 թվականի դեկտեմբերի 20-ի
2006/126/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Վարորդական վկայականների մասին

(վերամշակված տարբերակ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 71-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը (1),

Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն(2),

Քանի որ.

- 1) Որոշ դեպքերում «Վարորդական վկայականների մասին» Խորհրդի 1991 թվականի հուլիսի 29-ի 91/439/ԵՏՀ հրահանգը (3) զգալիորեն փոփոխվել է: Հիմա, երբ նշված հրահանգում կատարվում են նոր փոփոխություններ, ցանկալի է համապատասխան դրույթները վերամշակել՝ հարցերը հստակեցնելու նպատակով,
- 2) վարորդական իրավունքների վերաբերյալ կանոններն ընդհանուր տրանսպորտային քաղաքականության կարելու տարրերն են. դրանք նպաստում են ճանապարհային երթևեկության անվտանգության մակարդակի բարձրացմանը և դյուրացնում են վկայականը տրամադրող անդամ պետությունից տարբեր այլ անդամ պետությունում բնակություն հաստատող անձանց ազատ տեղաշարժը: Հաշվի առնելով առանձին տրանսպորտային միջոցների կարելուությունը՝ ընդունող անդամ պետության կողմից պատշաճորեն ճանաչված վարորդական վկայական ունենալը դյուրացնում է անձանց ազատ տեղաշարժը և հաստատման ազատությունը: Չնայած նրան, որ վարորդական վկայականների վերաբերյալ կանոնների ներդաշնակեցման հարցում առաջընթաց է արձանագրվել, այնուամենայնիվ, անդամ պետություններում վարորդական վկայականների գործողության ժամկետը երկարաձգելու հաճախականության և տրանսպորտային միջոցների ենթակարգերի վերաբերյալ կանոնները դեռևս զգալիորեն տարբերվում են, որոնք պետք է ավելի լիարժեք կերպով ներդաշնակեցվեն, որպեսզի նպաստեն Համայնքի քաղաքականության իրականացմանը,
- 3) 91/439/ԵՏՀ հրահանգով նախատեսված վավերականության ժամկետի վերաբերյալ ազգային դրույթներ սահմանելու հնարավորությունը հանգեցնում է նրան, որ տարբեր անդամ պետություններում միասին գործում են տարբեր կանոններ և անդամ պետություններում վավեր 110-ից ավելի տարբեր օրինակելի վարորդական վկայականներ: Սա քաղաքացիների, ոստիկանական ուժերի և վարորդական

վկայականի հետ կապված հարցերի կարգավորման համար պատասխանատու գերատեսչությունների համար գործընթացի թափանցիկության հետ կապված խնդիրներ է առաջացնում եւ հանգեցնում է փաստաթղթեր կեղծելուն, ինչը հաճախ մի քանի տասնյակ տարիների պատմություն ունի,

- 4) միասնական եվրոպական վարորդական օրինակելի վկայականի արդեն շրջանառվող 110 լրացուցիչ օրինակելի վկայականներից մեկը վերաձվելու հավանականությունը կանխելու նպատակով անդամ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի այն տրամադրվի վկայականի բոլոր տերերին,
- 5) սույն Հրահանգը չպետք է հակասի նախքան դրա կիրարկման ամսաթիվը տրամադրված կամ ձեռք բերված գործող վարորդական վկայականներին,
- 6) վարորդական վկայականները փոխադարձաբար ճանաչվում են: անդամ պետությունները պետք է կարողանան կիրառել սույն Հրահանգով սահմանված վավերականության ժամկետը մեկ այլ անդամ պետության կողմից տրամադրված վարորդական վկայականի նկատմամբ, որը չունի սահմանափակ վարչական վավերականության ժամկետ, եւ որի տերն ապրել է տվյալ անդամ պետության տարածքում երկու տարուց ավելի,
- 7) նոր վարորդական վկայականների համար վարչական վավերականության ժամկետի ներմուծումը պետք է հնարավորություն ընձեռի կիրառելու ամենավերջին միջոցները՝ վարորդական վկայականների գործողության ժամկետի պարբերաբար երկարաձգման ժամանակ փաստաթղթերի կեղծումների դեմ, ինչպես նաեւ անցկացնելու անդամ պետությունների կողմից նախատեսված բժշկական հետազոտությունները կամ կիրառելու այլ միջոցներ,
- 8) ելնելով ճանապարհային անվտանգության նկատառումներից՝ պետք է սահմանվեն վարորդական վկայական տրամադրելու նվազագույն պահանջները: Վարորդական

վկայական ստանալու քննությունների եւ վկայական տրամադրելու ստանդարտները պետք է ներդաշնակեցվեն: Այս նպատակով, անհրաժեշտ է որոշել մեխանիկական տրանսպորտային միջոցներ վարելու համար անհրաժեշտ գիտելիքները, հմտություններն ու վարքագիծը, գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման քննությունը պետք է հիմնված լինի նշված սկզբունքների վրա, եւ անհրաժեշտ է կրկին որոշել նման տրանսպորտային միջոցներ վարելու ֆիզիկական ու մտավոր համապատասխանության նվազագույն ստանդարտները,

9) վարորդական վկայական տրամադրելիս եւ այն պարբերաբար տրամադրելուց հետո պետք է տրամադրվի ուղեւորների կամ բեռների փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցների վարորդների՝ նմանատիպ տրանսպորտային միջոցներ վարելու ֆիզիկական ու մտավոր համապատասխանության նվազագույն ստանդարտների բավարարման ապացույց: Կանոնավոր կերպով իրականացվող ստուգումները, նվազագույն ստանդարտների կատարման ազգային կանոններին համապատասխան, կնպաստեն անձանց ազատ տեղաշարժին: Դրանց իրականացմամբ հնարավոր կլինի խուսափել մրցակցության խաթարումներից եւ ավելի լավ հաշվի առնել նշված տրանսպորտային միջոցների վարորդների հատուկ պարտականությունը: Անդամ պետություններին պետք է հնարավորություն ընձեռվի նշանակել բժշկական հետազոտություններ՝ որպես մյուս տեսակի տրանսպորտային միջոցներ վարելու ֆիզիկական ու մտավոր համապատասխանության նվազագույն ստանդարտների կատարման երաշխիք: Թափանցիկության նկատառումներից ելնելով՝ նշված հետազոտությունները պետք է կատարել վարորդական վկայականների գործողության ժամկետի երկարաձգման ժամանակ եւ, ուստի, դրանց կատարման ժամկետը պետք է որոշվի վկայականի վավերականության ժամկետով,

10) անհրաժեշտ է հետազայում ամրապնդել երկանիվ տրանսպորտային միջոցների կարգերի եւ ուղեւորների ու բեռների փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցների կարգերի աստիճանական մատչելիության սկզբունքը,

11) այնուամենայնիվ, անդամ պետությունները պետք է հնարավորություն ունենան որոշ

կարգի տրանսպորտային միջոցներ վարելու համար սահմանելու ավելի բարձր տարիք՝ ճանապարհային երթելության անվտանգության մակարդակն ավելի բարձրացնելու նպատակով, անդամ պետություններին պետք է թույլ տրվի բացառիկ հանգամանքներում սահմանելու ավելի ցածր տարիք՝ ազգային առանձնահատկությունները հաշվի առնելու համար,

- 12) կարգերի սահմանումները պետք է մեծապես արտացոլեն համապատասխան տրանսպորտային միջոցների տեխնիկական բնութագրերը եւ նշված տրանսպորտային միջոցները վարելու համար անհրաժեշտ հմտությունները,
- 13) մոպեդներ վարելու վարորդական վկայականների կարգ ներմուծելը, մասնավորապես, կմեծացնի ճանապարհային երթելության անվտանգության մակարդակը, քանի որ, ըստ վիճակագրության, մոպեդների ամենաերիտասարդ վարորդներն ամենաշատն են տուժում ճանապարհատրանսպորտային պատահարից,
- 14) անհրաժեշտ է ընդունել հատուկ դրույթներ, որպեսզի ֆիզիկական արատ ունեցող անձանց համար հեշտ լինի տրանսպորտային միջոցներ վարելը,
- 15) անդամ պետությունները պետք է, ճանապարհային երթելության անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով, կարողանան իրենց տարածքում կիրառել իրենց ազգային դրույթները վկայականի բոլոր այն տերերի վարորդական վկայականների գործողության դադարեցման, կասեցման եւ չեղյալ հայտարարման մասին, ովքեր սովորական բնակություն են հաստատել իրենց տարածքում,
- 16) 91/439/ԵՏՀ հրահանգով սահմանված վարորդական օրինակելի վկայականը պետք է փոխարինվի միասնական օրինակելի վկայականով, որն ունի պլաստիկ քարտի տեսք: Միեւնույն ժամանակ, նշված վարորդական օրինակելի վկայականը պետք է փոփոխվի, մոպեդները եւ մոտոցիկլետները վարելու վարորդական վկայականների նոր կարգեր

ներմուծելու հիմքով,

- 17) նոր պլաստիկ քարտի տեսք ունեցող վարորդական օրինակելի վկայականում այլընտրանքային միկրոչիպ տեղադրելը պետք է հնարավորություն տա անդամ պետություններին ավելի բարձրացնելու փաստաթղթի կեղծումների դեմ պաշտպանությունը: Անդամ պետությունները պետք է կարողանան ազգային տվյալները ներառել չիպի մեջ՝ պայմանով, որ դրանք չեն խոչընդոտում վարորդի մասին ընդհանուր տվյալների մատչելիության ապահովումը: Միկրոչիպին ներկայացվող տեխնիկական պահանջները պետք է սահմանի Հանձնաժողովը, որին աջակցում է վարորդական վկայականների հարցերով կոմիտեն,
- 18) քննություն ընդունողների գիտելիքների եւ հմտությունների մակարդակի բարձրացման նպատակով պետք է սահմանվեն քննություն ընդունողի մասնագիտություն ձեռք բերելու նվազագույն ստանդարտները եւ քննություն ընդունողի վերապատրաստմանը ներկայացվող պահանջները՝ դրանով ապահովելով վարորդական վկայական ստանալու համար դիմած վարորդի թեկնածուների առավել օբյեկտիվ գնահատումը եւ հասնելով վարորդական վկայական ստանալու քննությունների առավել մեծ ներդաշնակեցմանը,
- 19) Հանձնաժողովին պետք է հնարավորություն ընձեռվի I–VI հավելվածները համապատասխանեցնել գիտական եւ տեխնիկական առաջընթացին,
- 20) սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան, որով սահմանվում է Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը (4),
- 21) Հանձնաժողովը, մասնավորապես, պետք է լիազորված լինի սահմանելու սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ չափորոշիչները: Քանի որ նշված ակտերն

ընդհանուր բնույթ են կրում եւ նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, դրանք պետք է ընդունվեն 1999/468/ԵՀ որոշման 5(ա) հոդվածով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան,

22) քանի որ սույն Հրահանգի նպատակները չեն կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից, եւ քանի որ դրանք, իրենց գործողության ծավալի կամ ազդեցության նկատառումներից ելնելով, կարող են ավելի լավ իրագործվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է ընդունել ակտեր Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի համաձայն՝ սույն Հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է՝ նշված նպատակներն իրականացնելու համար,

23) սույն Հրահանգը չպետք է հակասի VII հավելվածի «Բ» մասով սահմանված՝ հրահանգներն ազգային իրավունքում փոխատեղելու եւ դրանք կիրառելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Վարորդական օրինակելի վկայականը

1. Անդամ պետությունները, սույն Հրահանգի դրույթներին համապատասխան, պետք է 1-ին հավելվածում նկարագրված՝ Համայնքի վարորդական օրինակելի վկայականի նմանօրինակությամբ ներմուծեն ազգային վարորդական վկայական: Համայնքի վարորդական օրինակելի վկայականների 1-ին էջի վրա պատկերված խորհրդանիշի վրա պետք է լինի վկայականը տրամադրող անդամ պետության տարբերանշանը:

2. Չհակասելով տվյալների պաշտպանության կանոններին՝ անդամ պետությունները կարող են, որպես վարորդական վկայականի մաս, կրիչ ներմուծել (միկրոչիպ), այն ժամանակ, երբ I հավելվածում նշված միկրոչիպին վերաբերող պահանջները, որոնք նախատեսված են

լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, սահմանվեն Հանձնաժողովի կողմից՝ 9(2) հոդվածում նշված՝ ընթացակարգին համապատասխան: Նշված պահանջներով նախատեսվում է ԵՀ տեսակի հաստատում, որը տրամադրվում է միայն այն դեպքում, երբ ապացուցվում է, որ տվյալները կեղծելու կամ դրանք փոխելու փորձեր են արվել:

3. Միկրոչիպը պարունակում է 1 հավելվածով սահմանված ներդաշնակեցված վարորդական վկայականի վերաբերյալ տվյալները:

Անդամ պետությունները, Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո, կարող են պահել լրացուցիչ տվյալներ՝ պայմանով, որ դա որեւէ կերպ չի խոչընդոտի սույն Հրահանգի իրականացումը:

9(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան՝ Հանձնաժողովը կարող է փոփոխել 1 հավելվածը՝ երաշխավորելու համար վկայականների հետագա համատեղելիությունը:

4. Անդամ պետությունները կարող են, Հանձնաժողովի համաձայնությամբ, մշակել վարորդական վկայականներ՝ 1-ին հավելվածում ներկայացված օրինակելի վկայականի նմանօրինակությամբ կամ կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են՝ վարորդական վկայականի համակարգչային մշակման համար:

Հոդված 2

Փոխադարձ ճանաչումը

1. Անդամ պետությունների կողմից տրամադրված վարորդական վկայականները պետք է փոխադարձաբար ճանաչվեն:

2. Եթե 7(2) հոդվածով սահմանված վարչական վավերականության ժամկետ չունեցող վավեր ազգային վարորդական վկայականի տերը սովորական բնակություն է հաստատում այն անդամ պետությունում, որը տարբեր է նրանից, որտեղ տրամադրվել է վկայականը, ապա ընդունող անդամ պետությունը կարող է վկայականի նկատմամբ կիրառել նշված հոդվածով սահմանված վարչական վավերականության ժամկետներ՝ երկարաձգելով վարորդական վկայականը՝ սկսած անդամ պետության տարածքում սովորական բնակություն հաստատելու ամսաթվից հետո երկու տարվա ընթացքում:

Հոդված 3

Կեղծիքների դեմ պայքարի միջոցները

1. Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ քայլերը՝ նախքան սույն Հրահանգն ուժի մեջ մտնելը՝ խուսափելու համար տրամադրված վարորդական վկայականների, այդ թվում՝ օրինակելի վարորդական վկայականների կեղծման ցանկացած վտանգից: Նրանք դրա մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:
2. Ի հավելվածով սահմանված՝ վարորդական վկայականների համար օգտագործվող նյութը պետք է պաշտպանված լինի կեղծումներից՝ կիրառելով այնպիսի սպեցիֆիկացիաներ, որոնք նախատեսված են լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար եւ սահմանվում են Հանձնաժողովի կողմից 9(2) հոդվածում նշված՝ ընթացակարգին համապատասխան: Անդամ պետությունները կարող են լրացուցիչ պաշտպանիչ հատկանիշներ ներմուծել:
3. Անդամ պետություններն ապահովում են, որ տրամադրված կամ գործածության մեջ գտնվող բոլոր վարորդական վկայականները մինչեւ 2033 թվականի հունվարի 19–ը բավարարեն սույն Հրահանգի բոլոր պահանջները:

Հոդված 4

Կարգերը, սահմանումները եւ նվազագույն տարիքը

1. 1–ին հոդվածով նախատեսված վարորդական վկայականով թույլատրվում է վարել ստորեւ նշված կարգերի՝ շարժիչով շարժման մեջ դրվող բոլոր տրանսպորտային միջոցները: Վարորդական վկայականներ կարող են տրամադրվել յուրաքանչյուր կարգի համար սահմանված նվազագույն տարիքից: – «շարժիչով շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոց» նշանակում է ինքնագնաց մեքենա, բացառությամբ ռելսագնաց տրանսպորտային միջոցի, որն ընթանում է ավտոճանապարհով՝ շարժման մեջ դրվելով իր սեփական շարժիչի միջոցով.
 2. մոպեդներ.
- «AM» կարգ.

- երկանիվ կամ եռանիվ մեխանիկական տրանսպորտային միջոցների տեսակի հաստատմանը վերաբերող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի մարտի 18-ի 2002/24/ԵՀ հրահանգի 1(2)(ա) հոդվածով սահմանված կարգով մինչեւ 45 կմ/ժամ առավելագույն նախագծային արագությամբ երկանիվ կամ եռանիվ տրանսպորտային միջոց (5) (բացառությամբ մինչեւ 25 կմ/ժ կամ դրան հավասար առավելագույն նախագծային արագությամբ տրանսպորտային միջոցների) եւ 2002/24/ԵՀ հրահանգի 1(3)(ա) հոդվածով սահմանված՝ թեթեւ քառանիվ մոտոսայլակներ.

- «AM» կարգի տրանսպորտային միջոց վարելու նվազագույն տարիքը 16 տարեկանն է:

3. մոտոցիկլետ՝ կողային կցորդով կամ առանց դրա եւ եռանիվ մոտոսայլակ.

- «մոտոցիկլետ» նշանակում է 2002/24/ԵՀ հրահանգի 1(2)(բ) հոդվածով սահմանված՝ կողային կցորդով կամ առանց դրա ցանկացած երկանիվ տրանսպորտային միջոց.

- «եռանիվ մոտոսայլակ» նշանակում է 2002/24/ԵՀ հրահանգի 1(2)(գ) հոդվածով սահմանված՝ երեք համաչափորեն տեղադրված անվադողեր ունեցող տրանսպորտային միջոց.

ա) «A1» կարգ.

- մինչեւ 125 խորանարդ սանտիմետր աշխատանքային ծավալ եւ մինչեւ 11 կՎ հզորություն ու մինչեւ 0,1 կՎ/կգ հզորություն-քաշ հարաբերակցություն ունեցող մոտոցիկլետ.

- մինչեւ 15 կՎ հզորություն ունեցող եռանիվ մոտոսայլակ.

- «A1» կարգի տրանսպորտային միջոց վարելու նվազագույն տարիքը 16 տարեկանն է.

բ) «A2» կարգ.

- մինչեւ 35 կՎ հզորություն եւ մինչեւ 0,2 կՎ/կգ հզորություն-քաշ հարաբերակցություն ունեցող մոտոցիկլետ, որն իր հզորությունից երկու անգամ ավելի հզորություն ունեցող տրանսպորտային միջոց չէ.

- «A2» կարգի տրանսպորտային միջոց վարելու նվազագույն տարիքը 18 տարեկանն է.

ա) «A» կարգ.

ի) մոտոցիկլետ.

- «A» կարգի տրանսպորտային միջոց վարելու նվազագույն տարիքը 20 տարեկանն է: Այնուամենայնիվ, այս կարգի մոտոցիկլետներ վարելու համար վարորդը պետք է «A2»

կարգի վկայականով մոտոցիկլետ վարելու առնվազն երկու տարվա փորձ ունենա: Մոտոցիկլետ վարելու փորձ ունենալու այս պահանջը կարող է չկիրառվել, եթե թեկնածուն առնվազն 24 տարեկան է:

ii) 15 կՎ հզորությունից ավելի հզորություն ունեցող եռանիվ մոտոսայլակ

- 15 կՎ հզորությունից ավելի հզորություն ունեցող եռանիվ մոտոսայլակ վարելու նվազագույն տարիքը 21 տարեկանն է:

4. մեխանիկական տրանսպորտային միջոց.

- «մեխանիկական տրանսպորտային միջոց» նշանակում է շարժիչով շարժման մեջ դրվող ցանկացած տրանսպորտային միջոց, որը սովորաբար օգտագործվում է ճանապարհով մարդկանց կամ բեռներ փոխադրելու կամ ճանապարհով՝ մարդկանց կամ բեռներ փոխադրելու համար օգտագործվող տրանսպորտային միջոցների քարշակման համար: Այս հասկացությունն իր մեջ ներառում է տրոլեյբուսները, այսինքն՝ էլեկտրահաղորդիչին միացված ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցները: Այն իր մեջ չի ներառում այնպիսի տրանսպորտային միջոցներ, ինչպիսիք գյուղատնտեսական կամ անտառային տնտեսության տրակտորներն են.

- «գյուղատնտեսական կամ անտառային տնտեսության տրակտոր» նշանակում է շարժիչով շարժման մեջ դրվող ցանկացած տրանսպորտային միջոց, որն ընթանում է անիվների կամ թրթուրավոր շղթաների վրա, ունի առնվազն երկու սոնի, որի հիմնական գործառույթն իր քարշիչ ուժի մեջ է, որը հատուկ նախագծված է գյուղատնտեսական կամ անտառային աշխատանքների հետ կապված որոշ գործիքներ, սարքեր կամ կցասայլեր քաշելու, հրելու, փոխադրելու կամ աշխատեցնելու համար, եւ որոնց օգտագործումը՝ ճանապարհով բեռներ կամ մարդկանց փոխադրելու, կամ բեռներ փոխադրելու համար օգտագործվող տրանսպորտային միջոցի քարշակման համար, միայն երկրորդական գործառույթ է:

ա) «B1» կարգ.

- 2002/24/ԵՀ հրահանգի 1(3)(բ) հոդվածով սահմանված՝ քառանիվ տրանսպորտային միջոցներ.

- «B1» կարգի տրանսպորտային միջոց վարելու նվազագույն տարիքը 16 տարեկանն է:

- «B1» կարգի վարորդական վկայական ունենալը պարտադիր չէ. այն անդամ պետություններում, որտեղ չի ներմուծվում այս կարգի վարորդական վկայական, նշված

տրանսպորտային միջոցներ վարելու համար պահանջվում է «B» կարգի վարորդական վկայական.

բ) «B» կարգ.

մինչեւ 3500 կգ թույլատրելի առավելագույն զանգված կամ վարորդի նստատեղի հետ միասին մինչեւ ութ նստատեղ ունեցող մեխանիկական տրանսպորտային միջոցներ, որոնք նախատեսված եւ արտադրված են ուղեւորներ փոխադրելու համար. այս կարգի մեխանիկական տրանսպորտային միջոցները կարող են համակցվել մինչեւ 750 կգ թույլատրելի առավելագույն զանգված ունեցող կցորդով:

Չհակասելով համապատասխան տրանսպորտային միջոցների տեսակի հաստատման կանոնների դրույթներին՝ այս կարգի մեխանիկական տրանսպորտային միջոցները կարող են համակցվել մինչեւ 750 կգ թույլատրելի առավելագույն զանգված ունեցող կցորդով՝ պայմանով, որ այս համակցության թույլատրելի առավելագույն զանգվածը չի գերազանցում 4 250 կիլոգրամը: Եթե այս համակցության զանգվածը գերազանցում է 3 500 կիլոգրամը, ապա անդամ պետությունները, V հավելվածի դրույթներին համապատասխան, պետք է պահանջեն, որ վարորդներն այս համակցությունը վարելու համար.

– վերապատրաստում անցած լինեն կամ

– գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման քննություն հանձնած լինեն:

Անդամ պետությունները կարող են պահանջել վարորդներից, որպեսզի վերջիններս անցնեն թե՛ վերապատրաստում եւ թե՛ հանձնեն գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման քննություն:

Անդամ պետությունները համապատասխան Համայնքի ծածկագրի միջոցով վարորդական վկայականի վրա նշում են, որ վարորդն իրավունք ունի վարելու նշված համակցությունը:

– «B» կարգի տրանսպորտային միջոց վարելու նվազագույն տարիքը 18 տարեկանն է.

գ) «BE» կարգ.

– չհակասելով համապատասխան տրանսպորտային միջոցների տեսակի հաստատման կանոնների դրույթներին՝ «B» կարգի տրակտորից եւ կցորդից կամ կիսակցորդից բաղկացած տրանսպորտային միջոցների համակցություն, եթե կցորդի կամ կիսակցորդի թույլատրելի առավելագույն զանգվածը չի գերազանցում 3 500 կիլոգրամը.

- «BE» կարգի տրանսպորտային միջոց վարելու նվազագույն տարիքը 18 տարեկանն է.

դ) «C1» կարգ.

«D1» կամ «D» կարգի մեխանիկական տրանսպորտային միջոցներից բացի այլ տրանսպորտային միջոցներ, որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցում է 3500 կգ-ն, սակայն չի անցնում 7 500 կգ-ն, եւ որոնք նախատեսված եւ արտադրված են վարորդի նստատեղի հետ միասին մինչեւ ութ ուղեւոր տեղափոխելու համար. այս կարգի մեխանիկական տրանսպորտային միջոցները կարող են համակցվել մինչեւ 750 կգ թույլատրելի առավելագույն զանգված ունեցող կցորդով:

ե) «C1E» կարգ.

- չհակասելով համապատասխան տրանսպորտային միջոցների տեսակի հաստատման կանոնների դրույթներին՝ «C1» կարգի տրակտորից եւ իր կցորդից կամ կիսակցորդից բաղկացած տրանսպորտային միջոցների համակցությունների թույլատրելի առավելագույն զանգվածը 750 կգ-ից ավելի է՝ պայմանով, որ համակցության թույլատրելի զանգվածը չի գերազանցում 12 000 կգ-ն.

- չհակասելով համապատասխան տրանսպորտային միջոցների տեսակի հաստատման կանոնների դրույթներին՝ «B» կարգի տրակտորից եւ իր կցորդից կամ կիսակցորդից բաղկացած տրանսպորտային միջոցների համակցությունների թույլատրելի զանգվածը 3 500 կգ-ից ավելի է՝ պայմանով, որ համակցության թույլատրելի զանգվածը չի գերազանցում 12 000 կգ-ն.

- «C1» եւ «C1E» կարգերի տրանսպորտային միջոցներ վարելու նվազագույն տարիքը 18 տարեկանն է՝ չկահասելով «Բեռներ կամ ուղեւորներ փոխադրող որոշ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների վարորդների նախնական որակավորման եւ պարբերական դասընթացների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003 թվականի հուլիսի 15-ի 2003/59/ԵՀ հրահանգով նշված տրանսպորտային միջոցներ վարելու դրույթներին (6)

զ) «C» կարգ.

«D1» կամ «D» կարգի մեխանիկական տրանսպորտային միջոցներից բացի այլ մեխանիկական տրանսպորտային միջոցներ, որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցում է 3500 կգ-ն, եւ որոնք նախատեսված ու արտադրված են վարորդի նստատեղի հետ միասին մինչեւ ութ ուղեւոր տեղափոխելու համար. այս կարգի

մեխանիկական տրանսպորտային միջոցները կարող են համակցվել մինչև 750 կգ թույլատրելի առավելագույն զանգված ունեցող կցորդով.

է) «CE» կարգ՝

- չհակասելով համապատասխան տրանսպորտային միջոցների տեսակի հաստատման կանոնների դրույթներին՝ «C» կարգի տրակտորից եւ իր կցորդից կամ կիսակցորդից բաղկացած տրանսպորտային միջոցների համակցությունների թույլատրելի առավելագույն զանգվածը 750 կգ-ից ավելի է.

- «C» եւ «CE» կարգերի տրանսպորտային միջոցներ վարելու նվազագույն տարիքը 21 տարեկանն է՝ չհակասելով 2003/59/ԵՀ հրահանգով նշված՝ տրանսպորտային միջոցներ վարելու դրույթներին.

ը) «D1» կարգ.

մեխանիկական տրանսպորտային միջոցներ, որոնք նախատեսված ու արտադրված են վարորդի նստատեղի հետ միասին մինչև 16 ուղևոր տեղափոխելու համար, եւ որոնց առավելագույն երկարությունը չի գերազանցում 8 մ-ն. այս կարգի մեխանիկական տրանսպորտային միջոցները կարող են համակցվել մինչև 750 կգ թույլատրելի առավելագույն զանգված ունեցող կցորդով.

թ) «D1E» կարգ.

- չհակասելով համապատասխան տրանսպորտային միջոցների տեսակի հաստատման կանոնների դրույթներին՝ «D1» կարգի տրակտորից եւ իր կցորդից բաղկացած տրանսպորտային միջոցների համակցությունների թույլատրելի առավելագույն զանգվածը 750 կգ-ից ավելի է.

- «D1» եւ «D1E» կարգերի տրանսպորտային միջոցներ վարելու նվազագույն տարիքը 21 տարեկանն է՝ չհակասելով 2003/59/ԵՀ հրահանգով նշված՝ տրանսպորտային միջոցներ վարելու դրույթներին.

ժ) «D» կարգ.

մեխանիկական տրանսպորտային միջոցներ, որոնք նախատեսված ու արտադրված են վարորդի նստատեղի հետ միասին ութից ավելի ուղևոր տեղափոխելու համար. մեխանիկական տրանսպորտային միջոցները, որոնք հնարավոր է վարել «D» կարգի

վարորդական վկայականով, կարող են համակցվել մինչեւ 750 կգ թույլատրելի առավելագույն զանգված ունեցող կցորդով.

ժա) «DE» կարգ.

- չհակասելով համապատասխան տրանսպորտային միջոցների տեսակի հաստատման կանոնների դրույթներին՝ «D» կարգի տրակտորից եւ իր կցորդից բաղկացած տրանսպորտային միջոցների համակցությունների թույլատրելի առավելագույն զանգվածը 750 կգ-ից ավելի է.

- «D» եւ «DE» կարգերի տրանսպորտային միջոցներ վարելու նվազագույն տարիքը 24 տարեկանն է՝ չհակասելով 2003/59/ԵՀ հրահանգով նշված՝ տրանսպորտային միջոցներ վարելու դրույթներին:

5. Անդամ պետությունները, Հանձնաժողովի համաձայնությամբ, կարող են շարժիչով շարժման մեջ դրվող որոշ հատուկ տեսակի տրանսպորտային միջոցները, օրինակ՝ ֆիզիկական արատ ունեցող անձանց համար նախատեսված հատուկ տրանսպորտային միջոցները բացառել սույն հոդվածի կիրառման ոլորտից:

Անդամ պետությունները կարող են սույն Հրահանգի կիրառման շրջանակից բացառել զինված ուժերի եւ քաղաքացիական պաշտպանության զորքերի կողմից կամ նրանց հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցները:

6. Անդամ պետությունները կարող են բարձրացնել կամ նվազեցնել վարորդական վկայական ստանալու նվազագույն տարիքի շեմը՝

ա) «AM» կարգի դեպքում՝ 14 տարեկանից ցածր կամ 18 տարեկանից բարձր.

բ) «B1» կարգի դեպքում՝ մինչեւ 18 տարեկան.

գ) «A1» կարգի դեպքում՝ մինչեւ 17 կամ 18 տարեկան.

- եթե «A1» կարգի տրանսպորտային միջոց վարելու նվազագույն տարիքի եւ «A2» կարգի տրանսպորտային միջոց վարելու նվազագույն տարիքի միջեւ կա երկու տարվա տարբերություն.

- առկա է «A2» կարգի մոտոցիկլետներ վարելու նվազագույնը երկու տարվա փորձ՝ նախքան 4(3)(գ)(i) հոդվածում նշված՝ «A» կարգի մոտոցիկլետ վարելու թույլտվություն տրամադրելը.

դ) «B» եւ «BE» կարգերի դեպքում՝ 17 տարեկանից ցածր:

Անդամ պետությունները կարող են նվազեցնել «C» կարգի հետեյալ տրանսպորտային միջոցներ վարելու նվազագույն տարիքը՝ այն դարձնելով 18 տարեկան, իսկ «D» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու նվազագույն տարիքը՝ 21 տարեկան՝

ա) հրշեջ ծառայության եւ հասարակական կարգի պահպանման համար օգտագործվող տրանսպորտային միջոցներ.

բ) վերանորոգման կամ պահպանման նպատակներով ավտոճանապարհային փորձարկումներ անցնող տրանսպորտային միջոցներ:

Սույն պարբերությանը համապատասխան 2–4–րդ պարբերություններով սահմանված տարիքից ցածր տարիքի անձանց տրամադրված վարորդական վկայականները վավեր են միայն վկայականը տրամադրող անդամ պետության տարածքում, քանի դեռ վկայականի տերը չի հասել 2–4–րդ պարբերություններով սահմանված նվազագույն տարիքի:

Անդամ պետությունները կարող են իրենց տարածքում ճանաչել 2–4–րդ պարբերություններով սահմանված՝ նվազագույն տարիքից ցածր տարիքի վարորդներին տրամադրված վկայականի վավերականությունը:

Հոդված 5

Պայմանները եւ սահմանափակումները

1. Վարորդական վկայականների վրա նշվում են այն պայմանները, որոնց համաձայն, վարորդին թույլատրվում է վարել տրանսպորտային միջոցը:
2. Եթե ֆիզիկական արատ ունենալու պատճառով թույլատրվում է վարել միայն տրանսպորտային միջոցների որոշ տեսակներ կամ հարմարեցված տրանսպորտային միջոցներ, ապա 7–րդ հոդվածով նախատեսված՝ գործնական վարման հմտությունների եւ վարքագծի քննությունը պետք է ընդունվի նման տրանսպորտային միջոցով:

Հոդված 6

Կարգերի միջեւ աստիճանավորումը եւ համարժեք վկայականների տրամադրումը

1. Վարորդական վկայականներ տրամադրվում են հետեյալ պայմանների պահպանման դեպքում՝

ա) «C1», «C», «D1» եւ «D» կարգերի վկայականներ տրամադրվում են միայն այն վարորդներին, ովքեր արդեն «B» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ունեն.

բ) «BE», «C1E», «CE» «D1E» եւ «DE» կարգերի վկայականներ տրամադրվում են միայն այն վարորդներին, ովքեր արդեն իրավունք ունեն վարելու համապատասխանաբար «B», «C1», «C», «D1» եւ «D» կարգի տրանսպորտային միջոցներ:

2. Վարորդական վկայականների վավերականությունը որոշվում է հետեւյալ կերպ՝

ա) «C1E», «CE», «D1E» կամ «DE» կարգերի տրանսպորտային միջոց վարելու համար տրամադրված վկայականները վավեր են՝ «BE» կարգի տրանսպորտային միջոցների համակցություններ վարելու համար.

բ) «CE» կարգի տրանսպորտային միջոց վարելու համար տրամադրված վկայականները վավեր են «DE» կարգի տրանսպորտային միջոցների համար այնքան ժամանակ, քանի դեռ դրանց տերերն իրավունք ունեն վարելու «D» կարգի տրանսպորտային միջոցներ.

գ) «CE» եւ «DE» կարգի տրանսպորտային միջոց վարելու համար տրամադրված վկայականները վավեր են համապատասխանաբար «C1E» եւ «D1E» կարգի տրանսպորտային միջոցների համակցություններ վարելու համար.

դ) ցանկացած կարգի համար տրամադրված վկայականները վավեր են «AM» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու համար: Այնուամենայնիվ, անդամ պետությունը, իր տարածքում տրամադրված վարորդական վկայականի դեպքում կարող է սահմանափակել համարժեք վկայականները «AM» կարգից մինչեւ «A1», «A2» եւ «A» կարգեր, եթե նշված անդամ պետությունը նշանակում է գործնական քննություն՝ որպես «AM» կարգի վկայական ստանալու պայման.

ե) «A2» կարգի վկայականները վավեր են միայն «A1» կարգի դեպքում.

զ) «A», «B», «C» կամ «D» կարգերի համար տրամադրված վկայականները վավեր են համապատասխանաբար «A1», «A2», «B1», «C1» կամ «D1» կարգերի դեպքում:

3. Իրենց տարածքում հետեւյալ տրանսպորտային միջոցները վարելու համար անդամ պետությունները կարող են տրամադրել հետեւյալ համարժեք վկայականները՝

ա) «B» կարգի վկայականով եռանիվ մոտոսայլակներ, 15 կՎ հզորություն ունեցող եռանիվ մոտոսայլակներ վարելու համար՝ պայմանով, որ «B» կարգի վկայականի տերն առնվազն 21 տարեկան է.

բ) «B» կարգի վկայականով «A1» կարգի մոտոցիկլետներ:

Քանի որ սույն պարբերությունը վավեր է միայն իրենց տարածքներում, անդամ պետությունները չպետք է վարորդական վկայականի վրա նշեն, որ վկայականի տերն իրավունք ունի վարելու նշված տրանսպորտային միջոցը:

4. Անդամ պետությունները կարող են, Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո, իրենց տարածքում թույլատրել՝

ա) «D1» կարգի տրանսպորտային միջոցները (3500 կգ թույլատրելի առավելագույն զանգված ունեցող տրանսպորտային միջոցներ՝ բացառելով ֆիզիկական արատ ունեցող ուղեւորների փոխադրման համար նախատեսված ցանկացած մասնագիտացված սարքավորում) վարելը 21 տարին լրացած այն անձանց կողմից, ովքեր առնվազն երկու տարի առաջ ստացել են «B» կարգի վարորդական վկայական՝ պայմանով, որ տրանսպորտային միջոցներն օգտագործվում են ոչ առետրային մարմինների կողմից սոցիալական նպատակների համար, եւ որ վարորդը մատուցում է իր ծառայությունները կամավոր հիմունքներով.

բ) 3500 կգ թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող տրանսպորտային միջոցների վարումը 21 տարին լրացած այն անձանց կողմից, ովքեր առնվազն երկու տարի առաջ ստացել են «B» կարգի վարորդական վկայական՝ պայմանով, որ տրանսպորտային միջոցներն օգտագործվում են միայն այն դեպքում, երբ դրանք ֆիքսված են եւ նախատեսված են որպես կրթական կամ ժամանցի վայր, ինչպես նաեւ օգտագործվում են ոչ առետրային մարմինների կողմից սոցիալական նպատակների համար, ինչպես նաեւ որ նշված տրանսպորտային միջոցները ձեւափոխվեն այնպես, որպեսզի չօգտագործվեն ինն անձից ավելի անձ, ինչպես նաեւ ցանկացած բեռ փոխադրելու համար, բացառությամբ եթե իրենց նպատակներն իրագործելու համար դա խիստ անհրաժեշտ չէ:

Հոդված 7

Տրամադրումը, վավերականությունը եւ գործողության ժամկետի երկարաձգումը

1. Վարորդական վկայականներ պետք է տրամադրվեն միայն այն թեկնածուներին՝

ա) ովքեր հանձնել են գործնական վարման հմտությունների ու վարքագծի քննությունը, ինչպես նաեւ տեսական քննությունը, եւ ովքեր բավարարում են առողջությանը ներկայացվող չափանիշները՝ II եւ III հավելվածների դրույթներին համապատասխան.

բ) ովքեր հանձնել են տեսական քննությունը միայն «AM» կարգի համար. անդամ պետությունները կարող են պահանջել թեկնածուներից այս կարգի համար հանձնելու գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման քննություն, ինչպես նաեւ անցնելու բժշկական զննություն:

Այս կարգում եռանիվ եւ քառանիվ տրանսպորտային միջոցների դեպքում անդամ պետությունները կարող են նշանակել գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման առանձին քննություն: «AM» կարգի տրանսպորտային միջոցների տարբերակման համար կարող է ազգային ծածկագիր տեղադրվել այն անձանց վարորդական վկայականների վրա՝

գ) ովքեր, ունենալով համապատասխանաբար «A1» կամ «A2» կարգի մոտոցիկլետներ վարելու նվազագույնը երկու տարվա փորձ, «A2» կամ «A» կարգի մասով հանձնել են VI հավելվածի համաձայն միայն գործնական վարման հմտությունների եւ վարքագծի քննություն կամ անցել են վերապատրաստում.

դ) ովքեր 4(4)(բ) հոդվածի երկրորդ ենթապարբերությամբ սահմանված՝ տրանսպորտային միջոցների համակցություն վարելու համար «B» կարգի համար վերապատրաստում են անցել կամ հանձնել են գործնական վարման հմտությունների եւ վարքագծի քննություն.

ե) ովքեր իրենց սովորական բնակության վայրը հաստատել են վկայականը տվող անդամ պետությունում կամ կարող են ապացուցել, որ առնվազն վեց ամիս սովորում են տվյալ անդամ պետությունում:

2.

ա) 2013 թվականի հունվարի 19-ից սկսած՝ «AM», «A1», «A2», «A», «B», «B1» եւ «BE» կարգերի համար անդամ պետությունների կողմից տրամադրված վկայականներն ունեն 10 տարի վարչական վավերականության ժամկետ:

Անդամ պետությունները կարող են, իրենց հայեցողությամբ, վկայականների վարչական վավերականության ժամկետը դարձնել մինչև 15 տարի:

բ) 2013 թվականի հունվարի 19-ից սկսած՝ «C», «CE», «C1», «C1E», «D», «DE», «D1», «D1E» կարգերի համար անդամ պետությունների կողմից տրամադրված վկայականներն ունեն 5 տարի վարչական վավերականության ժամկետ:

գ) վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգումը կարող է հիմք ծառայել մեկ այլ կարգի կամ կարգերի համար նոր վարչական վավերականության ժամկետ սահմանելու համար, որը վկայականի տերն իրավունք ունի վարելու, եթե այն համահունչ է սույն Հրահանգով սահմանված պայմաններին:

դ) 1-ին հոդվածի համաձայն՝ միկրոչիպի առկայությունը վարորդական վկայականի վավերականության համար նախապայման չի համարվում: Միկրոչիպի կորստի կամ անընթեռնելիության կամ դրան հասցված ցանկացած այլ վնասի դեպքում փաստաթուղթը մնում է վավերական:

3. Երբ վարորդական վկայականների վարչական վավերականության ժամկետն ավարտվում է, դրանց գործողության ժամկետը երկարաձգվում է, եթե՝

ա) վարորդը համապատասխանում է «C», «CE», «C1», «C1E», «D», «DE», «D1», «D1E» կարգերի վարորդական վկայականների համար III հավելվածով սահմանված՝ վարելու ֆիզիկական եւ մտավոր պիտանիության նվազագույն ստանդարտներին եւ

բ) վարորդն իր սովորական բնակության վայրը հաստատել է վկայականը տվող անդամ պետությունում կամ կարող է ապացուցել, որ առնվազն վեց ամիս սովորում է տվյալ անդամ պետությունում:

Անդամ պետությունները կարող են, «AM», «A», «A1», «A2», «B», «B1» եւ «BE» կարգերի վարորդական վկայականների գործողության ժամկետը երկարաձգելիս, պահանջել հետազոտություն, որով կստուգվի III հավելվածով սահմանված՝ վարելու ֆիզիկական եւ մտավոր պիտանիության նվազագույն ստանդարտներին համապատասխանությունը:

Անդամ պետությունները կարող են, ավտոճանապարհային անվտանգության մակարդակի բարձրացման նկատառումներից ելնելով, սահմանափակել սկսնակ վարորդներին ցանկացած կարգի համար տրամադրվող վարորդական վկայականների՝ 2-րդ պարբերությամբ սահմանված վարչական վավերականության ժամկետը՝ նման վարորդների նկատմամբ հատուկ միջոցներ կիրառելու նպատակով:

Անդամ պետությունները կարող են, ավտոճանապարհային անվտանգության մակարդակի բարձրացման նկատառումներից ելնելով, սահմանափակել սկսնակ վարորդներին «C» եւ «D» կարգերի համար տրամադրվող առաջին վարորդական վկայականի վարչական վավերականության ժամկետը եւ այն դարձնել երեք տարի՝ նման վարորդների նկատմամբ հատուկ միջոցներ կիրառելու նպատակով:

Անդամ պետությունները կարող են սահմանափակել ցանկացած կարգի համար տրամադրվող առանձին վարորդական վկայականների՝ 2-րդ պարբերությամբ սահմանված վարչական վավերականության ժամկետը, եթե անհրաժեշտ է դառնում ավելի հաճախ կատարել բժշկական զննություն կամ կիրառել այլ հատուկ միջոցներ, ինչպես, օրինակ՝ ավտոճանապարհային երթելեկության կանոնները խախտող անձանց համար սահմանափակումները:

Անդամ պետությունները կարող են սահմանափակել իրենց տարածքում բնակվող եւ 50 տարեկան վարորդների վարորդական վկայականների՝ 2-րդ պարբերությամբ սահմանված վարչական վավերականության ժամկետը՝ ավելի հաճախ բժշկական զննություն անցկացնելու կամ այլ հատուկ միջոցներ կիրառելու նպատակով: Վարչական վավերականության ժամկետը կարող է կրճատվել միայն այն ժամանակ, եթե վարորդը դիմել է իր վարորդական վկայականի ժամկետը երկարաձգելու համար:

4. Չհակասելով քրեական եւ ոստիկանության ազգային օրենսդրություններին՝ անդամ պետությունները կարող են, Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո, վարորդական վկայականների տրամադրման համար կիրառել սույն Հրահանգով նշված պայմաններից բացի՝ այլ պայմանների վերաբերող իրենց ազգային կանոնների դրույթները:

5.

ա) Ոչ մի անձ մեկից ավելի անդամ պետությունների վարորդական վկայական չի կարող ունենալ.

բ) անդամ պետությունը մերժում է վարորդական վկայականի տրամադրումը, եթե բացահայտում է, որ թեկնածուն արդեն ունի վարորդական վկայական.

գ) անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ (բ) կետի համաձայն: Անդամ պետությունները պետք է վարորդական վկայականի տրամադրմանը, փոխարինմանը, գործողության ժամկետի երկարաձգմանը կամ փոփոխմանը վերաբերող

անհրաժեշտ միջոցներն ստուգեն այլ անդամ պետությունների հետ, եթե ողջամիտ հիմքեր կան կասկածելու, որ թեկնածուն արդեն ունի մեկ այլ վարորդական վկայական.

դ) (բ) կետի համաձայն ստուգումների գործընթացը դյուրացնելու նպատակով անդամ պետությունները կիրառում են ԵՄ վարորդական վկայականների ցանցը, եթե այն գործում է:

Չհակասելով 2-րդ հոդվածին՝ վկայականը տրամադրող անդամ պետությունը ցուցաբերում է բարեխիղճ մոտեցում՝ ապահովելու համար, որ անձը բավարարում է սույն հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված պահանջները, ինչպես նաև կիրառում է իր ազգային դրույթները վարելու իրավունքի չեղարկման կամ դադարեցման դեպքում, եթե բացահայտում է, որ վկայականը տրամադրելիս անձը չի բավարարել պահանջները:

Հոդված 8

Տեխնիկական եւ գիտական առաջընթացին համապատասխանեցումը

I-VI հավելվածները գիտատեխնիկական առաջընթացին հարմարեցնելու համար անհրաժեշտ փոփոխությունները պետք է ընդունվեն 9(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 9

Կոմիտեն

1. Հանձնաժողովին աջակցում է վարորդական վկայականների հարցերով կոմիտեն:
2. Երբ հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 10

Վարելու քննություն ընդունողները

Սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո վարելու քննություն ընդունողները պետք է բավարարեն IV հոդվածով սահմանված նվազագույն չափանիշները:

Վարելու քննություն ընդունողները, որոնք արդեն նման կերպ են աշխատում մինչև 2013 թվականի հունվարի 19-ը, պետք է պահպանեն միայն որակի ապահովմանը եւ պարբերական վերապատրաստման միջոցառումներին ներկայացվող պահանջները:

Հոդված 11

Վարորդական վկայականների փոխանակմանը, դադարեցմանը, փոխարինմանը եւ ճանաչմանը վերաբերող տարբեր դրույթները

1. Եթե անդամ պետության կողմից տրամադրված վավեր ազգային վարորդական վկայականի տերը սովորական բնակություն է հաստատել մեկ այլ անդամ պետությունում, ապա նա կարող է դիմել, որպեսզի իր վկայականը փոխարինվի համարժեք վկայականով: Տվյալ անդամ պետության խնդիրը ստուգելն է, թե արդյոք ներկայացված վկայականը, ըստ էության, դեռ վավեր է, թե ոչ:

2. Հետեւելով քրեական եւ ոստիկանության օրենսդրությունների տարածքայնության սկզբունքին՝ սովորական բնակության անդամ պետությունները կարող են կիրառել իրենց ազգային դրույթները՝ մեկ այլ անդամ պետության կողմից տրամադրված վարորդական վկայական ունեցող անձի՝ վարելու իրավունքի սահմանափակման, կասեցման, դադարեցման կամ չեղարկման նկատմամբ եւ, հարկ եղած դեպքում, կարող են այս նպատակով փոխարինել վկայականը:

3. Վկայականը փոխարինող անդամ պետությունը վերադարձնում է հին վկայականը այն տրամադրած անդամ պետության մարմիններին եւ ներկայացնում է այն փոխարինելու պատճառները:

4. Անդամ պետությունը կարող է մերժել վարորդական վկայականի տրամադրումն այն թեկնածուին, ում վարորդական վկայականի գործողության ժամկետը սահմանափակվել, կասեցվել կամ դադարեցվել է մեկ այլ անդամ պետությունում:

Անդամ պետությունը մերժում է ճանաչել ցանկացած այն վարորդական վկայականի վավերականությունը, որը տրամադրվել է մեկ այլ անդամ պետության կողմից այն անձին, ում վարորդական վկայականի գործողության ժամկետը սահմանափակվել, կասեցվել կամ դադարեցվել է:

Անդամ պետությունը կարող է նաեւ մերժել վարորդական վկայականի տրամադրումն այն թեկնածուին, ում վկայականը չեղարկվել է մեկ այլ անդամ պետությունում:

5. Օրինակ՝ կորած կամ գողացված վարորդական վկայականի կրկնօրինակը կարող է ստացվել այն պետության իրավասու մարմիններից, որտեղ նա սովորական բնակություն է հաստատել, ընդ որում, նշված մարմինները տրամադրում են կրկնօրինակն իրենց տիրապետության տակ գտնվող տեղեկությունների կամ, հարկ եղած դեպքում, բնօրինակ վկայականը տվող անդամ պետության իրավասու մարմինների կողմից ներկայացված ապացույցի հիման վրա:

6. Եթե անդամ պետությունը երրորդ երկրում տրամադրված վարորդական վկայականը փոխարինում է Համայնքի վարորդական օրինակելի վկայականով, ապա նման փոխանակման, ինչպես նաև վավերության հետագա ժամկետի երկարաձգման կամ կրկնօրինակի տրամադրման մասին պետք է նշումներ կատարվեն վարորդական վկայականում:

Վարորդական իրավունքը կարող է փոխանակվել միայն այն ժամանակ, եթե երրորդ երկրի կողմից տրամադրված վարորդական վկայականը հանձնվել է փոխանակումն իրականացնող անդամ պետության իրավասու մարմիններին: Եթե վկայականի տերը փոխում է իր սովորական բնակության վայրը եւ տեղափոխվում է մեկ այլ անդամ պետություն, ապա վերջինս կարող է չկիրառել 2-րդ հոդվածով սահմանված փոխադարձ ճանաչման սկզբունքը:

Հոդված 12

Սովորական բնակության վայրը

Սույն Հրահանգի իմաստով՝ «սովորական բնակություն» նշանակում է այն վայրը, որտեղ անձը, անձնական եւ մասնագիտական կապերից ելնելով, սովորաբար բնակվում է, այսինքն՝ յուրաքանչյուր օրացուցային տարվա մեջ առնվազն 185 օր, կամ մասնագիտական կապերի բացակայության դեպքում՝ անձնական այն կապերից ելնելով, որոնք վկայում են անձի եւ իր բնակության վայրի միջեւ գոյություն ունեցող սերտ կապի մասին:

Այնուամենայնիվ, այն անձի սովորական բնակության վայրը, ում աշխատանքային կապերը մեկ վայրում են, իսկ անձնական կապերը՝ մեկ այլ վայրում, եւ ով դրա արդյունքում հերթականությամբ բնակվում է երկու կամ ավելի անդամ պետություններում գտնվող տարբեր վայրերում, ապա նրա սովորական բնակության վայր է համարվում իր անձնական կապերի գտնվելու վայրը՝ պայմանով, որ այդ անձը պարբերաբար վերադառնում է այնտեղ:

Այս վերջին պահանջը պատահիր չէ այն անձի համար, ով բնակվում է անդամ պետությունում՝ որոշակի տեղադրամբ խնդրի իրականացման նպատակով: Համալսարան կամ դպրոց հաճախելը չի ենթադրում սովորական բնակության վայրի փոփոխություն:

Հոդված 13

Անդամ պետություն չհանդիսացող երկրների վարորդական օրինակելի վկայականների միջև համարժեքությունները

1. Անդամ պետությունները, Հանձնաժողովի համաձայնությամբ, ստեղծում են սույն Հրահանգի իրականացումից առաջ տրամադրված վարորդական վկայականների եւ 4-րդ հոդվածով սահմանված համապատասխան կարգերի տրանսպորտային միջոց վարելու համար տրամադրված վկայականների միջև համարժեքությունները:

Անդամ պետությունները կարող են, Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո, իրենց ազգային օրենսդրության մեջ կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են 11(4), (5) եւ (6) հոդվածի դրույթների կիրարկման նպատակով:

2. Մինչեւ 2013 թվականի հունվարի 19-ը վարորդներին տրամադրված վարորդական իրավունքը սույն Հրահանգի դրույթներով հետ չի վերցվի կամ այլ կերպ որակավորվի:

Հոդված 14

Վերանայումը

Հանձնաժողովը, ոչ շուտ, քան 2018 թվականի հունվարի 19-ը, սույն Հրահանգի կիրարկման, այդ թվում՝ ճանապարհային անվտանգության վրա դրա ազդեցության վերաբերյալ զեկույց է ներկայացնում:

Հոդված 15

Փոխադարձ օգնությունը

Անդամ պետություններն աջակցում են միմյանց սույն Հրահանգի իրականացման հարցում եւ տեղեկություններ են փոխանակում իրենց կողմից տրամադրված, փոխանակված, փոխարինված, գործողության ժամկետը երկարաձգած կամ անվավեր ճանաչած

վարորդական վկայականների մասին: Նրանք կիրառում են ԵՄ վարորդական վկայականի՝ նշված նպատակների համար ստեղծված ցանցը, եթե այն գործում է:

Հոդված 16

Փոխատեղումը

1. Անդամ պետությունները ոչ ուշ, քան 2011 թվականի հունվարի 19-ը, ընդունում եւ հրապարակում են 1(1), 3, 4(1), (2), (3) եւ (4)(բ)–(ժա), 6(1), (2)(ա), (գ), (դ) ու (ե), 7(1)(բ), (գ) եւ (դ), (2), (3) ու (5), 8, 10, 13, 14, 15 հոդվածներով եւ «A1», «A2» ու «A» կարգերին վերաբերող I հավելվածի 2-րդ կետի, II հավելվածի 5.2 կետի, IV, V եւ VI հավելվածների կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը: Նրանք Հանձնաժողով են անմիջապես ներկայացնում այդ ակտերի տեքստը:

2. Նրանք կիրառում են նշված դրույթները 2013 թվականի հունվարի 19-ից:

3. Եթե անդամ պետություններն ընդունում են նշված դրույթները, ապա դրանք հղում են պարունակում սույն Հրահանգին կամ իրենց պաշտոնական հրապարակման դեպքում՝ պետք է ուղեկցվեն նման հղումով: Դրանցով նշում պետք է նաեւ պարունակվի, որ ուժը կորցրած հրահանգին գործող օրենքներում, կանոնակարգերում կամ վարչական ակտերում արվող հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն Հրահանգին արվող հղումներ: Նման հղում կատարելու մեթոդները եւ դրա ձեւակերպումը սահմանվում են անդամ պետությունների կողմից:

4. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 17

Ուժը կորցրած ճանաչելը

91/439/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2013 թվականի հունվարի 19-ից՝ չհակասելով VII հավելվածի «Բ» մասում նշված ազգային իրավունքով սահմանված՝ հրահանգը փոխատեղելու ժամկետի վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

91/439/ԵՏՀ հրահանգի 2(4) հոդվածն ուժը կորցրած է ճանաչվում 2007 թվականի հունվարի 19-ին:

Ուժը կորցրած հրահանգին կատարված հղումները մեկնաբանվում են որպես սույն Հրահանգին կատարվող հղումներ եւ դիտվում են VIII հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակին համապատասխան:

Հոդված 18

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:

2(1), 5, 6(2)(բ), 7(1)(ա), 9, 11(1), (3), (4), (5) եւ (6), 12-րդ հոդվածները եւ I, II ու III հավելվածները կիրառվում են 2009 թվականի հունվարի 19-ից:

Հոդված 19

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Համայնքի վարորդական օրինակելի վկայականի քարտի ֆիզիկական բնութագրերը պետք է համապատասխանեն ISO 7810 եւ ISO 7816-1 ստանդարտներին:

Քարտերը պետք է պատրաստված լինեն պոլիկարբոնատից:

Միջազգային չափանիշներին համապատասխանությունը հաստատելու համար, վարորդական վկայականների բնութագրերը հետազոտելու մեթոդները պետք է համապատասխանեն ISO 10373 ստանդարտին:

2. Վարորդական վկայականների ֆիզիկական անվտանգությունը

Վարորդական վկայականների ֆիզիկական անվտանգությանը սպառնացող վտանգներն են՝

– կեղծ քարտեր արտադրելը. փաստաթղթին շատ նման նոր փաստաթղթի ստեղծում՝ այն պատրաստելով զրոյից կամ բնօրինակ փաստաթղթից պատրաստելով դրա կրկնօրինակը.

– տվյալները փոխելը. բնօրինակ փաստաթղթի հատկանիշների փոփոխություն, օրինակ՝ փաստաթղթի վրա տպված որոշ տվյալների փոփոխություն.

Կիրառական պրոցեսից, տվյալների փոխանցումից, քարտի պատյանի նյութից, տպագրման տեխնիկայից, մի շարք նվազագույն տարբեր պաշտպանիչ հատկանիշներից եւ անհատականացման պրոցեսից բաղկացած ամբողջական համակարգը պետք է անվտանգ լինի.

ա) վարորդական վկայականների նյութը պետք է պաշտպանված լինի կեղծումներից՝ կիրառելով հետեւյալ տեխնիկաները (պարտադիր պաշտպանիչ հատկանիշներ)՝

– քարտի պատյանները պետք է լինեն ուլտրամանուշակագույն ճառագայթի նկատմամբ ոչ զգայուն.

– պաշտպանված հետնապատկեր, որը չպետք է ենթարկվի կեղծումների սկանավորման, տպագրման կամ կրկնօրինակման միջոցով, պաշտպանիչ տպագրական բազմագույն ներկերով ծիածանային տպագրության կիրառմամբ, ինչպես նաեւ գիլիոշիրային տարրերի պոզիտիվ եւ նեգատիվ տպագրությամբ: Պատկերը չպետք է պարունակի հիմնական

գույները (կապույտ, կարմիր, դեղին, սև), այն պետք է ունենա բարդ նախագիծ՝ առնվազն երկու հատուկ գույներով եւ պետք է միկրոտեքստ պարունակի.

– օպտիկական փոփոխական տարրեր, որոնք պատշաճ պաշտպանություն են ապահովում լուսանկարի կրկնօրինակումից եւ կեղծումից.

– լազերային փորագրում.

– պաշտպանված հետնապատկերը եւ լուսանկարը, լուսանկարը փակցնելու հատվածում, պետք է առնվազն համընկնեն իրենց սահմաններում (թուլացող պատկեր).

բ) ավելին, վարորդական վկայականների համար օգտագործվող նյութը պետք է պաշտպանված լինի կեղծումներից՝ կիրառելով հետեւյալ երեք տեխնիկաները (լրացուցիչ պաշտպանիչ հատկանիշներ)՝

– գույնը փոխող ներկեր*.

– ջերմաքրոմային ներկ*.

– սովորական հոլոգրամ*.

– լազերային տպագրությամբ տպված փոփոխական նկարներ*.

– ուլտրամանուշակագույն ֆլուորեսցենտ ներկ, փոփոխական եւ թափանցիկ.

– իրիս տպագրություն.

– թվային ջրանիշ՝ հետնապատկերին.

– ինֆրակարմիր կամ ֆոսֆորեսցենտ գունանյութեր.

– շոշափելի նիշեր, խորհրդանիշներ կամ պատկերներ*.

գ) անդամ պետությունները կարող են ազատ ներմուծել լրացուցիչ պաշտպանիչ հատկանիշներ: Որպես հիմք՝ անհրաժեշտ է նախապատվությունը տալ աստղիկով նշված տեխնիկաներին, քանի որ դրանք հնարավորություն են տալիս իրավապահ մարմիններին ստուգելու քարտի վավերականությունն առանց ցանկացած հատուկ միջոց կիրառելու:

3. Վկայականը երկկողմանի է:

1-ին էջը պարունակում է՝

ա) «Վարորդական վկայական» բառերը՝ տպագրված մեծ տառերով՝ վկայականը տրամադրող անդամ պետության լեզվով կամ լեզուներով.

բ) վկայականը տրամադրող անդամ պետության անվանումը (պարտադիր չէ).

գ) վկայականը տրամադրող անդամ պետության տարբերանշանը, որը տպագրված է նեգատիվի վրա կապույտ ուղղանկյան տեսքով եւ շրջապատված է տասներկու դեղին աստղերով. տարբերանշաններն են՝

B Բելգիա

CZ Չեխիայի Հանրապետություն

DK : Դանիա

D Գերմանիա

EST Էստոնիա

GR Հունաստան

E Իսպանիա

F Ֆրանսիա

IRL Իռլանդիա

I Իտալիա

CY	Կիպրոս
LV	Լատվիա
LT	Լիտվա
L	Լյուքսեմբուրգ
H	Հունգարիա
M	Մալթա
NL	Նիդերլանդներ
A	Ավստրիա
PL	Լեհաստան
P	Պորտուգալիա
SLO	Սլովենիա
SK	Սլովակիա

FIN	Ֆինլանդիա
S	Շվեդիա
UK	Միացյալ Թագավորություն

դ) տրամադրված վկայականում պետք է ընդգրկվեն հետևյալ տեղեկությունները՝

1. վկայականի տիրոջ ազգանունը.
2. վկայականի տիրոջ մյուս անունը (անունները).
3. ծննդյան ամսաթիվը եւ վայրը.
- 4.

ա) վկայականի տրամադրման ամսաթիվը.

բ) վկայականի գործողության ժամկետը լրանալու ամսաթիվը կամ գծիկ, եթե վկայականը տրամադրված է անժամկետ՝ 7(2)(գ) հոդվածի դրույթի համաձայն.

գ) վկայականը տրամադրող մարմնի անվանումը (կարող է տպվել 2-րդ էջի վրա).

դ) 5-րդ վերնագրում ներկայացված համարից տարբերվող այլ համար՝ վարչական նպատակներով (պարտադիր չէ).

5. վկայականի համարը.

6. վկայականի տիրոջ լուսանկարը.

7. վկայականի տիրոջ ստորագրությունը.

8. մշտական բնակության վայրը կամ փոստային հասցեն (պարտադիր չէ).

9. տրանսպորտային միջոցի (միջոցների) այն կարգը, որը վարելու համար տրամադրվել է վարորդական վկայական (ազգային կարգերը պետք է տպվեն ներդաշնակեցված կարգերից տարբեր տառատեսակով).

ե) «Եվրոպական համայնքների օրինակելի վկայական» բառերը՝ վկայականը տրամադրող անդամ պետության լեզվով (լեզուներով) եւ «վարորդական վկայական» բառերը՝ Համայնքի այլ լեզուներով, որոնք տպագրված վարդագույն ֆոնի վրա կազմում են վկայականի հենքը.

Permiso de Conducción

Řidičský průkaz

Kørekort

Führerschein

Juhiluba

Άδεια Οδήγησης

Driving Licence

Permis de conduire

Ceadúnas Tiomána

Patente di guida

Vadītāja apliecība

Vairuotojo pažymėjimas

Vezetői engedély

Liċenzja tas-Sewqan

Rijbewijs

Prawo Jazdy

Carta de Condução

Vodičský preukaz

Vozniško dovoljenje

Ajokortti

Körkort;

զ) գույները.

– կապույտ՝ պանտոն մետալիկ կապույտ.

– դեղին՝ պանտոն դեղին:

2-րդ էջում գետեղվում են՝

ա)

9. տրանսպորտային միջոցի (միջոցների) այն կարգը, որը վարելու համար տրամադրվել է վարորդական վկայական (ազգային կարգերը պետք է տպվեն ներդաշնակեցված կարգերից տարբեր տառատեսակով).

10. յուրաքանչյուր կարգի համար առաջին անգամ տրամադրված վարորդական վկայականի ամսաթիվը (այս ամսաթիվը վկայականի հետագա փոխարինման կամ փոխանակման դեպքում պետք է նշվի նոր վկայականի վրա).

11. յուրաքանչյուր կարգի համար տրամադրված վկայականի ամսաթիվը.

12. ծածկագրի տեսքով լրացուցիչ տեղեկություններ/սահմանափակում (սահմանափակումներ)՝ տվյալ կարգի (ենթակարգի) մասին:

Ծածկագրերը պետք է լինեն հետևյալը՝

—

01–99 Համայնքի ներդաշնակեցված ծածկագրեր
ծածկագրեր.

—

ՎԱՐՈՐԴ (Բժշկական պատճառներ)

01. Տեսողության շտկում եւ (կամ) պահպանություն

01.01 Ակնոցներ

01.02 Կոնտակտային ոսպնյակ (ոսպնյակներ)

01.03 Պաշտպանիչ ապակի

01.04 Անթափանցիկ ոսպնապակի

01.05 Աչքակապ

01.06 Ակնոցներ կամ կոնտակտային ոսպնյակներ

02. Լսողական ապարատներ (կապի միջոցներ)

02.01 Մեկ ականջի համար նախատեսված լսողական ապարատ

02.02 Երկու ականջի համար նախատեսված լսողական ապարատ

03. Վերջույթների պրոթեզ (օրթեզ)

03.01 Վերին վերջույթի պրոթեզ (օրթեզ)

03.02 Ստորին վերջույթի պրոթեզ (օրթեզ)

05. Սահմանափակ օգտագործում (ենթաձածկագրի օգտագործումը պարտադիր է, տրանսպորտային միջոց վարելը ենթակա է սահմանափակման՝ ելնելով բժշկական պատճառներից)

05.01 Նախատեսված է օրվա լուսավոր ժամերին վարելու համար (օրինակ՝ մեկ ժամ արեւածագից հետո եւ մեկ ժամ մինչեւ արեւամուտը)։

05.02 Նախատեսված է վկայականի տիրոջ բնակության վայրից ...կմ շառավղով տարածքում կամ միայն քաղաքի (շրջանի) ներսում վարելու համար...

05.03 Նախատեսված է առանց ուղեորների վարելու համար

05.03 Նախատեսված է ...կմ/ժ-ից ոչ ավելի արագությամբ վարելու համար

05.05 Տրանսպորտային միջոցը վարելը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ վարորդին ուղեկցում է վարորդական վկայականի տերը

05.06 Առանց կցորդի

05.07 Վարելն արգելվում է ավտոմայրուղիների վրա

05.08 Արգելվում է ակոհոլի օգտագործումը

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ

10. Ձեւափոխված փոխանցման տուփ

10.01 Մեխանիկական փոխանցման տուփ

10.02 Ավտոմատ փոխանցման տուփ

- 10.03 Էլեկտրոնային տարբերակով գործող փոխանցման տուփ
- 10.04 Փոխանցումների փոփոխումը կարգավորող հարմարեցված լծակ
- 10.05 Առանց երկրորդային փոխանցման տուփի
- 15. Ձեւափոխված կցորդում
- 15.01 Կցորդման համար հարմարեցված ոտնակ
- 15.02 Մեխանիկական կցորդում
- 15.03 Ավտոմատ կցորդում
- 15.04 Ծավվող (կախված) կցորդման ոտնակի առջեւ դրված բաժանիչ
- 20. Արգելակման ձեւափոխված համակարգեր
- 20.01 Հարմարեցված արգելակման ոտնակ
- 20.02 Լայնացված արգելակման ոտնակ
- 20.03 Ձախ ոտքով օգտագործելու համար հարմարեցված արգելակման ոտնակ
- 20.04 Ունաթաթով աշխատող արգելակման ոտնակ
- 20.05 Թեքվող արգելակման ոտնակ
- 20.06 Ձեռքի (հարմարեցված) կառավարմամբ հիմնական արգելակ
- 20.07 Հզորացված հիմնական արգելակի առավելագույն օգտագործում
- 20.08 Հիմնական արգելակային համակարգի մեջ ինտեգրված վթարային արգելակային համակարգի առավելագույն օգտագործում
- 20.09 Հարմարեցված կայանման արգելակ
- 20.10 Էլեկտրոնային տարբերակով կառավարվող կայանման արգելակ
- 20.11 (Հարմարեցված) ոտքով կառավարվող կայանման արգելակ
- 20.12 Ծավվող (կախված) արգելակային ոտնակի առջեւ դրված բաժանիչ
- 20.13 Ծնկով կառավարվող արգելակ
- 20.14 Էլեկտրոնային տարբերակով կառավարվող հիմնական արգելակ

- 25. Արագարարի ձեւափոխված համակարգեր
 - 25.01 Արագարարի հարմարեցված ոտնակ
 - 25.02 Ունաթաթով աշխատող արագարարի ոտնակ
 - 25.03 Թեքվող արագարարի ոտնակ
 - 25.04 Մեխանիկական արագարար
 - 25.05 Ծնկով կառավարվող արագարար
 - 25.06 Օժանդակ արագարար (էլեկտրական, օդամղիչ եւ այլն)
 - 25.07 Արգելակման ոտնակի ձախ կողմում տեղադրված արագարարի ոտնակ
 - 25.08 Ձախ կողմում տեղադրված արագարարի ոտնակ
 - 25.09 Ծալվող (կախված) արագարարի ոտնակի առջեւ դրված բաժանիչ
- 30. Արգելակման եւ արագարարի համակցված ձեւափոխված համակարգեր
 - 30.01 Զուգահեռ ոտնակներ
 - 30.02 Միեւնույն մակարդակի (կամ գրեթե նույն մակարդակի) վրա տեղադրված ոտնակներ
 - 30.03 Արագարար եւ արգելակ՝ սահիկով
 - 30.04 Արագարար եւ արգելակ՝ սահիկով եւ օրթեզով
 - 30.05 Ծալվող (կախված) արագարարի եւ արգելակման ոտնակներ
 - 30.06 Բարձրացված հատակ
 - 30.07 Արգելակման ոտնակի մոտ դրված բաժանիչ
 - 30.08 Արգելակման ոտնակի մոտ պրոթեզի համար նախատեսված բաժանիչ
 - 30.09 Արագարարի եւ արգելակման ոտնակների առջեւ դրված բաժանիչ
 - 30.10 Կրնկի (ոտքի) հենարան
 - 30.11 Էլեկտրոնային տարբերակով կառավարվող արագարար եւ արգելակ
- 35. Կառավարման ձեւափոխված համակարգեր

(Լույսի անջատիչներ, ապակեմաքրիչ/ապակին վաացող սարք, ազդանշան, ուղղության ցուցիչներ եւ այլն)

35.01 Կառավարման սարքեր, որոնք գործում են առանց բացասական ազդեցություն թողնելու ղեկային կառավարման եւ վարելու վրա

35.02 Կառավարման սարքեր, որոնք գործում են առանց ղեկային անիվը եւ լրացուցիչ պարագաները (կոճակ, երկճյուղ բռնակ եւ այլն) բաց թողնելու

35.03 Կառավարման սարքեր, որոնք գործում են ձախ ձեռքով՝ առանց ղեկային անիվը եւ լրացուցիչ պարագաները (կոճակ, երկճյուղ բռնակ եւ այլն) բաց թողնելու

35.04 Կառավարման սարքեր, որոնք գործում են աջ ձեռքով՝ առանց ղեկային անիվը եւ լրացուցիչ պարագաները (կոճակ, երկճյուղ բռնակ եւ այլն) բաց թողնելու

35.05 Կառավարման սարքեր, որոնք գործում են առանց ղեկային անիվը եւ լրացուցիչ պարագաները (բռնակ, երկճյուղ բռնակ եւ այլն) բաց թողնելու եւ արագացման ու արգելակման համակցված մեխանիզմներ

40. Ղեկային ձեւափոխված համակարգ

40.01 Սովորական ղեկային կառավարում

40.02 Ուժեղացմամբ ղեկային կառավարում

40.03 Ղեկային կառավարում՝ օժանդակ համակարգով

40.04 Լայնացված ղեկասյունակ

40.05 Հարմարեցված ղեկանիվ (ավելի լայն եւ (կամ) հաստ ղեկանիվի հատված, (կամ) նվազեցված տրամագծով ղեկանիվ եւ այլն)

40.06 Թեքվող ղեկանիվ

40.07 Ուղղահայաց ղեկանիվ

40.08 Հորիզոնական ղեկանիվ

40.09 Տրանսպորտային միջոցի ոտքով կառավարում

40.10 Այլընտրանքային, հարմարեցված ղեկ (կառավարման լծակ եւ այլն)

40.11 Ղեկանիվի վրա տեղադրված կոճակ

40.11 Ղեկանիվի վրա տեղադրված ձեռքի օրթեզ

40.13 Տենդեզ՝ օրթեզով

42. Հետին տեսանելիության ձեւափոխված հայելի (հայելիներ)

42.01 Արտաքին աջակողմյան հետին տեսանելիության հայելի

42.02 Տրանսպորտային միջոցի դռան վրա տեղադրված արտաքին հետին տեսանելիության հայելի

42.03 Տրանսպորտային միջոցի սրահում տեղադրված լրացուցիչ հետին տեսանելիության հայելի՝ երթելակայունն ավելի լավ տեսնելու համար

42.04 Տրանսպորտային միջոցի սրահում տեղադրված համայնապատկերային, հետին տեսանելիության հայելի

42.05 Վարորդին չերեւացող հատվածները ցույց տվող հետին տեսանելիության հայելի

42.06 Էլեկտրոնային տարբերակով կառավարվող կողային հետին տեսանելիության հայելի (հայելիներ)

43. Վարորդի ձեւափոխված նստատեղ

43.01 Ղեկանիվից եւ ոտնակից լավ տեսանելիություն ապահովող բարձրության վրա եւ նորմալ հեռավորության վրա գտնվող վարորդի նստատեղ

43.02 Մարմնի կառուցվածքին հարմարեցված վարորդի նստատեղ

43.03 Վարորդի նստատեղ կողային նեցուկով՝ նստելու կայունությունն ապահովելու համար

43.04 Վարորդի նստատեղ՝ արմնկակալով

43.05 Սահող վարորդական նստատեղի լայնացում

43.06 Ամրագոտու հարմարեցում

43.07 Երեքից ավելի ամրացման կետեր ունեցող ամրագոտի

44. Ձեւափոխումներ մոտոցիկլետներում (ենթաձեւակազմի օգտագործումը պարտադիր է)

44.01 Մեկ գործողությամբ կառավարվող արգելակ

44.02 (Հարմարեցված) ձեռքով կառավարվող արգելակ (առջեւի անիվ)

44.03 (Հարմարեցված) ոտքով կառավարվող արգելակ (հետեւի անիվ)

44.04 (Հարմարեցված) արագարարի բռնակ

44.05 (Հարմարեցված) մեխանիկական փոխանցման տուփ եւ մեխանիկական կցորդում

44.06 (Հարմարեցված) հետին տեսանելիության հայելի (հայելիներ)

44.07 Հրամաններ (հարմարեցված) (ուղղության ցուցիչներ, արգելակման լույսեր,)

44.08 Նստատեղի բարձրությունը, որը հնարավորություն է տալիս վարորդին նստած դիրքում երկու ոտքերը միաժամանակ դնել մեքենայի հատակին

45. Միայն կողային կցորդով մոտոցիկլետ

50. Նախատեսված է հատուկ տրանսպորտային միջոցի (ամրաշրջանակի) համարի համար (տրանսպորտային միջոցի նույնականացման համար, ՏՄՆՀ)

51. Նախատեսված է հատուկ տրանսպորտային միջոցի (գրանցման) համարանիշի համար (տրանսպորտային միջոցի գրանցման համար, ՏՄԳՀ)

ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

70. Թիվ վարորդական վկայականի փոխանակում՝ տրված կողմից (երրորդ երկրի դեպքում ԵՄ (ՄԱԿ) տարբերանշանը, օրինակ՝ 70.0123456789.NL)

71. Թիվ վարորդական վկայականի կրկնօրինակ (երրորդ երկրի դեպքում ԵՄ (ՄԱԿ) տարբերանշանը, օրինակ՝ 71.987654321.HR)

72. Նախատեսված է «A» կարգի տրանսպորտային այն միջոցների համար, որոնց շարժիչի առավելագույն աշխատանքային ծավալը 125 խորանարդ սանտիմետր է եւ առավելագույն հզորությունը՝ 11 կՎտ («A1»)

73. Նախատեսված է «B» կարգի եռանիվ կամ քառանիվ մոտոսայլակ տեսակի տրանսպորտային միջոցների համար («B1»)

74. Նախատեսված է «C» կարգի տրանսպորտային այն միջոցների համար, որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը չի գերազանցում 7 500 կիլոգրամը («C1»)

75. Նախատեսված է «D» կարգի տրանսպորտային այն միջոցների համար, որոնց նստատեղերի թիվը 16-ից ավելի չէ՝ չհաշված վարորդի նստատեղը («D1»)

76. Նախատեսված է «C» կարգի տրանսպորտային այն միջոցների համար, որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը չի գերազանցում 7500 կգ-ը («C1»), որոնց կցվում է 750 կգ-ը գերազանցող թույլատրելի առավելագույն զանգված ունեցող կցորդ՝ պայմանով, որ տրանսպորտային միջոցի քաշն իր կցորդով չի գերազանցի 12 000 կգ-ը, եւ որ կցորդի թույլատրելի առավելագույն զանգվածը չի գերազանցի քարշակի բեռնված զանգվածը («C1E»)

77. Նախատեսված է «D» կարգի տրանսպորտային այն միջոցների համար, որոնց նստատեղերի թիվը 16-ից պակաս է՝ չհաշված վարորդի նստատեղը («D1»), որոնց կցվում է 750 կգ-ն գերազանցող թույլատրելի առավելագույն զանգված ունեցող կցորդ՝ պայմանով, որ. ա) տրանսպորտային միջոցի ընդհանուր զանգվածն իր կցորդով չի գերազանցի 12 000 կգ-ն, եւ որ կցորդի թույլատրելի առավելագույն զանգվածը չի գերազանցի քարշակի բեռնված զանգվածը եւ բ) կցորդը ուղեւորներ փոխադրելու համար չի օգտագործվի («D1E»)

78. Նախատեսված է ավտոմատ փոխանցման տուփով տրանսպորտային միջոցների համար

79. (...) Նախատեսվում է այն տրանսպորտային միջոցների համար, որոնք համապատասխանում են փակագծերում նշված տեխնիկական բնութագրերին՝ 91/439/ ԵՏՀ հրահանգի 10(1) հոդվածի կիրարկման շրջանակներում

90.01 դեպի ձախ

90.02 դեպի աջ

90.03 ձախ

90.04 աջ

90.05 ձեռք

90.06 նոք

90.07 օգտագործելի

95. ՄՈՎ ունեցող այն վարորդը, ով բավարարում է 2003/59/ԵՀ հրահանգով նախատեսված մասնագիտական կարողությունների պարտադիր պահանջը մինչև ...[օր.՝ 95.01.01.2012]

96. Այն վարորդը, ով անցել է վերապատրաստում կամ գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման քննություն՝ V հավելվածի դրույթներին համապատասխան:

—

100 եւ: ազգային ծածկագրերը վավեր են միայն այն անդամ պետության դրանից տարածքում վարելու համար, որտեղ տրամադրվել է վկայականը:

բարձր

ծածկագրեր

– Եթե ծածկագիրը վերաբերում է բոլոր այն կարգերին, որոնց համար տրամադրվել է վկայականը, ապա այն կարող է տպվել 9–րդ, 10–րդ եւ 11–րդ վերնագրերի ներքո:

—

13. Սույն հավելվածի 4(ա) պարբերությունը կիրարկելիս անհրաժեշտ է բացատ թողնել, որպեսզի ընդունող անդամ պետությունը վկայականի հետ կապված հարցերը կարգավորելու նպատակով կարողանա կարելու տեղեկություններ մուտքագրել:

14. անհրաժեշտ է բացատ թողնել, որպեսզի վկայականը տվող անդամ պետությունը վկայականի հետ կապված հարցերի կարգավորման նպատակով կարողանա կարելու տեղեկություններ մուտքագրել կամ ճանապարհային անվտանգության հետ կապված տեղեկություններ մուտքագրել (պարտադիր չէ): Եթե տեղեկությունները վերաբերում են սույն հավելվածով սահմանված բաժիններից որեւէ մեկին, ապա դրանց պետք է նախորդի տվյալ վերնագրի համարը:

Վկայականի տիրոջ հատուկ գրավոր համաձայնությամբ վարորդական վկայականի հետ կապված հարցերի կարգավորմանը կամ ճանապարհային երթեւեկության անվտանգությանը չառնչվող տեղեկությունները կարող են նույնպես ավելացվել թողնված

բացատրում. նման ավելացումները չպետք է որբեւէ կերպ փոխեն օրինակելի վկայականի՝ որպես վարորդական վկայականի օգտագործումը.

բ) համարակալված այն կետերի բացատրությունը, որոնք զետեղված են վկայականի 1-ին եւ 2-րդ էջերի վրա (առնվազն 1, 2, 3, 4 (ա), 4 (բ), 4 (գ), 5, 10, 11 եւ 12-րդ կետերը):

Եթե անդամ պետությունը ցանկանա մուտքագրումները կատարել հետեւյալ լեզուներից տարբեր որբեւէ ազգային լեզվով՝ չեխերեն, դանիերեն, հոլանդարեն, անգլերեն, էստոներեն, ֆիններեն, ֆրանսերեն, գերմաներեն, հունարեն, հունգարերեն, իտալերեն, լատիշերեն, լիտվերեն, մալթերեն, լեհերեն, պորտուգալերեն, սլովակերեն, սլովեներեն, իսպաներեն կամ շվեդերեն, ապա այն կկազմի վկայականի երկլեզու տարբերակը՝ օգտագործելով նշված լեզուներից որբեւէ մեկը՝ չհակասելով սույն հավելվածի մյուս դրույթներին:

գ) բացատ պետք է թողնվի Համայնքի վարորդական օրինակելի վկայականի վրա՝ թույլ տալու համար միկրոչիպի կամ համակարգչային նմանատիպ սարքի տեղադրումը:

4. Հատուկ դրույթներ


ա) Եթե սույն հավելվածի համաձայն՝ անդամ պետության կողմից տրամադրված վարորդական վկայականի տիրոջ հիմնական բնակության վայրը մեկ այլ անդամ պետությունում է, ապա տվյալ անդամ պետությունը կարող է վկայականում զետեղել այնպիսի տեղեկություններ, որոնք կարելու են՝ դրա հետ կապված հարցերը կարգավորելու համար՝ պայմանով, որ այն իր կողմից տրամադրվող վկայականներում նույնպես զետեղում է նմանատիպ տեղեկություններ, եւ որ դեռեւս մնում է բավարար բացատ՝ այս նպատակի համար.

բ) անդամ պետությունները, Հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո, կարող են ավելացնել գույներ կամ մակնշումներ, ինչպես, օրինակ՝ շտրիխ ծածկագրեր եւ ազգային խորհրդանիշներ՝ չհակասելով սույն հավելվածի մյուս դրույթներին.

Վարորդական վկայականների փոխադարձ ճանաչման համատեքստում շտրիխ ծածկագիրը չպետք է պարունակի վարորդական վկայականի վրա արդեն զետեղված կամ վկայականի տրամադրման գործընթացի համար կարելու տեղեկություններից բացի որբեւէ այլ տեղեկություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՎԿԱՅԱԿԱՆ

Էջ 1 ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ [ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ]
















Էջ 2. 1. Վկայականի տիրոջ ազգանունը 2. Անունը 3. Ծննդյան ամսաթիվը եւ վայրը 4ա. Վարորդական վկայական տրամադրելու ամսաթիվը 4բ. Վարորդական վկայականի գործողության ժամկետի պաշտոնական ավարտը 4գ. Տրամադրվել է 5. Վկայականի սերիա 8. Բնակության վայրը 9. Կարգը 10. Ըստ կարգի՝ վկայականի տրամադրման ամսաթիվը 11. Ըստ կարգի՝ վկայականի գործողության ժամկետի ավարտը 12. Սահմանափակումները

13.


(14)

1. Nom 2. Prénom 3. Date et lieu de naissance 4a. Date de nevrance du permis de conduire
4b. Date d'obtention administrative 4c. Centre par 5. Numéro de permis
8. Domicile 9. Catégorie
10. Date de delivrance par catégorie
11. Date d'obtention par catégorie
12. Restrictions

	9.	10.	11.	12.
A1 				
A 				
B1 				
B 				
C1 				
C 				
D1 				
D 				
BE 				
C1E 				
CE 				
D1F 				
DE 				

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ

ԲԵԼԳԻԱՅԻ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ (ի գիտություն)


 **RIJBEWIJS** **KONINKRIJK BELGIE**

1. Steven
2. Anne-Marie M.E.
3. 01.04.73 D-53170 Bonn
4a. 01.07.96 4c. B-9000 Gent
4b. **30.06.06**
5. DA 003 360
7.

6. FOTO

AM Steuer

9. **A** **B**

 **PERMIS DE CONDUIRE ROYAUME DE BELGIQUE**

1. Quentin
2. Maria N.E.
3. 01.04 73 B-7000 Mons
4a. 01.07.96 4c. B-1180 Uccle
4b. **30.06.06**
5. DA 003 361
7.

6 PHOTO

M Quentin

9. **A** **B**

ՀԱՎԵԼՎԱԾ II

I. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ ՎԱՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որպեսզի վարորդի թեկնածուները տիրապետեն մեխանիկական տրանսպորտային միջոց վարելու համար անհրաժեշտ գիտելիքներին ու հմտություններին եւ ցուցաբերեն համապատասխան վարքագիծ: Այս նպատակով անցկացվող քննությունները կազմված են՝

- տեսական քննությունից, այնուհետեւ
- գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման քննությունից:

Նշված քննությունների անցկացման պայմանները նշված են ստորեւ:

Ա. ՏԵՍԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարցաթերթիկ

Ընտրված հարցաթերթիկը պետք է այնպես կազմված լինի, որ պարզ լինի, որ վարորդի թեկնածուն ունի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերում թվարկված թեմաների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ:

Մեկ կարգի վարորդական վկայական ստանալու համար դիմած ցանկացած թեկնածու, ով հանձնել է տեսական քննություն՝ այլ կարգի վարորդական վկայական ստանալու համար, կարող է ազատվել 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերի ընդհանուր դրույթներից:

2. Բոլոր կարգերի տրանսպորտային միջոցներ վարելու համար տեսական քննության բովանդակությունը

2.1. Ստորեւ նշված կետերից յուրաքանչյուրի վերաբերյալ պետք է տրվեն հարցեր. հարցերի բովանդակությունը եւ ձեւը թողնվում է յուրաքանչյուր անդամ պետության հայեցողությանը՝

2.1.1. Ճանապարհային երթելեկության կանոններ՝

- մասնավորապես կապված ճանապարհային նշանների, գծանշումների եւ ազդանշանների, անցման առաջնահերթության իրավունքների ու արագությունների սահմանաչափերի հետ.

2.1.2. Վարորդը՝

– զգոնության եւ ճանապարհային երթելեկության այլ մասնակիցների նկատմամբ վերաբերմունքի կարելիությունը.

– ակոհոլի, թմրադեղերի եւ դեղերի, հոգեկան վիճակի, հոգնածության ազդեցությամբ վարորդի ընկալումը, կողմնորոշվելու, որոշում կայացնելու ունակությունը, հատկապես արձագանքման ժամանակը, ինչպես նաեւ վարելու ժամանակ վարքագծի փոփոխությունները.

2.1.3. Ճանապարհը՝

– տրանսպորտային միջոցների միջուկ անվտանգ հեռավորության պահպանմանը, արգելակման տարածությանը եւ եղանակային ու ճանապարհային տարբեր պայմանների ժամանակ ընթացքի կայունությանը վերաբերող ամենակարեւոր սկզբունքները.

– ճանապարհային տարբեր պայմանների հետ կապված՝ վարելու ռիսկի գործոնները, հատկապես, ինչպես են դրանք փոփոխվում՝ պայմանավորված եղանակով եւ ցերեկվա կամ գիշերվա ժամով.

– տարբեր տեսակների ճանապարհների առանձնահատկությունները եւ դրանց հետ կապված պարտադիր պահանջները.

2.1.4. Ճանապարհային երթելեկության այլ մասնակիցներ՝

– ճանապարհային երթելեկության այլ մասնակիցների եւ ճանապարհային երթելեկության առավել խոցելի մասնակիցների խմբերի, ինչպիսիք երեխաները, հետիոտները, հեծանվորդներն են եւ սահմանափակ շարժունակությամբ մարդկանց փորձի պակասի հետ կապված ռիսկի կոնկրետ գործոններ.

– տարբեր տեսակների տրանսպորտային միջոցների շարժման ու վարման եւ դրանց վարորդների տեսադաշտերի հետ կապված ռիսկերը.

2.1.5. Ընդհանուր կանոններ ու կարգավորումներ եւ այլ հարցեր՝

– տրանսպորտային միջոցների օգտագործման համար անհրաժեշտ վարչական փաստաթղթերին վերաբերող կանոններ.

– ճանապարհատրանսպորտային պատահարի ժամանակ վարորդի վարքագիծը սահմանող ընդհանուր կանոններ (նախազգուշացման սարքերի տեղադրում ու տազնապի բարձրացում) եւ, հարկ եղած դեպքում, այն միջոցները, որոնք նա կարող է ձեռնարկել՝

ճանապարհատրանսպորտային պատահարից տուժածներին օգնություն ցուցաբերելու համար.

– տրանսպորտային միջոցների, փոխադրվող բեռի եւ անձանց հետ կապված անվտանգության գործոնները.

2.1.6. Տրանսպորտային միջոցից իջնելիս ձեռնարկվելիք նախազգուշական միջոցները.

2.1.7. ճանապարհի անվտանգության հետ կապված մեխանիկական հայեցակետերը. թեկնածուները պետք է կարողանան հայտնաբերել, մասնավորապես, ղեկային, կախոցային եւ արգելակման համակարգերում, անվադողերում, լույսերում ու ուղղության ցուցիչներում, անդրադարձիչներում, հետին տեսանելիության հայելիներում, հողմապակիներում եւ ապակեմաքրիչներում, արտանետման համակարգերում, ամրագոտիներում ու ձայնային ազդանշանման սարքում տեղ գտած առավել ընդհանուր սխալները.

2.1.8. Տրանսպորտային միջոցների անվտանգության սարքավորումները եւ, մասնավորապես, ամրագոտիների, գլխակալների ու երեխայի անվտանգության սարքավորումները.

2.1.9. Շրջակա միջավայրի հետ կապված տրանսպորտային միջոցների օգտագործմանը վերաբերող կանոններ (ձայնային ազդանշանման սարքերի պատշաճ օգտագործումը, վառելիքի սպառման չափավորումը, աղտոտիչների արտանետումների սահմանափակումը եւ այլն):

3. «A1», «A2» եւ «A» կարգերին վերաբերող հատուկ դրույթներ

3.1. Հետեւյալի մասին ընդհանուր գիտելիքների պարտադիր ստուգում՝

3.1.1. Պաշտպանիչ արտահագուստի, ինչպես, օրինակ՝ ձեռնոցների, կոշիկների, հագուստի եւ պաշտպանիչ սաղավարտի օգտագործումը

3.1.2. Մոտոցիկլետի վարորդների տեսանելիությունը ճանապարհային երթեւեկության այլ մասնակիցների համար.

3.1.3. Ճանապարհային տարբեր պայմանների հետ կապված՝ արդեն նշված ռիսկի գործոնները՝ հատուկ ուշադրություն դարձնելով այնպիսի մասերի վրա, ինչպիսիք կոյուղու կափարիչները, ճանապարհային գծանշումներո են, ինչպես, օրինակ՝ գծերը եւ ուղղություն ցույց տվող սլաքները, տրամվայի գծերը.

3.1.4. Ճանապարհի անվտանգության հետ կապված՝ արդեն նշված մեխանիկական հայեցակետերը՝ լրացուցիչ ուշադրություն դարձնելով վթարային կանգառի ճանաչման նշաններին, վառելիքի մակարդակին եւ շղթային:

4. «C», «CE», «C1», «C1E», «D», «DE», «D1» եւ «D1E» կարգերին վերաբերող հատուկ դրույթներ

4.1. Հետեւյալի մասին ընդհանուր գիտելիքների պարտադիր ստուգում՝

4.1.1. «Ավտոճանապարհային տրանսպորտին վերաբերող որոշ սոցիալական օրենսդրության ներդաշնակեցման մասին» Խորհրդի 1985 թվականի դեկտեմբերի 20–ի թիվ 3820/85 կանոնակարգով (ԵՏՀ) (8) սահմանված կանոններ՝ տրանսպորտային միջոցը վարելու համար թույլատրված ժամերի եւ հանգստի ժամանակների, ինչպես նաեւ «Ավտոճանապարհային տրանսպորտային միջոցներում ձայնագրող սարքերի օգտագործման մասին» Խորհրդի 1985 թվականի դեկտեմբերի 20–ի թիվ 3821/85 (ԵՏՀ) կանոնակարգով սահմանված՝ ձայնագրող սարքերի օգտագործման կանոնների մասին (9)

4.1.2. Կանոններ, որոնք վերաբերում են համապատասխան տրանսպորտային միջոցի տեսակին. բեռներ կամ ուղեւորներ.

4.1.3. Բեռների եւ ուղեւորների ազգային ու միջազգային փոխադրման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցները եւ ճամփորդական փաստաթղթերը.

4.1.4. Ինչպես վարվել ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում. ճանապարհատրանսպորտային պատահարների կամ նմանատիպ միջադեպերից հետո ձեռնարկվելիք միջոցների, այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում իրականացվելիք գործողությունների դեպքում, ինչպես, օրինակ՝ ուղեւորների տարհանման եւ առաջին օգնության մասին հիմնական գիտելիքները.

4.1.5. Անիվները հանելու եւ փոխելու ընթացքում ձեռնարկվելիք նախազգուշական միջոցները.

4.1.6. Տրանսպորտային միջոցների քաշերի եւ եզրաչափերի կանոններ, արագությունը սահմանափակող սարքերի վերաբերյալ կանոնները.

4.1.7. Իրենց տրանսպորտային միջոցների առանձնահատկությունների հետեւանքով տեսադաշտի սահմանափակումը.

4.1.8. Ճանապարհային քարտեզի ընթերցումը, երթուղու պլանավորումը՝ ներառյալ էլեկտրոնային նավիգացիոն համակարգերի օգտագործումը (պարտադիր չէ)։

4.1.9. Տրանսպորտային միջոցի բեռնման հետ կապված անվտանգության գործոնները. բեռի վերահսկումը (բեռնադարսում եւ ամրացում), տարբեր տեսակների բեռների հետ կապված դժվարությունները (օրինակ՝ հեղուկներ, դարսված բեռներ), բեռների բեռնումն ու բեռնաթափումը եւ բեռնաթափող սարքավորումների օգտագործումը (միայն «C», «CE», «C1», «C1E» կարգեր)։

4.1.10. Ուղեւորների փոխադրման, նրանց հարմարավետության եւ անվտանգության, երեխաների փոխադրման հետ կապված վարորդի պատասխանատվությունը, նախքան տրանսպորտային միջոցը վարելը դրա՝ անհրաժեշտ տեխնիկական զննությունը. բոլոր տեսակի ավտոբուսների հետ կապված խնդիրները պետք է լինեն տեսական քննության մաս (հանրային ավտոբուսներ եւ միջքաղաքային ավտոբուսներ, հատուկ եզրաչափեր ունեցող ավտոբուսներ) (միայն «D», «DE», «D1», «D1E» կարգեր)։

4.2. «C», «CE», «D» եւ «DE» կարգերին վերաբերող հետեւյալ լրացուցիչ դրույթների մասին ընդհանուր գիտելիքների պարտադիր ստուգում՝

4.2.1. Ներքին այրման շարժիչներ, հեղուկներ (օրինակ՝ շարժիչի յուղ, սառեցնող հեղուկներ, ողողահեղուկ), վառելիքի համակարգի, էլեկտրական համակարգի, բռնկման համակարգի, փոխանցման համակարգի (կցորդում, փոխանցման տուփ եւ այլն) կառուցվածքի եւ գործունեության սկզբունքները։

4.2.2. Տրանսպորտային միջոցի յուղումն ու հակասառեցումը։

4.2.3. Անվադողերի կառուցվածքի տեղադրում, ճիշտ օգտագործման եւ խնամքի սկզբունքները։

4.2.4. Արգելակային համակարգի ամրանների, արագության կարգավորիչների տեսակների, շահագործման, հիմնական մասերի, կապակցման, օգտագործման եւ ամենօրյա խնամքի սկզբունքներն ու արգելակների հակաբլոկավորման համակարգի օգտագործումը։

4.2.5. Միացման համակարգերի տեսակների, շահագործման, հիմնական մասերի, կապակցման, օգտագործման եւ ամենօրյա խնամքի սկզբունքները (միայն «CE», «DE» կարգեր)։

4.2.6. Խափանման պատճառները գտնելու մեթոդները։

4.2.7. Տրանսպորտային միջոցների անսարքությունների կանխարգելման նպատակով տեխնասարկումը եւ անհրաժեշտ ընթացիկ վերանորոգումները.

4.2.8. Բեռների ստացման, փոխադրման եւ առաքման հետ կապված վարորդի պատասխանատվությունը՝ համաձայնեցված պայմաններին համապատասխան (միայն «С», «СЕ» կարգեր):

Բ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՏՈՒԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

5. Տրանսպորտային միջոցը եւ դրա սարքավորումները

5.1. Մեխանիկական փոխանցման տուփով տրանսպորտային միջոց վարելու համար վարորդի թեկնածուն պետք է մեխանիկական փոխանցման տուփ ունեցող տրանսպորտային միջոցով գործնական վարման հմտությունների եւ վարքագծի քննություն հանձնի:

Եթե վարորդի թեկնածուն գործնական վարման հմտությունների եւ վարքագծի քննություն է հանձնում ավտոմատ փոխանցման տուփ ունեցող տրանսպորտային միջոցով, ապա դրա մասին պետք է գրառում կատարվի նման քննության հիման վրա տրամադրված ցանկացած վկայականի վրա: Նման նշում պարունակող վկայականները վավերական են միայն ավտոմատ փոխանցման տուփով տրանսպորտային միջոցներ վարելու համար:

«Ավտոմատ փոխանցման տուփով տրանսպորտային միջոց» նշանակում է այն տրանսպորտային միջոցը, որտեղ շարժիչի եւ անիվների միջեւ փոխանցման հարաբերակցությունը կարող է փոխվել միայն արագարարի կամ արգելակման ոտնակի օգտագործմամբ:

5.2. Գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման քննությունների անցկացման համար նախատեսված տրանսպորտային միջոցները պետք է համապատասխանեն ստորեւ նշված նվազագույն չափանիշներին: Անդամ պետությունները կարող են նախատեսել ավելի խիստ չափանիշներ կամ նախատեսել այլ դրույթներ:

«A1» կարգ՝

«A1» կարգի մոտոցիկլետ՝ առանց կողային կցորդի, որի շարժիչի աշխատանքային ծավալն առնվազն 120 խորանարդ սանտիմետր է, եւ որը կարող է զարգացնել առնվազն 90 կմ/ժ արագություն:

«A2» կարգ՝

Մոտոցիկլետ՝ առանց կողային կցորդի, որի շարժիչի աշխատանքային ծավալն առնվազն 400 խորանարդ սանտիմետր է, եւ որի հզորությունն առնվազն 25 կՎ է:

«A» կարգ՝

Մոտոցիկլետ՝ առանց կողային կցորդի, որի շարժիչի աշխատանքային ծավալն առնվազն 600 խորանարդ սանտիմետր է, եւ որի հզորությունն առնվազն 40 կՎ է:

«B» կարգ՝

«B» կարգի քառանիվ տրանսպորտային միջոց, որը կարող է զարգացնել առնվազն 100 կմ/ժ արագություն.

«BE» կարգ՝

քննության անցկացման համար նախատեսված «B» կարգի տրանսպորտային միջոցի եւ առնվազն 1000 կիլոգրամ առավելագույն թույլատրելի զանգված ունեցող կցորդի համակցությունը՝ առնվազն 100 կմ/ժամ արագություն զարգացնելու կարողությամբ, որը չի դասվում «B» կարգին. ընդ որում, կցորդի՝ բեռի համար նախատեսված մասը բաղկացած է փակ ֆուրգոն թափքից, որն առնվազն նույնքան լայնություն եւ նույնքան բարձրություն ունի, որքան տրանսպորտային միջոցը. միաժամանակ, ֆուրգոն թափքը կարող է նաեւ մի փոքր նեղ լինել, քան տրանսպորտային միջոցը՝ պայմանով, որ տրանսպորտային միջոցի հետեւի մասը հնարավոր կլինի տեսնել միայն տրանսպորտային միջոցի արտաքին հետին տեսանելիության հայելիների միջոցով. կցորդը պետք է ներկայացվի նվազագույնը 800 կիլոգրամ իրական զանգվածով.

«B1» կարգ՝

շարժիչով շարժման մեջ դրվող քառանիվ մոտոսայլակ, որը կարող է զարգացնել առնվազն 60 կմ/ժ արագություն.

«C» դաս՝

«C» կարգի տրանսպորտային միջոց՝ առնվազն 12 000 կիլոգրամ թույլատրելի առավելագույն զանգվածով, առնվազն 8 մետր երկարությամբ, առնվազն 2,40 մետր լայնությամբ եւ առնվազն 80 կմ/ժամ արագություն զարգացնելու կարողությամբ. միաժամանակ, կահավորված արգելակների հակաբլոկավորման համակարգերով, առնվազն ութ աստիճան առաջընթաց արագություն ունեցող փոխանցման տուփով եւ գրանցող սարքով, ինչպես սահմանված է թիվ 3821/85 կանոնակարգով (ԵՀՏ). ընդ որում, բեռի համար նախատեսված մասը բաղկացած է փակ ֆուրգոն թափքից, որն առնվազն նույնքան լայնություն եւ նույնքան բարձրություն ունի, որքան վարորդի խցիկը. կցորդը պետք է ներկայացվի նվազագույնը 10 000 կիլոգրամ իրական զանգվածով.

«CE» կարգ՝

երկու սեկցիա ունեցող տրանսպորտային միջոց կամ քննության անցկացման համար նախատեսված «C» կարգի տրանսպորտային միջոցի եւ առնվազն 7,5 մետր երկարություն ունեցող կցորդի համակցություն, ընդ որում, երկու սեկցիա ունեցող տրանսպորտային միջոցի եւ դրա համակցության առավելագույն թույլատրելի զանգվածը պետք է լինի առնվազն 20 000 կիլոգրամ, երկարությունը՝ առնվազն 14 մետր, լայնությունը՝ առնվազն 2,40 մետր, առավելագույն արագությունը, որը կարող է զարգացնել՝ առնվազն 80 կմ/ժ. միաժամանակ կահավորված է արգելակների հակաբլոկավորման համակարգերով, առնվազն ութ աստիճան առաջընթաց արագություն ունեցող փոխանցման տուփով եւ գրանցող սարքով, ինչպես սահմանված է թիվ 3821/85 կանոնակարգով (ԵՀՏ). ընդ որում, բեռի համար նախատեսված մասը բաղկացած է փակ ֆուրգոն թափքից, որն առնվազն նույնքան լայնություն եւ նույնքան բարձրություն ունի, որքան վարորդի խցիկը. երկու սեկցիա ունեցող տրանսպորտային միջոցը եւ դրա համակցությունը պետք է ներկայացվի նվազագույնը 15 000 կիլոգրամ իրական զանգվածով.

«C1» կարգ՝

«C1» ենթակարգի տրանսպորտային միջոց՝ առնվազն 4 000 կիլոգրամ թույլատրելի առավելագույն զանգվածով, առնվազն հինգ մետր երկարությամբ եւ առնվազն 80 կմ/ժ արագություն զարգացնելու կարողությամբ, միաժամանակ, կահավորված արգելակների հակաբլոկավորման համակարգերով եւ գրանցող սարքով, ինչպես սահմանված է թիվ 3821/85 կանոնակարգով (ԵՀՏ). ընդ որում, բեռի համար նախատեսված մասը բաղկացած է փակ ֆուրգոն թափքից, որն առնվազն նույնքան լայնություն եւ նույնքան բարձրություն ունի, որքան վարորդի խցիկը.

«C1E» կարգ՝

քննության անցկացման համար նախատեսված «C1» ենթակարգի տրանսպորտային միջոցի եւ առնվազն 1 250 կիլոգրամ առավելագույն թույլատրելի զանգված ունեցող կցորդի համակցություն. ընդ որում, նշված համակցությունը պետք է ունենա առնվազն ութ մետր երկարություն եւ առնվազն 80 կմ/ժ արագություն զարգացնելու կարողություն. միաժամանակ, կցորդի՝ բեռի համար նախատեսված մասը բաղկացած է փակ ֆուրգոն թափքից, որն առնվազն նույնքան լայնություն եւ նույնքան բարձրություն ունի, որքան վարորդի խցիկը. փակ ֆուրգոն թափքը կարող է նաեւ լինել մի փոքր ավելի նեղ, քան վարորդի խցիկը՝ պայմանով, որ տրանսպորտային միջոցի հետեւի մասը հնարավոր լինի տեսնել միայն տրանսպորտային միջոցի արտաքին հետին տեսանելիության հայելիների միջոցով. կցորդը պետք է ներկայացվի նվազագույնը 800 կիլոգրամ իրական զանգվածով.

«D» կարգ՝

«D» կարգի տրանսպորտային միջոց՝ առնվազն 10 մետր երկարությամբ, առնվազն 2,40 մետր լայնությամբ եւ առնվազն 80 կմ/ժ արագություն զարգացնելու կարողությամբ, միաժամանակ, կահավորված արգելակների հակաբլոկավորման համակարգերով եւ գրանցող սարքով, ինչպես սահմանված է թիվ 3821/85 կանոնակարգով (ԵՀՏ).

«DE» կարգ՝

քննության անցկացման համար նախատեսված «D» կարգի տրանսպորտային միջոցի եւ առնվազն 1 250 կիլոգրամ թույլատրելի առավելագույն զանգված ունեցող կցորդի համակցությունը՝ առնվազն 2,40 մետր լայնությամբ, առնվազն 80 կմ/ժ արագություն զարգացնելու կարողությամբ. ընդ որում, կցորդի՝ բեռի համար նախատեսված մասը բաղկացած է փակ ֆուրգոն թափքից, որն առնվազն երկու մետր լայնություն եւ երկու մետր բարձրություն ունի. կցորդը պետք է ներկայացվի նվազագույնը 800 կիլոգրամ իրական ընդհանուր զանգվածով.

«D1» կարգ՝

«D1» ենթակարգի տրանսպորտային միջոց՝ առնվազն 4 000 կիլոգրամ առավելագույն թույլատրելի զանգվածով, առնվազն հինգ մետր երկարությամբ եւ առնվազն 80 կմ/ժ արագություն զարգացնելու կարողությամբ, միաժամանակ, կահավորված արգելակների հակաբլոկավորման համակարգերով եւ գրանցող սարքով, ինչպես սահմանված է թիվ 3821/85 կանոնակարգով (ԵՏՀ).

«D1E» կարգ՝

քննության անցկացման համար նախատեսված «D1» ենթակարգի տրանսպորտային միջոցի եւ առնվազն 1 250 կիլոգրամ թույլատրելի առավելագույն զանգված ունեցող կցորդի համակցությունը՝ առնվազն 80 կմ/ժամ արագություն զարգացնելու կարողությամբ. միաժամանակ, կցորդի՝ բեռի համար նախատեսված մասը բաղկացած է փակ ֆուրգոն թափքից, որն առնվազն երկու մետր լայնություն եւ երկու մետր բարձրություն ունի. կցորդը պետք է ներկայացվի նվազագույնը 800 կիլոգրամ իրական ընդհանուր զանգվածով:

Քննության անցկացման համար նախատեսված «BE», «C», «CE», «C1», «C1E», «D», «DE», «D1» եւ «D1E» կարգերի տրանսպորտային միջոցները, որոնք չեն համապատասխանում նշված նվազագույն չափանիշներին, սակայն օգտագործվել են նախքան սույն Հրահանգն ուժի մեջ մտնելը, կարող են շարունակվել օգտագործվել նշված ամսաթվից հետո տասը տարին չգերազանցող ժամկետում: Նշված տրանսպորտային միջոցներով փոխադրվելիք բեռներին ներկայացվող պահանջները կարող են կիրարկվել անդամ պետությունների կողմից Հանձնաժողովի 2000/56/ԵՀ հրահանգն ուժի մեջ մտելու ամսաթվից մինչեւ տասը տարի (10):

6. «A1», «A2» եւ «A» կարգերի տրանսպորտային միջոց վարելու հմտությունները եւ վարքագիծը, որոնք պետք է ստուգվեն քննությունների միջոցով

6.1. Ճանապարհային երթելեկության անվտանգության հետ կապված՝ տրանսպորտային միջոցի նախապատրաստումը եւ տեխնիկական վիճակի գնումը

Վարորդի թեկնածուները պետք է ցույց տան, որ իրենք կարող են անվտանգ վարել՝ բավարարելով հետեւյալ պահանջները՝

6.1.1. Հարմարեցնել պաշտպանիչ արտահագուստի, ինչպես, օրինակ՝ ձեռնոցների, կոշիկների, հագուստի եւ պաշտպանիչ սաղավարտը

6.1.2. Պատահականության սկզբունքով ստուգել անվադողերի, արգելակների, ղեկանիվի, վթարային կանգառի ճանաչման նշանի (առկայության դեպքում), շղթայի, յուղի մակարդակի, լույսերի, անդրադարձիչների, ուղղության ցուցիչների, ձայնային ազդանշանման սարքի վիճակը:

6.2. Հատուկ մաներներ՝ ստուգելու համար ճանապարհային երթելեկության անվտանգությունը

6.2.1. Մոտոցիկլետը դնել հենակի վրա եւ հանել դրա վրայից ու շարժել այն՝ առանց շարժիչի օգնության եւ քայլելով տրանսպորտային միջոցի շուրջը.

6.2.2. Մոտոցիկլետն իր հենակի վրա կայանելը.

6.2.3. Յածր արագությամբ առնվազն երկու մաներ պետք է կատարվի՝ ներառյալ ոլորաշարժում կատարելը. դա հնարավորություն կտա գնահատելու վարորդի՝ կցորդման եւ արգելակի հետ միաժամանակ աշխատելու, հավասարակշռությունն ու տեսադաշտը չկորցնելու եւ մոտոցիկլետի վրա նստելու ու ոտքերի համար նախատեսված հենակների վրա ոտքերը դիրքավորելու հմտությունը.

6.2.4. Բարձր արագությամբ առնվազն երկու մաներ պետք է կատարվի, ընդ որում, մեկ մաները՝ երկրորդ կամ երրորդ փոխանցմամբ, առնվազն 30 կմ/ժ արագությամբ, իսկ մյուս մաները՝ առնվազն 50 կմ/ժ արագությամբ՝ շրջանցելով խոչընդոտը. դա հնարավորություն կտա գնահատելու վարորդի՝ մոտոցիկլետի վրա նստելու, տեսադաշտը եւ հավասարակշռությունը չկորցնելու, ղեկային կառավարման հմտությունը եւ փոխանցումները փոխելու հմտությունը.

6.2.5. Արգելակում՝ արգելակման առնվազն երկու վարժություն պետք է կատարվի՝ ներառյալ առնվազն 50 կմ/ժ արագության ժամանակ վթարային արգելակում կատարելը. դա հնարավորություն կտա գնահատելու վարորդի՝ առջեւի եւ հետեւի արգելակների, տեսադաշտը չկորցնելու եւ մոտոցիկլետի վրա նստելու հմտությունը:

6.2.3–6.2.5 կետերում նշված հատուկ մաներները պետք է կատարվեն ամենաուշը 2000/56/ԵՀ հրահանգն ուժի մեջ մտնելուց հինգ տարի հետո:

6.3. Վարքագիծը երթելեկության ժամանակ

Վարորդի թեկնածուները պետք է երթելեկության սովորական իրավիճակներում իրականացնեն հետեւյալ գործողությունները՝ ապահովելով լրիվ անվտանգություն եւ իրականացնելով բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցները՝

6.3.1. Երթելեկելը՝ կայանելուց, երթելեկության ժամանակ կանգնելուց, ճանապարհից դուրս գալուց հետո.

6.3.2. Երթելեկելն ուղիղ ճանապարհներով, շարժման մեջ գտնվող տրանսպորտային միջոցներից առաջ անցնելը, այդ թվում՝ փակ տարածքներում.

6.3.3. Երթելեկելը ճանապարհի ոլորաններով.

6.3.4. Խաչմերուկները՝ ճանապարհների հատումներին եւ միացումներին հասնելն ու դրանք հատելը.

6.3.5. Ուղղությունը փոխելը՝ ձախ եւ աջ շրջադարձը, երթելեկության գոտիները փոխելը.

6.3.6. Ավտոմայրուղիներին կամ նման տեսակի մյուս ճանապարհներին մոտենալը (ելքը) (հարկ եղած դեպքում)՝ արագացման գոտուց միանալը, դանդաղեցման գոտին ազատելը.

6.3.7. Վազանցը (անցնելը)՝ տրանսպորտային այլ միջոցներին վազանցելը (հնարավորության դեպքում), խոչընդոտների, օրինակ՝ կայանած մեքենաների կողքով վարելը, այլ տրանսպորտային միջոցների կողմից տրանսպորտային միջոցին վազանցելը (հարկ եղած դեպքում).

6.3.8. Ճանապարհի այլ առանձնահատկությունները (եթե այդպիսիք կան)՝ շրջանաձեւ երթելեկության խաչմերուկ, երկաթուղային գծանցեր, տրամվայի (ավտոբուսի) կանգառներ, հետիոտնային անցումներ, երկարաձիգ զառիվայր ճանապարհներով վերել (ներքել) վարելը.

6.3.9. Տրանսպորտային միջոցից իջնելիս անհրաժեշտ նախազգուշական միջոցներ ձեռնարկելը:

7. «B», «B1» եւ «BE» կարգերի տրանսպորտային միջոց վարելու հմտությունները եւ վարքագիծը, որոնք պետք է ստուգվեն քննությունների միջոցով

7.1. Ճանապարհային երթելեկության անվտանգության հետ կապված՝ տրանսպորտային միջոցի նախապատրաստումը եւ տեխնիկական վիճակի զննումը

Վարորդի թեկնածուները պետք է ցույց տան, որ իրենք կարող են անվտանգ վարել՝ բավարարելով հետեւյալ պահանջները՝

7.1.1. Հարմարեցնել նստատեղն այնպես, որ ստացվի ճիշտ նստած դիրք.

7.1.2. Հարմարեցնել հետին տեսանելիության հայելիները, ամրագոտիները, գլխակալները (առկայության դեպքում).

7.1.3. Ստուգել, թե արդյոք դռները փակ են.

7.1.4. Պատահականության սկզբունքով ստուգել անվադողերի, ղեկանիվի, արգելակների, հեղուկների (օրինակ՝ շարժիչի յուղը, սառեցնող հեղուկը, դիմապակին վանալու հեղուկը), լրյսերի, անդրադարձիչների, ուղղության ցուցիչների եւ ձայնային ազդանշանման սարքի վիճակը.

7.1.5. Ստուգել տրանսպորտային միջոցի ամրության գործոնները՝ կապված դրա բեռնվածքի հետ՝ թափքը, թիթեղները, բեռնային բեռնախցիկի դռները, սրահի փակված լինելը, բեռնման եղանակը, բեռի ամրակապված լինելը (միայն «BE» կարգի համար)։

7.1.6. Ստուգել կապակցման մեխանիզմները, ինչպես նաև արգելակը եւ էլեկտրական միացումները (միայն «BE» կարգերի համար)։

7.2. «B» եւ «B1» կարգեր՝ հատուկ մաներներ՝ ստուգելու համար ճանապարհային երթուղիների անվտանգությունը

Պետք է ստուգվի հետեւյալ մաներների կատարումը (առնվազն երկու մաներ՝ փոխանցման չորս աստիճանով՝ այդ թվում՝ մեկ մաներ հետընթացի ժամանիվով)։

7.2.1. Ուղիղ գծում շրջադարձ կատարելը կամ անկյան տակ աջ կամ ձախ շրջվելը՝ միեւնույն ժամանակ մնալով երթուղիների ճիշտ գոտում։

7.2.2. Հակառակ ուղղությունը վերցնելու համար շրջել տրանսպորտային միջոցը՝ օգտագործելով առաջընթացի եւ հետընթացի ժամանիվները։

7.2.3. Տրանսպորտային միջոցը կայանելը եւ կայանատեղը լքելը (զուգահեռ, շեղ կամ աջ անկյան վրա, դեպի առաջ կամ հետ, հարթության, վերելքի կամ զառիվայրի վրա)։

7.2.4. Ճիշտ արգելակումը տրանսպորտային միջոցը կանգնեցնելիս, այնուամենայնիվ, վթարային կանգառ կատարելը պարտադիր է։

7.3. «BE» կարգ՝ Հատուկ մաներներ՝ ստուգելու համար ճանապարհային երթուղիների անվտանգությունը

7.3.1. Կցորդն իր տրանսպորտային միջոցին կցորդելն ու կապազերծելը կամ կապազերծելն ու նորից կցորդելը, մաները կատարելիս պետք է քարշակը կայանել կցորդի կողքին (օրինակ՝ ոչ մեկ շարքում)։

7.3.2. Շրջադարձի կողքով հետ շրջվելը, որի կատարման համար նախատեսված շարքը պետք է որոշեն անդամ պետությունները։

7.3.3. Բեռնման (բեռնաթափման) համար անվտանգ կայանելը։

7.4. Վարքագիծը երթուղիների ժամանակ

Վարորդի թեկնածուները պետք է երթեւեկության սովորական իրավիճակներում իրականացնեն հետեւյալ գործողությունները՝ ապահովելով լրիվ անվտանգություն եւ իրականացնելով բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցները՝

7.4.1. Երթեւեկելը՝ կայանելուց, երթեւեկության ժամանակ կանգնելուց, ճանապարհից դուրս գալուց հետո.

7.4.2. Երթեւեկելն ուղիղ ճանապարհներով, շարժման մեջ գտնվող տրանսպորտային միջոցներից առաջ անցնելիս, այդ թվում՝ փակ տարածքներում.

7.4.3. Երթեւեկելը ճանապարհի ոլորաններով.

7.4.4. Խաչմերուկները՝ ճանապարհների հատումներին եւ միացումներին հասնելն ու դրանք հատելը.

7.4.5. Ուղղությունը փոխելը՝ ձախ եւ աջ շրջադարձը, երթեւեկության գոտիները փոխելը.

7.4.6. Ավտոմայրուղիներին կամ նման տեսակի այլ ճանապարհներին մոտենալը (ելքը) (հարկ եղած դեպքում)՝ արագացման գոտուց միանալը, դանդաղեցման գոտին ազատելը.

7.4.7. Վազանցը (անցնելը)՝ տրանսպորտային մյուս միջոցներին վազանցելը (հնարավորության դեպքում), խոչընդոտների, օրինակ՝ կայանած մեքենաների կողքով վարելը, այլ տրանսպորտային միջոցների կողմից տրանսպորտային միջոցին վազանցելը (հարկ եղած դեպքում).

7.4.8. Ճանապարհի այլ առանձնահատկությունները (եթե այդպիսիք կան)՝ շրջանաձեւ երթեւեկության խաչմերուկներ, երկաթուղային գծանցեր, տրամվայի (ավտոբուսի) կանգառներ, հետիոտնային անցումներ, երկարաձիգ զառիվայր ճանապարհներով վերել (ներքել) վարելը.

7.4.9. Տրանսպորտային միջոցից իջնելիս անհրաժեշտ նախազգուշական միջոցներ ձեռնարկելը:

8. «C», «CE», «C1», «C1E», «D», «DE», «D1» եւ «D1E» կարգերի համար նախատեսված հմտությունները եւ վարքագիծը, որոնք պետք է ստուգվեն քննությունների միջոցով.

8.1. Ճանապարհային երթեւեկության անվտանգության հետ կապված՝ տրանսպորտային միջոցի նախապատրաստումը եւ տեխնիկական վիճակի զննումը

Վարորդի թեկնածուները պետք է ցույց տան, որ իրենք կարող են անվտանգ վարել՝ բավարարելով հետեւյալ պահանջները՝

8.1.1. Հարմարեցնել նստատեղն այնպես, որ ստացվի ճիշտ նստած դիրք.

8.1.2. Հարմարեցնել հետին տեսանելիության հայելիները, ամրագոտիները, գլխակալները (առկայության դեպքում).

8.1.3. Պատահականության սկզբունքով ստուգել անվադողերը, ղեկանիվը, արգելակները, լույսերը, անդրադարձիչները, ուղղության ցուցիչները եւ ձայնային ազդանշանման սարքերը.

8.1.4. Ստուգել ուժեղացմամբ արգելակման եւ ղեկավարման համակարգերը, ստուգել անիվների, անիվների պնոտակների, անվաճաձկոցների, հողմապակու, ապակեմաքրիչների, հեղուկների (օրինակ՝ շարժիչի յուղ, սառեցնող հեղուկ, հողմապակին լվանալու հեղուկ) վիճակը, ստուգել եւ օգտագործել վահանակը՝ ներառյալ գրանցող սարքը, ինչպես սահմանված է թիվ 3821/85 կանոնակարգով (ԵՏՀ).

8.1.5. Ստուգել օդի ճնշումը, խտացված օդի բալոնները եւ օդաճնշական կախոցները.

8.1.6. Ստուգել տրանսպորտային միջոցի ամրության գործոնները՝ կապված դրա բեռնվածքի հետ՝ թափքը, թիթեղները, բեռնային բեռնախցիկի դռները, լիցքավորման սարքավորումը (առկայության դեպքում), սրահի փակված լինելը (առկայության դեպքում), բեռնման եղանակը, բեռի ամրակապված լինելը (միայն «C», «CE», «C1», «C1E» կարգերի համար).

8.1.7. Ստուգել կապակցման մեխանիզմները, ինչպես նաեւ արգելակը եւ էլեկտրական միացումները (միայն «CE», «C1E», «DE», «D1E» կարգերի համար).

8.1.8. Ի վիճակի լինել ձեռնարկելու տրանսպորտային միջոցի անվտանգության հետ կապված հատուկ միջոցներ՝ հսկելով թափքը, ծառայողական դռները, վթարային ելքերը, առաջին օգնության պարագաները, կրակմարիչները եւ անվտանգություն ապահովող մյուս սարքավորումները (միայն «D», «DE», «D1», «D1E» կարգերի համար).

8.1.9. Ճանապարհային քարտեզի ընթերցումը, երթուղու պլանավորումը՝ ներառյալ էլեկտրոնային նավիգացիոն համակարգերն օգտագործելը (պարտադիր չէ).

8.2. Հատուկ մաներներ՝ ստուգելու համար ճանապարհային երթուղու անվտանգությունը

8.2.1. Կցորդն իր տրանսպորտային միջոցին կցորդելն ու կապազերծելը կամ կապազերծելն ու նորից կցորդելը, քարշակը կցորդի կողքը կայանելը (օրինակ՝ ոչ մեկ շարքում) (օր.՝ միայն «CE», «C1E», «DE», «D1E» կարգերի համար)։

8.2.2. Շրջադարձի կողքով հետ շրջվելը, որի կատարման համար նախատեսված շարքը պետք է որոշեն անդամ պետությունները։

8.2.3. Լցաթափման էստակադայի (հարթակի) կամ նմանատիպ այլ սարքավորումների վրա բեռնում (բեռնաթափում) կատարելու համար անվտանգ կայանելը (օր.՝ միայն «C», «CE», «C1», «C1E» կարգերի համար)։

8.2.4. Կայանում՝ հնարավորություն տալով ուղեւորներին անվտանգ ավտոբուս նստելու կամ դրանից իջնելու (օր.՝ միայն «D», «DE», «D1», «D1E» կարգերի համար)։

8.3. Վարքագիծը երթեւեկության ժամանակ

Վարորդի թեկնածուները պետք է երթեւեկության սովորական իրավիճակներում իրականացնեն հետեւյալ գործողությունները՝ ապահովելով լրիվ անվտանգություն եւ իրականացնելով բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցները՝

8.3.1. Երթեւեկելը՝ կայանելուց, երթեւեկության ժամանակ կանգնելուց, ճանապարհից դուրս գալուց հետո։

8.3.2. Երթեւեկելն ուղիղ ճանապարհներով, շարժման մեջ գտնվող տրանսպորտային միջոցներից առաջ անցնելը՝ ներառյալ փակ տարածքներում։

8.3.3. Երթեւեկելը ճանապարհի ոլորաններով։

8.3.4. Խաչմերուկները՝ ճանապարհների հատումներին եւ միացումներին հասնելն ու դրանք հատելը։

8.3.5. Ուղղությունը փոխելը՝ ձախ եւ աջ շրջադարձը, երթեւեկության գոտիները փոխելը։

8.3.6. Ավտոմայրուղիներին կամ նման տեսակի մյուս ճանապարհներին մոտենալը (ելքը) (հարկ եղած դեպքում)՝ արագացման գոտուց միանալը, դանդաղեցման գոտին ազատելը։

8.3.7. Վազանցը (անցնելը)՝ տրանսպորտային մյուս միջոցներին վազանցելը (հնարավորության դեպքում), խոչընդոտների, օրինակ՝ կայանած մեքենաների կողքով վարելը, այլ տրանսպորտային միջոցների կողմից տրանսպորտային միջոցին վազանցելը (հարկ եղած դեպքում)։

8.3.8. Ճանապարհի առանձնահատկությունները (եթե այդպիսիք կան)՝ շրջանաձև երթելակայան խաչմերուկներ, երկաթուղային գծանցեր, տրամվայի (ավտոբուսի) կանգառներ, հետիոտնային անցումներ, երկարաձիգ զառիվայր ճանապարհներով վերել (ներքել) վարելը.

8.3.9. Տրանսպորտային միջոցից իջնելիս անհրաժեշտ նախազգուշական միջոցներ ձեռնարկելը:

9. Գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման նպատակով անցկացվող քննության գնահատումը

9.1. Նշված վարման իրավիճակներից յուրաքանչյուրը գնահատելիս պետք է հաշվի առնվի վարորդի թեկնածուի հանգստության աստիճանը, որով նա ղեկավարում է տրանսպորտային միջոցը, ինչպես նաեւ երթելակայան ժամանակ լրիվ անվտանգ վարելու ցուցաբերած կարողությունը: Քննություն ընդունողը պետք է իրեն անվտանգ զգա քննության ամբողջ ընթացքում: Սխալ վարելը կամ վտանգավոր վարքագիծը, որն անմիջական վտանգ է ներկայացնում քննության անցկացման համար նախատեսված տրանսպորտային միջոցի, դրա ուղեւորների եւ երթելակայան այլ մասնակիցների համար, պետք է պատժվի քննությունից կտրվելով, անկախ այն հանգամանքից, թե արդյոք քննություն ընդունողը կամ ուղեկցող անձը միջամտել են, թե ոչ: Այնուամենայնիվ, քննություն ընդունողը ազատ է որոշելու, թե արդյոք պետք է շարունակել գործնական հմտությունների եւ վարքագծի ստուգման նպատակով անցկացվող քննությունը, թե ոչ:

Վարելու քննություն ընդունողները պետք է անցնեն վերապատրաստման դասընթացներ, որպեսզի կարողանան ճշտորեն գնահատել թեկնածուի՝ անվտանգ վարելու կարողությունը: Վարելու քննություն ընդունողների աշխատանքը պետք է դիտանցվի եւ վերահսկվի անդամ պետության կողմից լիազորված մարմնի կողմից՝ ապահովելու համար սխալների ճիշտ եւ հետետողական գնահատումը՝ սույն հավելվածով սահմանված չափանիշներին համապատասխան:

9.2. Գնահատման ժամանակ վարելու քննություն ընդունողները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն այն հանգամանքին, թե արդյոք վարորդի թեկնածուն կարողանում է դրսևորել անվտանգ եւ այլ տրանսպորտային միջոցներին հարգելու վարքագիծ: Այստեղ պետք է ի հայտ գա տրանսպորտային միջոց վարելու ընդհանուր ոճը, եւ վարելու քննություն ընդունողը պետք է դա հաշվի առնի վարորդի թեկնածուի ընդհանուր գնահատականում: Վերջինս իր մեջ ներառում է տրանսպորտային միջոցի՝ որոշված եւ չորոշված երթուղով

(անվտանգ) վարելը՝ հաշվի առնելով ճանապարհային եւ եղանակային պայմանները, երթեւեկության այլ պայմաններ, ճանապարհային երթեւեկության մյուս մասնակիցների (մասնավորապես առավել խոցելի) շահերը եւ զգացողությունը:

9.3. Վարելու քննություն ընդունողը պետք է հետագայում գնահատի, թե արդյոք վարորդի թեկնածուն՝

9.3.1. հսկում է տրանսպորտային միջոցը՝ հաշվի առնելով՝ անվտանգության գոտիների, հետին տեսանելիության հայելիների, գլխակալների, նստատեղի պատշաճ օգտագործումը, լույսերի եւ այլ սարքերի պատշաճ օգտագործումը, կցորդման ոտնակի, փոխանցման տուփի, արագարարի, արգելակման համակարգերի (այդ թվում՝ առկայության դեպքում, արգելակման երրորդ համակարգը), ղեկանիվի պատշաճ օգտագործումը, տարբեր հանգամանքներում, տարբեր արագություններով տրանսպորտային միջոցի կառավարումը, ճանապարհի վրա տրանսպորտային միջոցի կայունությունը, քաշը եւ չափսերն ու առանձնահատկությունները, բեռի քաշը եւ տեսակը (միայն «BE», «C», «CE», «C1», «C1E», «DE», «D1E» կարգերի համար), ուղեւորների հարմարավետությունը (միայն «D», «DE», «D1», «D1E» կարգերի համար) (չի թույլատրվում արագ ընթանալ եւ կտրուկ արգելակել, անհրաժեշտ է վարել սահուն կերպով):

9.3.2. Խնայողական ու բնապահպանական ռեժիմով վարելը՝ հաշվի առնելով շարժիչի պտույտների թիվը մեկ րոպեում, ժամանիվները փոխելը, արգելակելը եւ արագացնելը (միայն «BE», «C», «CE», «C1», «C1E», «D», «DE», «D1», «D1E» կարգերի համար):

9.3.3. Դիտողականությունը՝ շուրջ բոլորը դիտելու ունակությունը, հայելիների պատշաճ օգտագործումը, հեռու, միջին եւ մոտ տարածության վրա տեսանելիությունը:

9.3.4. Անցման առաջնահերթությունը (ճանապարհը զիջելը)՝ խաչմերուկներում, հատումներում եւ միացումներում անցման առաջնահերթությունը, այլ պատճառներով ճանապարհը զիջելը (օր.՝ ուղղությունը, երթեւեկության գոտիները փոխելը, հատուկ մաներներ կատարելը):

9.3.5. Ճիշտ դիրքը ճանապարհի վրա՝ համապատասխան դիրքը ճանապարհի վրա, երթեւեկության գոտիներում, շրջանաձեւ երթեւեկություն ունեցող խաչմերուկներում, ճանապարհի ոլորաններում, որը հարմար է տրանսպորտային միջոցի տվյալ տեսակին եւ առանձնահատկություններին, տրանսպորտային միջոցի նախապես զբաղեցրած դիրքը:

9.3.6. Հեռավորություն պահպանելը՝ բավարար հեռավորություն պահպանելը՝ առջեւից եւ կողքից, երթեւեկության այլ մասնակիցներից բավարար հեռավորություն պահպանելը.

9.3.7. Արագությունը՝ թույլատրելի արագությունը չգերազանցելը, արագությունը եղանակային (երթեւեկության) պայմաններին եւ, հարկ եղած դեպքում, մինչեւ ազգային սահմանված արագությանը հարմարեցնելը, այնպիսի արագությամբ վարելը, որի դեպքում հնարավոր կլինի տրանսպորտային միջոցի արգելակումը տեսանելի եւ ազատ ճանապարհի հեռավորության սահմաններում, արագությունը երթեւեկության նույն տեսակի մասնակիցների ընդհանուր արագությանը հարմարեցնելը.

9.3.8. Լուսացույցներ, ճանապարհային նշաններ եւ այլ ցուցիչներ՝ լուսանցույցներին ճիշտ արձագանքելը, երթեւեկություն կարգավորողների ցուցումներին ենթարկվելը, ճանապարհային նշաններին (արգելքներ կամ հրամաններ) ճիշտ արձագանքելը, ճանապարհային գծանշումների համաձայն՝ համապատասխան գործողություն ձեռնարկելը.

9.3.9. Ազդանշանները՝ հարկ եղած դեպքում ճիշտ եւ պատեհ ժամանակին ազդանշաններ տալը, ճիշտ շարժման ուղղություն ցույց տալը, ճանապարհային երթեւեկության այլ մասնակիցների կողմից տրված բոլոր ազդանշաններին արձագանքելը.

9.3.10. Տրանսպորտային միջոցն արգելակելը եւ կանգնեցնելը ստեղծված հանգամանքների, վտանգի կանխատեսման դեպքերում տրանսպորտային միջոցի արագությունը ժամանակին դանդաղեցնելը, արգելակելը կամ կանգնեցնելը՝ կիրառելով արգելակման տարբեր համակարգերը (միայն «C», «CE», «D», «DE» կարգերի համար); ինչպես նաեւ արգելակներից բացի արագությունը դանդաղեցնելու համար նախատեսված համակարգերը (միայն «C», «CE», «D», «DE» կարգերի համար).

10. Քննության տեսողությունը

Քննության տեսողությունը եւ տրանսպորտային միջոցով անցած տարածությունը պետք է բավարար լինի՝ գնահատելու համար սույն հավելվածի «Բ» պարբերությամբ սահմանված՝ գործնական վարման հմտությունները եւ վարքագիծը: Վարորդի թեկնածուի գործնական հմտությունները եւ վարքագիծը ստուգելու համար նախատեսված ժամանակը չպետք է ոչ մի դեպքում 25 րոպեից պակաս լինի «A», «A1», «A2», «B», «B1» եւ «BE» կարգերի համար եւ 45 րոպեից պակաս՝ այլ կարգերի համար: Այդ ժամանակի մեջ չպետք է հաշվարկվի վարորդի թեկնածուներին ընդունելու, տրանսպորտային միջոցը նախապատրաստելու, ճանապարհի անվտանգության հետ կապված տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակը զննելու,

հատուկ մաներներ կատարելու եւ գործնական քննության արդյունքները հայտարարելու ժամանակը:

11. Քննության անցկացման վայրը

Քննության՝ հատուկ մաներների կատարումը գնահատելու համար նախատեսված մասը կարող է կազմակերպվել քննությունների անցկացման համար նախատեսված հատուկ ավտոհրապարակում: Եթե գործնականում հնարավոր է, քննության՝ երթեւեկության ժամանակ վարորդի վարքագիծը գնահատելու համար նախատեսված մասը պետք է կազմակերպվի կառուցապատ տարածքներից դուրս գտնվող ճանապարհների, ճեպընթաց մայրուղիների եւ ավտոմայրուղիների (կամ նմանատիպ ճանապարհների) վրա, ինչպես նաեւ տարբեր տեսակների դժվարություններ ներկայացնող բոլոր տեսակների քաղաքային փողոցներում (բնակելի գոտի, 30 եւ 50 կմ/ժ արագությամբ գոտիներ, քաղաքային ճեպընթաց մայրուղիներ), որոնց հավանաբար կհանդիպեն վարորդները: Ցանկալի է նաեւ, որ քննությունն անցկացվի ճանապարհային խիտ երթեւեկության պայմաններում: Գործնական վարման ժամանակը պետք է օգտագործվի օպտիմալ կերպով՝ գնահատելու համար վարորդի թեկնածուին երթեւեկության այն բոլոր տարբեր տարածքներում, որտեղ նա կարող է հայտնվել՝ հատուկ ուշադրություն դարձնելով նշված գոտիների միջեւ ուղղությունը փոխելու վրա:

II. ՇԱՐԺԻՉՈՎ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ ԴՐՎՈՂ ՑԱՆԿԱՑԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ, ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԱՐՔԱԳԻԾԸ

Շարժիչով շարժման մեջ դրվող բոլոր տրանսպորտային միջոցների վարորդները պետք է ցանկացած ժամանակ տիրապետեն 1-9-րդ կետերում նշված գիտելիքներին, հմտություններին ու ցուցաբերեն այնպիսի վարքագիծ, որ կարողանան՝

- կանխատեսել երթեւեկության վտանգները եւ գնահատել դրանց լրջությունը.
- բավարար չափով կառավարել իրենց տրանսպորտային միջոցը՝ չստեղծելու համար վտանգավոր իրավիճակներ եւ նման իրավիճակների առաջացման դեպքում համապատասխանաբար արձագանքելու դրանց.

– կատարել ճանապարհային երթեւեկության կանոնները եւ, մասնավորապէս, այն կանոնները, որոնք նախատեսված են՝ ճանապարհատրանսպորտային պատահարները կանխելու եւ երթեւեկության հոսքը պահպանելու համար.

– հայտնաբերել իրենց տրանսպորտային միջոցների ցանկացած հիմնական տեխնիկական թերությունները՝ մասնավորապէս նրանք, որոնք առնչվում են անվտանգության համակարգին եւ պատշաճ կերպով դրանք շտկել.

– հաշվի առնել երթեւեկության վարքագծի վրա ազդող բոլոր գործոնները (օր.՝ ակոհոլ, հոգնածություն, վատ տեսողություն եւ այլն), որպէսզի կարողանան ամբողջությամբ օգտագործել անվտանգ վարելու համար անհրաժեշտ կարողությունները.

– ապահովել ճանապարհային երթեւեկության բոլոր մասնակիցների անվտանգությունը եւ, մասնավորապէս, ամենաթույլերին ու ամենաանպաշտպաններին՝ պատշաճ հարգանք ցուցաբերելով այլ մասնակիցների նկատմամբ:

Անդամ պետությունները կարող են կիրարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար, որ այն վարորդները, որոնք կորցրել են 1–9–րդ կետերում նշված գիտելիքները, հմտությունները եւ վարքագիծը, կարողանան վերականգնել այդ գիտելիքները եւ այդ հմտությունները, ինչպէս նաեւ այնպիսի վարքագիծ դրսեւորել, որը պարտադիր է՝ շարժիչով շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոցը վարելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ III

ՇԱՐԺԻՉՈՎ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ ԴԻՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ

2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Սույն հավելվածի նպատակով՝ վարորդները բաժանվում են երկու խմբի՝

1.1. 1-ին խումբ՝

վարորդներ, ովքեր վարում են «A», «A1», «A2», «AM», «B», «B1» եւ «BE» կարգերի տրանսպորտային միջոցներ:

1.2. 2-րդ խումբ՝

վարորդներ, ովքեր վարում են «C», «CE», «C1», «C1E», «D», «DE», «D1» եւ «D1E» կարգերին վերաբերող հատուկ դրույթներ:

1.3. Ազգային օրենսդրությամբ կարող է նախատեսվել 2-րդ խմբի վարորդների համար սույն հավելվածով նախատեսված դրույթների կիրառում «B» կարգի տրանսպորտային միջոցների վարորդների նկատմամբ, ովքեր իրենց վարորդական վկայականն օգտագործում են մասնագիտական նպատակներով (տաքսիներ, շտապօգնության մեքենաներ եւ այլն):

2. Նմանապես, այն թեկնածուները, ովքեր դիմել են առաջին անգամ վարորդական վկայական ստանալու կամ տրամադրված վարորդական վկայականի գործողության ժամկետը երկարաձգելու համար, դասակարգվում են այն խմբում, որի մեջ նրանք ընդգրկվում են վկայականը տրամադրելու կամ դրա գործողության ժամկետը երկարաձգելու ժամանակ:

ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. 1-ին խումբ՝

վարորդի թեկնածուները պետք է անցնեն բժշկական հետազոտություն, եթե անհրաժեշտ ձեւականությունները կատարելուց կամ մինչեւ վարորդական վկայականն ստանալը պարտադիր կերպով անցկացվող հետազոտությունների ընթացքում պարզ է դառնում, որ նրանք ունեն սույն հավելվածում նշված մեկ կամ ավելի ֆունկցիոնալ խանգարումներ:

4. 2-րդ խումբ՝

վարորդի թեկնածուները պետք է անցնեն բժշկական զննություն՝ նախքան առաջին անգամ վարորդական վկայական ստանալը. այնուհետև վարորդներն իրենց վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման ժամանակ պետք է ստուգում անցնեն՝ սովորական բնակության վայրի անդամ պետությունում գործող ազգային համակարգին համապատասխան:

5. Անդամ պետությունների կողմից առաջին անգամ վարորդական վկայականներ տրամադրելու կամ տրամադրված վարորդական վկայականների գործողության ժամկետը երկարաձգելու համար սահմանված ստանդարտները կարող են ավելի խիստ լինել, քան սույն հավելվածով սահմանված չափանիշները:

"M1

ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆ

6. Վարորդի բոլոր թեկնածուները պետք է անցնեն բոլոր անհրաժեշտ հետազոտությունները՝ համոզվելու համար, որ նրանք ունեն շարժիչով շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոցներ վարելու համար անհրաժեշտ համարժեք տեսողության սրություն: Եթե պատճառ կա կասկածելու, որ վարորդի թեկնածուն տեսողության հետ կապված խնդիրներ ունի, ապա նա պետք է հետազոտվի իրավասու բժշկական հաստատության կողմից: Հետազոտության ժամանակ պետք է, մասնավորապես, ուշադրություն դարձվի հետեւյալին՝ տեսողության սրություն, տեսադաշտ, գիշերային տեսողություն, լույսի նկատմամբ զգայունություն եւ գունային զգայունություն, դիպլոպիա ու տեսողական այլ ֆունկցիաներ, որոնք կարող են վտանգել անվտանգ երթեւեկությունը:

Առաջին խմբի վարորդներին վկայական տրամադրելու հարցը կարող է դիտարկվել «բացառիկ դեպքերում», եթե չեն բավարարվում տեսադաշտի կամ տեսողության սրության ստանդարտները. նման դեպքերում վարորդը պետք է հետազոտություն անցնի իրավասու բժշկական հաստատության կողմից՝ ցույց տալու համար, որ բացակայում են տեսողական ֆունկցիայի այլ խանգարումներ, այդ թվում՝ լույսի նկատմամբ զգայունության, գունային զգայունության եւ գիշերային տեսողության: Վարորդը կամ վարորդի թեկնածուն պետք է անցնեն նաեւ իրավասու հաստատության կողմից կազմակերպվող գործնական հետազոտությունները:

1-ին խումբ՝

6.1. Վարորդական վկայական ստանալու կամ դրա գործողության ժամկետը երկարաձգելու համար դիմած վարորդները պետք է ունենան, երկու աչքը միասին օգտագործելիս, առնվազն 0,5 երկնակնային տեսողության սրություն, անհրաժեշտության դեպքում, շտկիչ ոսպնապակիներով:

Ավելին, տեսողության հորիզոնական դաշտի փովածքը պետք է առնվազն 120 աստիճան լինի, բիբի տեղաշարժի սեկտորը դեպի աջ եւ ձախ պետք է առնվազն 50 աստիճան լինի եւ դեպի վերեւ ու ներքեւ՝ 20 աստիճան: Որեւէ արատ կենտրոնական 20 աստիճան շառավղում չպետք է լինի:

Երբ հայտնաբերվում է աչքի պրոգրեսիվ զարգացող հիվանդություն կամ հայտարարվում է դրա մասին, ապա վարորդական վկայականները կարող են տրամադրվել կամ դրանց գործողության ժամկետը կարող է երկարաձգվել, եթե վարորդի թեկնածուն իրավասու բժշկական մարմնի կողմից ենթարկվում է պարբերաբար հետազոտություն:

6.2. Վարորդական վկայական ստանալու կամ դրա գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած այն թեկնածուները, ովքեր ունեն մեկ աչքի տեսողական ֆունկցիայի ամբողջական կորուստ, կամ, ովքեր օգտագործում են միայն մեկ աչքը (օր.՝ դիպլոպիայի դեպքում), պետք է ունենա առնվազն 0,5 տեսողության սրություն, անհրաժեշտության դեպքում, շտկիչ ոսպնապակիներով: Իրավասու բժշկական հաստատությունը պետք է հավաստի, որ միակնային տեսողության այս վիճակը գոյություն է ունեցել բավականին երկար ժամանակ, որպեսզի հնարավոր լիներ հարմարվել այդ վիճակին, եւ, որ տեսողության դաշտն այս աչքում բավարարում է 6.1 պարբերությամբ սահմանված պահանջները:

6.3. Վերջերս զարգացած դիպլոպիայից կամ մեկ աչքում տեսողության կորստից հետո անհրաժեշտ է նախատեսել ադապտացիոն շրջան (օրինակ՝ վեց ամիս), որի ընթացքում տրանսպորտային միջոց վարելն արգելվում է: Տրանսպորտային միջոց վարելն այս շրջանից հետո թույլատրվում է միայն տեսողության եւ տրանսպորտային միջոց վարելու հարցերով փորձագետների դրական եզրակացության հիման վրա:

2-րդ խումբ՝

6.4. Վարորդական վկայական ստանալու կամ դրա գործողության ժամկետը երկարաձգելու համար դիմած թեկնածուների տեսողության սրությունը լավ աչքում, անհրաժեշտության դեպքում, շտկիչ ոսպնապակիներով, պետք է լինի առնվազն 0,8, իսկ վատ աչքում՝ առնվազն 0,1:
Եթե շտկիչ ոսպնապակիներ են օգտագործվում՝ հասնելու համար 0,8 եւ 0,1

մեծությանը, ապա նվազագույն սրության (0,8 եւ 0,1) պետք է հասնել տեսողության շտկման կամ + ութ դիօպտրիա օպտիկական ուժը չգերազանցող ակնոցների կամ կոնտակտային ոսպնյակների միջոցով: Շտկումը պետք է անհարմարություն չառաջացնի:

Ավելին, երկու աչքով հորիզոնական տեսադաշտը պետք է լինի առնվազն 160 աստիճան, ձգվածությունը դեպի աջ ու ձախ պետք է լինի առնվազն 70 աստիճան եւ դեպի վերեւ ու ներքեւ՝ 30 աստիճան: Որեւէ արատ կենտրոնական 30 աստիճան շառավղում չպետք է լինի:

Վարորդական վկայականներ չեն տրամադրվում վարորդի այն թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած այն վարորդներին, ովքեր տառապում են կոնտրաստի զգայունությամբ կամ դիպլօպիայով:

Մեկ աչքում տեսողության զգալի կորստից հետո անհրաժեշտ է նախատեսել հարմարվելու (ադապտացիոն) շրջան (օրինակ՝ վեց ամիս), որի ընթացքում տրանսպորտային միջոց վարելն արգելվում է: Տրանսպորտային միջոց վարելն այս շրջանից հետո թույլատրվում է միայն տեսողության եւ տրանսպորտային միջոց վարելու հարցերով փորձագետների դրական եզրակացության հիման վրա:

"B

ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ

Վարորդական վկայականներ կարող են տրամադրվել 2-րդ խմբի վարորդի թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած վարորդներին իրավասու բժշկական հաստատությունների եզրակացության հիման վրա. բժշկական հետազոտություններում հատուկ ուշադրություն պետք է դարձվի փոխհատուցման շրջանակին:

ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

8. Վարորդական վկայականներ չեն տրամադրվում վարորդի այն թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած այն վարորդներին, ովքեր ունեն շարժողական համակարգի հետ կապված բողոքներ կամ խանգարումներ, ինչը վտանգավոր է դարձնում շարժիչով շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոց վարելը:

1-ին խումբ՝

8.1. Որոշակի սահմանափակումներ նախատեսող վարորդական վկայականները, հարկ եղած դեպքում, կարող են տրամադրվել ֆիզիկական արատ ունեցող վարորդի թեկնածուներին կամ վարորդներին՝ իրավասու բժշկական հաստատության եզրակացության հիման վրա: Այդ եզրակացությունը պետք է հիմնված լինի համապատասխան բողոքի կամ խանգարման բժշկական գնահատման վրա եւ, անհրաժեշտության դեպքում՝ գործնական հետազոտության արդյունքների վրա: Դրանում պետք է նաեւ նշվի, թե ինչ ձեւափոխություն է անհրաժեշտ կատարել տրանսպորտային միջոցի մեջ, եւ թե արդյոք վարորդին պետք են օրթոպեդիկ հարմարանքներ, թե ոչ, քանի որ գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման նպատակով անցկացվող քննության արդյունքում պարզ է դարձել, որ տրանսպորտային միջոցը նման սարքավորմամբ վարելը վտանգ չի ներկայացնում:

8.2. Վարորդական վկայականներ կարող են տրամադրվել վարորդի ցանկացած այն թեկնածուին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած ցանկացած այն վարորդին, ով ունի շարժողական համակարգի պրոգրեսիվ խնդիրներ՝ պայմանով, որ ֆիզիկական արատներ ունեցող անձը պարբերաբար հետազոտություն անցնի՝ ստուգելու համար, որ նա դեռ կարող է տրանսպորտային միջոցը լիովին անվտանգ վարել:

Եթե ֆիզիկական արատը քրոնիկ է, ապա վարորդական վկայականները կարող են տրամադրվել կամ վարորդական վկայականի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել առանց կանոնավոր բժշկական հետազոտություն անցնելու:

2-րդ խումբ՝

8.3 Իրավասու բժշկական հաստատությունը պետք է պատշաճ ուշադրություն դարձնի այս խմբի՝ տրանսպորտային միջոցներ վարելու հետ կապված լրացուցիչ ռիսկերին եւ վտանգներին:

ՄՐՏԱՆՈԹԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9. Ցանկացած հիվանդություն, որի պատճառով առաջին անգամ վկայական ստանալու համար դիմած վարորդի թեկնածուի կամ դրա գործողության ժամկետը երկարաձգելու համար դիմած վարորդի մոտ առաջանում է սրտանոթային համակարգի հանկարծակի

անբավարարություն այնպես, որ ուղեղային ֆունկցիաների հանկարծակի խանգարումները վտանգ են ներկայացնում ճանապարհային երթևեկության անվտանգության համար:

1-ին խումբ՝

9.1. Վարորդական վկայականներ չեն տրամադրվում վարորդի այն թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած այն վարորդներին, ովքեր տառապում են լուրջ առիթմիայով:

9.2. Բժշկական եզրակացության եւ պարբերական բժշկական ստուգումների հիման վրա կարող են տրամադրվել վարորդական վկայականներ վարորդի այն թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած այն վարորդներին, ովքեր սրտի ռիթմի կարգավորման սարք են կրում:

9.3. Աննորմալ զարկերակային արյան ճնշմամբ տառապող թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած վարորդներին վարորդական վկայական տրամադրելու հարցը գնահատվում է՝ հաշվի առնելով հետազոտության մյուս արդյունքները, մյուս բարդություններն ու վտանգը, որ կարող են ներկայացնել ճանապարհային երթևեկության անվտանգության համար:

9.4. Ընդհանուր առմամբ, վարորդական վկայականներ չեն տրամադրվում վարորդի այն թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած այն վարորդներին, ովքեր հանգստի կամ հուզական վիճակում տառապում են ստենոկարդիայով: Միոկարդի ինֆարկտով տառապող վարորդի թեկնածուներին վարորդական վկայական տրամադրելու կամ վարորդական վկայականի գործողության ժամկետը երկարաձգելու համար անհրաժեշտ է ունենալ իրավասու բժշկական հաստատության եւ, հարկ եղած դեպքում, պարբերաբար բժշկական ստուգման եզրակացությունը:

2-րդ խումբ՝

9.5 Իրավասու բժշկական հաստատությունը պետք է պատշաճ ուշադրություն դարձնի այս խմբի՝ տրանսպորտային միջոցներ վարելու հետ կապված լրացուցիչ ռիսկերին եւ վտանգներին:

"M1

ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏ

10. Հաջորդ պարբերություններում «սուր հիպոգլիկեմիա» եզրույթի ներքո պետք է հասկանալ, որ անհրաժեշտ է մեկ այլ անձի օգնությունը, իսկ «կրկնվող հիպոգլիկեմիայի» ներքո՝ որպես երկրորդ սուր հիպոգլիկեմիա՝ 12 ամսվա ընթացքում:

1-ին խումբ՝

10.1 Վարորդական վկայականներ տրամադրվում են վարորդի այն թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած այն վարորդներին, ովքեր տառապում են շաքարային դիաբետով: Եթե վարորդի թեկնածուն կամ վարորդն անցնում է դեղորայքային բուժում, ապա նրանք պետք է ներկայացնեն իրավասու բժշկական հաստատության եզրակացությունը կամ անցնեն յուրաքանչյուր դեպքին համապատասխան կանոնավոր բժշկական հետազոտություն, սակայն այդ ժամանակահատվածը չպետք է գերազանցի հինգ տարին:

10.2 Վարորդական վկայականներ չեն տրամադրվում վարորդի այն թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած այն վարորդներին, ովքեր տառապում են կրկնվող, սուր շաքարային դիաբետով կամ (եւ) հիպոգլիկեմիա հիվանդության զգացողության վատթարացմամբ: Շաքարային դիաբետով տառապող վարորդը պետք է ծանոթ լինի հիպոգլիկեմիա հիվանդության հետ կապված ռիսկին եւ կարողանա վերահսկել իր վիճակը:

2-րդ խումբ՝

10.3. Անհրաժեշտ է դիտարկել 2-րդ խմբի՝ շաքարային դիաբետով տառապող վարորդներին վկայականներ տրամադրելու (տրամադրված վկայականների գործողության ժամկետը երկարաձգելու) հարցը: Շաքարային դիաբետը՝ հիպոգլիկեմիայի առաջացման պատճառ հանդիսացող դեղորայքով (այսինքն՝ ինսուլինով եւ որոշ դեղահաբերով) բուժելու դեպքում, անհրաժեշտ է կիրառել հետեւյալ չափորոշիչները՝

- վերջին 12 ամիսների ընթացքում պետք է բացակայեն սուր հիպոգլիկեմիայի նոպաները.
- վարորդը պետք է ամբողջությամբ տեղեկացված լինի հիպոգլիկեմիա հիվանդության մասին.

– վարորդը պետք է, առնվազն օրը երկու անգամ եւ տրանսպորտային միջոցը վարելու ժամանակ, արյան մեջ շաքարի պարունակության պարբերաբար ստուգման միջոցով ցույց տա, որ վերահսկում է իր առողջական վիճակը.

– վարորդը պետք է ցույց տա, որ գիտակցում է հիպոգլիկեմիայի հետ կապված ռիսկերը.

– չկան շաքարային դիաբետի այլ բարդություններ, որոնց դեպքում տրանսպորտային միջոց վարելն արգելվում է:

Ավելին, այս դեպքերում վարորդական վկայականներ պետք է տրամադրվեն իրավասու բժշկական հաստատության եզրակացության եւ պարբերական բժշկական գննության հիման վրա, որոնք պետք է իրականացվեն երեք տարի պարբերականությամբ:

10.4. Արթնանալու, նույնիսկ տրանսպորտային միջոցը վարելու հետ չկապված ժամերին սուր հիպոգլիկեմիայի նոպաներ ունենալու մասին պետք է զեկուցվի եւ պետք է քննարկվի վարորդական վկայականի կարգավիճակը:

"B

ՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11. Ծանր նյարդաբանական հիվանդությամբ տառապող վարորդի թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած վարորդներին վարորդական վկայականներ չեն տրամադրվել, քանի դեռ դիմումը չի հիմնավորվում իրավասու բժշկական հաստատության եզրակացությամբ:

Կենտրոնական կամ պերիֆերիկ նյարդային համակարգի վրա ազդող հիվանդությունների կամ վիրահատական միջամտության հետ կապված նյարդաբանական խանգարումները, որոնք առաջացնում են զգայական կամ շարժողական ֆունկցիաների խանգարումներ եւ ազդում են հավասարակշռության ու կոորդինացիայի վրա, պետք է համապատասխանաբար հաշվի առնվեն՝ կապված իրենց ֆունկցիոնալ ազդեցության եւ զարգացման ռիսկերի հետ: Նման դեպքերում վկայական տրամադրելու կամ դրա գործողության ժամկետը երկարաձգելու հարցը կարող է առողջական վիճակի վատթարացման ռիսկի պարագայում ենթարկվել պարբերական գնահատման :

"M1

ԷՊԻԼԵՊՍԻԱ

12. Էպիլեպսիայի նոպաները կամ գիտակցության մյուս հանկարծակի խանգարումները լուրջ վտանգ են ներկայացնում ճանապարհային երթելակության անվտանգության համար, եթե դա պատահում է այն անձի մոտ, ով վարում է շարժիչով շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոց:

Էպիլեպսիա է համարվում հինգ տարուց պակաս ժամանակահատվածում երկու կամ ավելի անգամ ունեցած էպիլեպսիայի նոպաները: Արհեստականորեն խթանված էպիլեպտիկ նոպա է համարվում այն նոպան, որն առաջանում է այնպիսի հայտնի պատճառային գործոնի հետեւանքով, որը հնարավոր է կանխել:

Էպիլեպսիայի առաջին նոպա կամ գիտակցության կորուստ ունեցող անձին խորհուրդ չի տրվում վարել տրանսպորտային միջոց: Տրանսպորտային միջոց վարելու համար անհրաժեշտ է մասնագետի եզրակացությունը, որտեղ պետք է նշվի այն ժամանակահատվածը, որի ընթացքում արգելվում է վարել տրանսպորտային միջոց, ինչպես նաեւ այն ժամկետը, երբ անձը պետք է ստուգում անցնի:

Չափազանց կարեւոր է որոշել անձի՝ էպիլեպսիայի հատուկ ախտանիշը եւ նոպայի տեսակը, որպեսզի հնարավոր լինի պատշաճ կերպով գնահատել, թե արդյոք անձը կարող է անվտանգ վարել տրանսպորտային միջոցը (ներառյալ հետագա նոպաներ ունենալու ռիսկը), թե ոչ, եւ թե անհրաժեշտ է սկսել համապատասխան բուժում: Բուժումը պետք է իրականացնի նյարդաբանը:

1-ին խումբ՝

12.1. Առաջին խմբի՝ էպիլեպսիայով տառապող վարորդներին վարորդական վկայական տրամադրելու հարցը կարող է վերանայվել, եթե նրանք առնվազն հինգ տարի էպիլեպսիայի նոպաներ չեն ունեցել:

Եթե անձը տառապում է էպիլեպսիայով, ապա նա չի բավարարվում սահմանափակումներ չնախատեսող վկայական տրամադրելու չափորոշիչները: Այս մասին պետք է ծանուցվի վկայական տրամադրող մարմնին:

12.2. Արհեստականորեն խթանված էպիլեպսիայի նոպա՝ վարորդի այն թեկնածուն, ով հայտնի խթանող գործոնի հետեւանքով ունեցել է արհեստականորեն խթանված էպիլեպսիայի նոպա, որն ամենայն հավանականությամբ չի կրկնի տրանսպորտային միջոցը վարելիս, կարող է ճանաչվել տրանսպորտային միջոցը վարելու համար պիտանի

անհատական սկզբունքով՝ համաձայն նյարդաբանի եզրակացության (գնահատականը պետք է, հարկ եղած դեպքում, համապատասխանի III հավելվածի համապատասխան մյուս բաժիններին) (օր.՝ալկոհոլի օգտագործման կամ այլ համընթաց հիվանդությունների դեպքում):

12.3. Առաջին կամ եզակի՝ արհեստականորեն չխթանված նոպա՝ վարորդի այն թեկնածուն, ով առաջին անգամ ունեցել է արհեստականորեն չխթանված էպիլեպսիայի նոպա, կարող է, համապատասխան բժշկական գնահատման հիման վրա, ճանաչվել տրանսպորտային միջոցը վարելու համար պիտանի, եթե վեց ամիս նոպաներ չի ունեցել: Ազգային մարմինները կարող են թույլ տալ հայտնի պրոգնոստիկ բարենպաստ հատկանիշներ ունեցող վարորդներին հնարավորինս շուտ վարել տրանսպորտային միջոցը:

12.4. Գիտակցության այլ կորուստ՝ գիտակցության կորուստը պետք է գնահատվի՝ ըստ տրանսպորտային միջոցը վարելու ընթացքում կրկնման ռիսկի:

12.5. Էպիլեպսիա՝ վարորդները կամ վարորդի թեկնածուները կարող են ճանաչվել տրանսպորտային միջոցը վարելու համար պիտանի, եթե նրանք մեկ տարի չեն ունեցել այլ նոպաներ:

12.6. Բացառապես քնած ժամանակ ի հայտ եկող նոպաներ՝ վարորդի թեկնածուն կամ վարորդը, ովքեր երբեւէ չեն ունեցել այլ նոպաներ, բացի քնած ժամանակ ի հայտ եկող նոպաներից, կարող են ճանաչվել տրանսպորտային միջոց վարելու համար պիտանի, եթե նշված անձանց այդ վիճակը պահպանվել է այնքան ժամանակ, որը չպետք է լինի ավելի պակաս, քան այն ժամկետը, որի ընթացքում նրանք չպետք է ունենան էպիլեպսիայի նոպաներ: Եթե նրանք արթուն ժամանակ ունենում են էպիլեպսիայի նոպաներ, ապա վկայական ստանալու համար պետք է անցնի մեկ տարի ժամկետ, որի ընթացքում չպետք է ունենան այլ նոպաներ (տե՛ս «Էպիլեպսիա»):

12.7. Գիտակցության կամ գործելու կարողության վրա ազդեցություն չունեցող նոպաներ՝ վարորդի թեկնածուն կամ վարորդը, ովքեր երբեւէ չեն ունեցել այլ նոպաներ, բացի այն նոպաներից, որոնք չեն ազդում գիտակցության վրա կամ չեն առաջացնում ցանկացած ֆունկցիոնալ խանգարում, կարող են ճանաչվել տրանսպորտային միջոց վարելու համար պիտանի, եթե նշված անձանց այդ վիճակը պահպանվել է այնքան ժամանակ, որը չպետք է լինի ավելի պակաս, քան այն ժամկետը, որի ընթացքում նրանք չպետք է ունենան էպիլեպսիայի նոպաներ: Եթե նրանք ունենում են ցանկացած այլ տեսակի էպիլեպսիայի

նուպաներ, ապա վկայական ստանալու համար պետք է անցնի մեկ տարի ժամկետ, որի ընթացքում չպետք է ունենան այլ նուպաներ (տե՛ս «Էպիլեպսիա»):

12.8. Բժշկի կողմից մտցվող փոփոխության կամ էպիլեպսիայի դեմ բուժումը դադարեցնելու հետեանքով առաջացած նուպաներ՝ պացիենտին խորհուրդ է տրվում չվարել տրանսպորտային միջոց՝ դեղերի ընդունումը դադարեցնելուց եւ բուժումն ավարտելուց հետո վեց ամիս: Եթե այցելուն բժշկի խորհրդով կատարված փոփոխության կամ դեղերի օգտագործումը դադարեցնելու պատճառով նուպաներ է ունեցել, ապա խորհուրդ է տրվում երեք ամիս չվարել տրանսպորտային միջոցը, եթե նա վերսկսել է նախկին արդյունավետ բուժումը:

12.9. Էպիլեպսիայի բուժման նպատակով իրականացվող վիրահատական միջամտությունից հետո՝ տե՛ս «Էպիլեպսիա»

2-րդ խումբ՝

12.10. Վարորդի թեկնածուն չպետք է օգտագործի հակաէպիլեպտիկ դեղամիջոց այն ժամանակահատվածում, որի ընթացքում չի ունեցել էպիլեպսիայի նուպա: Թեկնածուն անցել է համապատասխան բժշկական հսկողություն: Նյարդաբանական խորը հետազոտության արդյունքում չեն հայտնաբերվել ուղեղի հետ կապված էական այլ պաթոլոգիաներ: Էլեկտրաէնցեֆալոգրամմայի (EEG) վրա չի նկատվել էպիլեպտոիդ ակտիվություն: Սուր նուպայից հետո պետք է կատարել էլեկտրաէնցեֆալոգրամմա եւ համապատասխան նյարդաբանական գնահատում:

12.11. Արհեստականորեն խթանված էպիլեպսիայի նուպա՝ վարորդի այն թեկնածուն, ով հայտնի խթանող գործոնի հետեանքով ունեցել է արհեստականորեն խթանված էպիլեպսիայի նուպա, որն ամենայն հավանականությամբ չի կրկնի տրանսպորտային միջոցը վարելիս, կարող է ճանաչվել տրանսպորտային միջոցը վարելու համար պիտանի անհատական սկզբունքով՝ համաձայն նյարդաբանի եզրակացության: Սուր նուպայից հետո պետք է կատարել էլեկտրաէնցեֆալոգրամմա եւ համապատասխան նյարդաբանական գնահատում:

Այն անձը, ով ունի ներգանգային կառուցվածքային վնասվածք, ինչը մեծացնում է նուպա ունենալու հավանականությունը, չպետք է վարի 2-րդ խմբի տրանսպորտային միջոցներ, քանի դեռ էպիլեպսիա ունենալու հավանականությունը չի հասել տարեկան առնվազն 2 տոկոսի: Գնահատականը պետք է, հարկ եղած դեպքում, համապատասխանի III հավելվածի համապատասխան մյուս բաժիններին) (օր.՝ ալկոհոլի օգտագործման դեպքում):

12.12. Առաջին կամ եզակի՝ արհեստականորեն չխթանված նոպա՝ վարորդի այն թեկնածուն, ով առաջին անգամ ունեցել է արհեստականորեն չխթանված էպիլեպսիայի նոպա, կարող է ճանաչվել տրանսպորտային միջոցը վարելու համար պիտանի, եթե առանց հակաէպիլեպտիկ դեղորայք օգտագործելու, հինգ տարվա ընթացքում չի ունեցել այլ նոպաներ՝ համապատասխան նյարդաբանական գնահատման հիման վրա: Ազգային մարմինները կարող են թույլ տալ հայտնի պրոգնոստիկ բարենպաստ հատկանիշներ ունեցող վարորդներին հնարավորինս շուտ վարել տրանսպորտային միջոցը:

12.13. Գիտակցության այլ կորուստ՝ գիտակցության կորուստը պետք է գնահատվի՝ ըստ տրանսպորտային միջոցը վարելու ընթացքում դրա կրկնման ռիսկի: Կրկնման ռիսկը պետք է լինի տարեկան 2 տոկոս կամ ավելի քիչ:

12.14. Էպիլեպսիա՝ էպիլեպսիայի նոպաներն առանց հակաէպիլեպտիկ դեղորայքի չեն կրկնվել 10 տարի շարունակ: Ազգային մարմինները կարող են թույլ տալ հայտնի պրոգնոստիկ բարենպաստ հատկանիշներ ունեցող վարորդներին հնարավորինս շուտ վարել տրանսպորտային միջոցը: Սա նաեւ կիրառվում է «պատանեկան էպիլեպսիայի» դեպքում:

Որոշ խանգարումներ (օր.՝ զարկերակաերակային անկանոնություն կամ ներուղեղային արյունազեղում) մեծացնում են նոպաներ ունենալու հավանականությունը, նույնիսկ եթե դրանք դեռ ի հայտ չեն եկել: Նման իրավիճակներում գնահատումը պետք է իրականացվի իրավասու բժշկական հաստատության կողմից, եւ նոպա ունենալու հավանականությունը պետք է լինի տարեկան 2 տոկոս կամ ավելի քիչ, որպեսզի վկայական տրամադրվի:

"B

ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ

1-ին խումբ՝

13.1. Վարորդական վկայականներ չեն տրամադրվում վարորդի այն թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած այն վարորդներին, ովքեր տառապում են՝

– հոգեկան լուրջ խանգարմամբ՝ լինի բնածին, թե որեւէ հիվանդության, տրավմայի կամ նյարդավիրաբուժական գործողությունների հետեւանքով.

– լուրջ մտավոր հետամնացությամբ.

– վարքագծի հետ կապված լուրջ խնդիրներով՝ պայմանավորված տարիքով կամ անհատական առանձնահատկությունների թերություններով, որոնք հանգեցնում են դատելու կարողության, վարքագծի կամ ադապտացիայի լուրջ խնդիրների.

բացառությամբ եթե նրանց դիմումը հիմնավորվում է իրավասու բժշկական հաստատության եզրակացությամբ եւ, հարկ եղած դեպքում, պարբերական բժշկական ստուգումներով:

2-րդ խումբ՝

13.2 Իրավասու բժշկական հաստատությունը պետք է պատշաճ ուշադրություն դարձնի այս խմբի՝ տրանսպորտային միջոցներ վարելու հետ կապված լրացուցիչ ռիսկերին եւ վտանգներին:

ԱԼԿՈՀՈԼ

14. Ալկոհոլի օգտագործումը մեծ վտանգ է ներկայացնում ճանապարհային երթեւեկության անվտանգության համար: Հաշվի առնելով խնդրի հրատապությունը՝ բժիշկները պետք է շատ զգոն լինեն:

1-ին խումբ՝

14.1. Վարորդական վկայականներ չեն տրամադրվում վարորդի այն թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած այն վարորդներին, ովքեր կախվածություն ունեն ալկոհոլից կամ չեն կարող ձեռնպահ մնալ խմած վիճակում վարելուց:

Եթե թեկնածուն ապացուցում է, որ որոշ ժամանակ ձեռնպահ է մնացել ալկոհոլից, եւ եթե առկա է իրավասու բժշկական հաստատության եզրակացություն, եւ թեկնածուն անցել է բժշկական զննություն, ապա վարորդական վկայական կարելի է տրամադրել վարորդի այն թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած այն վարորդներին, ովքեր նախկինում կախվածություն են ունեցել ալկոհոլից:

2-րդ խումբ՝

14.2 Իրավասու բժշկական հաստատությունը պետք է պատշաճ ուշադրություն դարձնի այս խմբի՝ տրանսպորտային միջոցներ վարելու հետ կապված լրացուցիչ ռիսկերին եւ վտանգներին:

ԹՄՐԱԴԵՂԵՐ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ

15. Չարաշահումը՝

Վարորդական վկայականներ չեն տրամադրվում վարորդի այն թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած այն վարորդներին, ովքեր կախվածություն ունեն հոգեմետ նյութերից կամ ովքեր չունեն կախվածություն նման նյութերից, բայց պարբերաբար չարաշահում են դրանց օգտագործումը, անկախ այն հանգամանքից, թե որ կարգի վկայական ստանալու համար են դիմում ներկայացրել:

Կանոնավոր օգտագործումը՝

1-ին խումբ՝

15.1. Վարորդական վկայականներ չեն տրամադրվում վարորդի այն թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած այն վարորդներին, ովքեր կանոնավոր, ցանկացած ձեռով, օգտագործում են անվտանգ վարելու կարողության վրա ազդող հոգեմետ նյութեր, եթե ընդունված քանակությունն այնքան է, որ կարող է տրանսպորտային միջոցը վարելու վրա կողմնակի ազդեցություն ունենալ: Սա վերաբերում է այն ամբողջ դեղագործական արտադրանքին կամ դեղագործական արտադրանքի համակցություններին, որոնք տրանսպորտային միջոցը վարելու վրա կողմնակի ազդեցություն ունեն:

2-րդ խումբ՝

15.2 Իրավասու բժշկական հաստատությունը պետք է պատշաճ ուշադրություն դարձնի այս խմբի՝ տրանսպորտային միջոցներ վարելու հետ կապված լրացուցիչ ռիսկերին եւ վտանգներին:

ԵՐԻԿԱՄԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ

1-ին խումբ՝

16.1. Իրավասու բժշկական հաստատության եզրակացության եւ պարբերական բժշկական ստուգումների հիման վրա կարող են տրամադրվել վարորդական վկայականներ վարորդի այն թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած այն վարորդներին, ովքեր տառապում են երիկամային անբավարարությամբ:

2-րդ խումբ՝

16.2. Բացառությամբ, եթե այն պատշաճ կերպով հիմնավորվում է իրավասու բժշկական հաստատության եզրակացությամբ եւ եթե իրականացվում է պարբերական բժշկական հետազոտություն, ապա վարորդական վկայականներ չեն տրամադրվում վարորդի այն թեկնածուներին կամ վարորդական վկայականի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմած այն վարորդներին, ովքեր տառապում են լուրջ եւ անբուժելի երիկամային անբավարարությամբ:

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1-ին խումբ՝

17.1. Հիմք ընդունելով իրավասու բժշկական հաստատության եզրակացությունը եւ, անհրաժեշտության դեպքում ենթարկվելով կանոնավոր բժշկական հետազոտությունների՝ վարորդական վկայականներ կարող են տրամադրվել կամ վարորդական վկայականի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել վարորդի այն թեկնածուների եւ վարորդների համար, ովքեր ունեն ի փոխպատվաստված օրգան կամ մարմնի արհեստական մաս, որն ազդում է տրանսպորտային միջոց վարելու կարողության վրա:

2-րդ խումբ՝

17.2 Իրավասու բժշկական հաստատությունը պետք է պատշաճ ուշադրություն դարձնի այս խմբի՝ տրանսպորտային միջոցներ վարելու հետ կապված լրացուցիչ ռիսկերին եւ վտանգներին:

18. Որպես կանոն, եթե վարորդի թեկնածուները կամ վարորդները տառապում են որեւէ խանգարմամբ, որի մասին չի հիշատակվում նախորդ պարբերության մեջ, սակայն հավանաբար ֆունկցիոնալ անկարողություն է կամ կարող է հանգեցնել դրան, որը կազդի տրանսպորտային միջոցն անվտանգ վարելու վրա, ապա վարորդական վկայականներ չպետք է տրամադրվեն կամ դրանց գործողության ժամկետը չպետք է երկարաձգվի, քանի դեռ չի ստացվել իրավասու բժշկական հաստատության եզրակացությունը եւ, հարկ եղած դեպքում, նրանք չեն անցել պարբերական բժշկական հետազոտություններ:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ

1. Վարելու քննություն ընդունողի համար պահանջվող իրազեկության մակարդակը (կոմպետենտությունը)

1.1. Այն անձը, ով իրավունք ունի իրականացնելու վարորդի թեկնածուի վարման հմտությունների գործնական գնահատումներ տրանսպորտային միջոցում, պետք է 1.2-1.6 կետերում նշված թեմաների վերաբերյալ գիտելիք, հմտություններ եւ իմացություն ունենա :

1.2. Քննություն ընդունողի իրազեկությունը պետք է կարելորվի, քանի որ նա գնահատում է վարորդական իրավունքի այնպիսի կարգ ստանալ ցանկացող թեկնածուի վարման հմտությունները, որի համար նա հանձնում է գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման քննություն:

1.3. Տրանսպորտային միջոցի վարման եւ վարորդի թեկնածուին գնահատելու վերաբերյալ գիտելիք եւ իմացություն՝

– վարելու վարքագծի տեսություն.

– վթարային իրավիճակների ընկալում եւ ճանապարհատրանսպորտային պատահարների կանխում.

– գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման քննության ստանդարտների իմացությունն ամրապնդող ծրագիր.

– գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման քննությանը ներկայացվող պահանջներ.

– ավտոճանապարհային երթեւեկության ոլորտը կարգավորող համապատասխան օրենսդրություն, այդ թվում՝ համապատասխան ԵՄ եւ ազգային օրենսդրություն ու բացատրական ուղեցույցներ.

– վարորդի թեկնածուին գնահատելու տեսություն եւ մեթոդներ.

– զգոն վարել:

1.4. Վարորդի թեկնածուին գնահատելու հմտություններ՝

– հետեւյալ իրավիճակներում վարորդի թեկնածուի ընդհանուր հմտությունները ճիշտ նկատելու, դիտանցելու եւ գնահատելու կարողություն՝

—

– վտանգավոր իրավիճակների ճիշտ եւ համակողմանի բացահայտում.

– նման իրավիճակների պատճառների եւ դրանց հավանական ազդեցության ճիշտ որոշում.

– իրազեկության ձեռք բերում եւ սխալների բացահայտում.

– գնահատման գործընթացի միանմանություն եւ համահունչություն.

– տեղեկատվության եւ կարեւոր կետերի արագ յուրացում.

– կանխատեսելու ունակություն, հնարավոր խնդիրների բացահայտում եւ դրանց լուծման ռազմավարությունների մշակում.

– ժամանակին եւ կառուցողական արձագանքի տրամադրում:

1.5. Քննություն ընդունողի վարելու հմտությունները՝

– Վարորդական վկայականի կարգ ստանալու համար գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման քննություն անցկացնելու իրավունք ունեցող անձը պետք է կարողանա բարձրակարգ հմտությամբ վարել այդ տեսակի տրանսպորտային միջոցը:

1.6. Ծառայության որակը՝

– քննության ժամանակ թեկնածուի ակնկալիքների սահմանում եւ դրանց մասին նրան հաղորդում.

– թեկնածուների հետ հաղորդակցության հմտություններ՝ ընտրելով լսարանին հարմար բովանդակություն, ոճ, լեզու եւ համատեքստ, ինչպես նաեւ թեկնածուների հարցերին պատասխանելը.

– քննության արդյունքների վերաբերյալ հստակ հետադարձ կապի ապահովում.

– թեկնածուներին հարգանքով վերաբերելը եւ նրանց նկատմամբ խտրականություն չդրսետրելը:

1.7. Գիտելիքներ ավտոտրանսպորտային միջոցի մասերի եւ ֆիզիկայի վերաբերյալ՝

– գիտելիքներ ավտոտրանսպորտային միջոցի մասերի, ինչպես, օրինակ՝ ղեկանիվի, անվադողերի, լույսերի, հատկապես մոտոցիկլետների եւ բեռնատար տրանսպորտային միջոցների ղեկանիվի, անվադողերի, լույսերի վերաբերյալ.

– բեռնման անվտանգության մասին գիտելիքներ.

– տրանսպորտային միջոցների ֆիզիկայի, ինչպես, օրինակ՝ արագության, շփման ուժի, դինամիկայի, էներգիայի վերաբերյալ գիտելիքները:

1.8. Տրանսպորտային միջոցի՝ խնայողական ու բնապահպանական ռեժիմով վարելը:

2. Ընդհանուր պայմանները

2.1. «B» կարգի վարորդական վկայական ստանալու համար քննություն ընդունողը.

ա) պետք է ունենա առնվազն երեք տարվա «B» կարգի վարորդական վկայական.

բ) պետք է լինի առնվազն 23 տարեկան.

գ) պետք է հաջողությամբ անցած լինի սույն հավելվածի 3-րդ կետով նախատեսված նախնական որակավորումը, ինչպես նաեւ սույն հավելվածի 4-րդ կետով նախատեսված՝ որակի ապահովման եւ պարբերական վերապատրաստման ընթացակարգերը.

դ) պետք է ստացած լինի «Եվրոպական համայնքի անդամ պետությունների միջեւ մասնագիտական վերապատրաստման որակավորումների համեմատության մասին» Խորհրդի 1985 թվականի հուլիսի 16-ի 85/368/ԵՏՀ որոշմամբ (11) սահմանված մասնագիտական տեխնիկական կրթություն, որը համարժեք է 3-րդ մակարդակին.

ե) չպետք է միաժամանակ ավտոդպրոցում հանդես գա որպես վարձատրվող վարորդ-դասավանդող:

2.2. Այլ կարգերի համար վարելու քննություն ընդունողը՝

ա) պետք է համապատասխան կարգի վարորդական վկայական ունենա կամ մասնագիտական համապատասխան որակավորում ստանալու միջոցով ձեռք բերած լինի համարժեք գիտելիք.

բ) պետք է հաջողությամբ անցած լինի սույն հավելվածի 3-րդ կետով նախատեսված նախնական որակավորումը, ինչպես նաեւ սույն հավելվածի 4-րդ կետով նախատեսված՝ որակի ապահովման եւ պարբերական վերապատրաստման ընթացակարգերը.

գ) պետք է առնվազն 3 տարի աշխատած լինի որպես «B» կարգի որակավորված քննություն ընդունող. այս ժամկետը կարող է չեղյալ հայտարարվել, եթե համապատասխան քննություն ընդունողն ապացուցի, որ՝

– ունի համապատասխան կարգում վարելու առնվազն 5 տարվա փորձ կամ

– վարելու հմտության տեսական եւ գործնական բարձր մակարդակի գնահատում իրականացնելու կարողություն, որն անհրաժեշտ է վարորդական վկայական ստանալու համար՝ այսպիսով այդ պահանջը դարձնելով կատարման համար ոչ պարտադիր.

դ) պետք է ունենա մասնագիտական տեխնիկական կրթություն, որը համարժեք է առնվազն 85/368/ԵՏՀ որոշմամբ սահմանված՝ 3-րդ մակարդակն ավարտելուն.

ե) չպետք է միաժամանակ հանդես գա որպես առևտրային հիմունքներով աշխատող վարորդ-դասավանդող որեւէ ավտոդպրոցում :

2.3. Համարժեք վարորդական վկայականները

2.3.1. Անդամ պետությունները կարող են թույլատրել քննություն ընդունողին անցկացնել «AM», «A1», «A2» եւ «A» կարգերի համար վարելու քննություն՝ նշված կարգերից որեւէ մեկի համար 3-րդ կետով սահմանված նախնական որակավորումն ստանալուց հետո:

2.3.2. Անդամ պետությունները կարող են թույլատրել քննություն ընդունողին անցկացնել «C1», «C», «D1» եւ «D» կարգերի համար վարելու քննություն՝ նշված կարգերից որեւէ մեկի համար 3-րդ կետով սահմանված նախնական որակավորումն ստանալուց հետո:

2.3.3. Անդամ պետությունները կարող են թույլատրել քննություն ընդունողին անցկացնել «BE», «C1E», «CE», «D1E» եւ «DE» կարգերի համար վարելու քննություն՝ նշված կարգերից որեւէ մեկի համար 3-րդ կետով սահմանված նախնական որակավորումն ստանալուց հետո:

3. Նախնական որակավորումը

3.1. Նախնական վերապատրաստումը

3.1.1. Նախքան անձին կթույլատրվի տրանսպորտային միջոցներ վարելու քննություններ ընդունել՝ նա պետք է հաջողությամբ ավարտի անդամ պետության կողմից սահմանվելիք վերապատրաստման ծրագիրը՝ 1-ին կետով սահմանված իրազեկության մակարդակն ապահովելու համար:

3.1.2. Անդամ պետությունները, կոնկրետ վերապատրաստման ծրագրի բովանդակությամբ պայմանավորված, պետք է որոշեն, թե քննություն ընդունողը կստանա մեկ կարգի, թե մեկից ավելի կարգերի վարորդական վկայական ստանալու համար վարելու քննություններ անցկացնելու թույլտվություն:

3.2. Քննությունները

3.2.1. Նախքան անձին կթույլատրվի տրանսպորտային միջոցներ վարելու քննություններ ընդունել՝ նա պետք է ապացուցի, որ 1-ին կետում նշված առարկաների գծով ցուցաբերում է բավարար մակարդակի գիտելիք, իմացություն, հմտություններ եւ բանիմացություն:

3.2.2. Անդամ պետություններն անցկացնում են քննություն, որով մանկավարժական տեսանկյունից ամենահարմար եղանակով գնահատվում է 1-ին, մասնավորապես, 1.4 կետով սահմանված՝ անձի իրազեկության մակարդակը: Քննությունները կազմված են տեսական ու գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման քննություններից: Հարկ եղած դեպքում, պետք է կիրառվի համակարգչայնացված գնահատումը: Քննության ընթացքում անցկացվող ցանկացած քննության եւ գնահատման բնույթի ու տեսողության վերաբերյալ մանրամասները որոշում են առանձին անդամ պետություններն իրենց հայեցողությամբ:

3.2.3. Անդամ պետությունները, կոնկրետ վերապատրաստման ծրագրի բովանդակությամբ պայմանավորված, պետք է որոշեն, թե քննություն ընդունողը կստանա մեկ կարգի, թե մեկից ավելի կարգերի վարորդական վկայական ստանալու համար վարելու քննություններ անցկացնելու թույլտվություն:

4. Որակի ապահովումը եւ պարբերական վերապատրաստումը

4.1. Որակի ապահովումը

4.1.1. Անդամ պետությունները պետք է մշակեն որակի ապահովման ընթացակարգեր, որպեսզի կարողանան ապահովել վարելու քննություն ընդունողներին ներկայացվող ստանդարտներին համապատասխանությունը:

4.1.2. Որակի ապահովման ընթացակարգերն են աշխատավայրում նրանց վերահսկողությունը, հետագա վերապատրաստումը եւ նրանց ներկայացվող ստանդարտների փոփոխությունը, նրանց շարունակական մասնագիտական զարգացումը եւ նրանց կողմից անցկացված վարելու քննությունների արդյունքների պարբերական ուսումնասիրությունը:

4.1.3. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ 4.1.2 կետում նշված որակի ապահովման ընթացակարգերի կիրառմամբ նրանցից յուրաքանչյուրն ամեն տարի վերահսկողության ենթարկվի: Ավելին, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ յուրաքանչյուր քննություն ընդունողի կողմից քննությունների անցկացման գործընթացը վերահսկվի յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ առնվազն կես օր: Նրանք պետք է հնարավորություն ընձեռեն, որ իրենց կողմից անցկացվող քննությունները մի քանի անգամ վերահսկվեն: Խնդիրների հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է շտկիչ գործողություններ ձեռնարկել: Քննություն ընդունողի աշխատանքը վերահսկող անձը պետք է այս նպատակի համար անդամ պետության կողմից լիազորված անձ լինի:

4.1.4 Անդամ պետությունները կարող են ապահովել, որ եթե քննություն ընդունողին թույլատրվել է քննություն անցկացնել մեկից ավելի կարգերում, բավարարելով մեկ կարգում քննություն ընդունելու համար նախատեսված վերահսկողության պահանջը, ապա նա պետք է բավարարի մեկից ավելի կարգերի համար քննություն ընդունելու համար նախատեսված վերահսկողության պահանջը:

4.1.5. Քննության անցկացման աշխատանքը պետք է վերահսկվի անդամ պետության կողմից լիազորված մարմնի կողմից՝ ապահովելու համար գնահատման ճիշտ եւ հետետողական կիրառումը:

4.2. Պարբերական վերապատրաստումը

4.2.1. Անդամ պետություններն ապահովում են, որ քննություն ընդունողները, որպեսզի շարունակեն քննություններ անցկացնել, անկախ այն կարգերի թվից, որոնց համար նրանք հավատարմագրված են, անցնեն՝

- երկու տարին մեկ անգամ ընդամենը չորս օր տետողությամբ պարբերական վերապատրաստման դասընթացներ, որպեսզի՝
- պահպանեն եւ թարմացնեն քննություն անցկացնելու համար անհրաժեշտ իրենց գիտելիքներն ու հմտությունները.
- զարգացնեն նոր հմտություններ, որոնք կարելի է դարձել իրենց մասնագիտական գործունեության համար.
- կարողանան ապահովել քննությունների՝ արդար եւ սահմանված չափանիշներով անցկացումը.

– հինգ տարին մեկ անգամ առնվազն հինգ օր տեւողությամբ անցնեն պարբերական վերապատրաստման դասընթաց.

– զարգացնեն եւ պահպանեն գործնական վարման համար անհրաժեշտ հմտություններ:

4.2.2. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ այն քննություն ընդունողները, որոնք, ըստ գործող որակի ապահովման համակարգի, իսկապես լավ չեն աշխատում, անցնեն հատուկ վերապատրաստման դասընթացներ:

4.2.3. Պարբերական վերապատրաստման դասընթացները կարող են կազմակերպվել ճեպագրույցների, տեսական դասընթացների, ավանդական կամ էլեկտրոնային ուսուցման եղանակով: Դրանք կարող են անցկացվել անհատական կամ խմբակային տարբերակով: Անդամ պետությունների կողմից նպատակահարմար համարվելու դեպքում կարող է անհրաժեշտ լինել նաեւ քննություն ընդունողներին ներկայացվող ստանդարտների փոփոխությունը:

4.2.4 Անդամ պետությունները կարող են ապահովել, որ եթե քննություն ընդունողին մեկից ավելի կարգերի համար քննություն է թույլատրվել անցկացնել, բավարարելով մեկ կարգի համար քննություն ընդունելու համար նախատեսված պարբերական վերապատրաստում անցնելու պահանջը, ապա նա պետք է բավարարի մեկից ավելի կարգերի համար քննություն ընդունելու համար նախատեսված պարբերական վերապատրաստում անցնելու պահանջը՝ պայմանով, որ 4.2.5 կետով սահմանված պայմանը բավարարված է:

4.2.5. Եթե քննություն ընդունողը 24 ամսվա ընթացքում որեւէ կարգի համար վարելու քննություն չի ընդունել, ապա նա պետք է անցնի համապատասխան վերագնահատում՝ նախքան նրան թույլ կտրվի այդ կարգի համար քննություն ընդունել: Նշված վերագնահատումը կարող է անցկացվել որպես 4.2.1. կետով սահմանված պահանջի մաս:

5. Ձեռք բերված իրավունքները

5.1. Անդամ պետությունները կարող են անմիջապես, նախքան նշված դրույթներն ուժի մեջ մտնելը, թույլ տալ վարելու իրավունք ձեռք բերելու քննություններ անցկացնող անձանց շարունակել անցկացնել նշված քննությունները՝ չնայած, որ նրանց թույլ է տրվել դրանք անցկացնել 2-րդ կետում նշված ընդհանուր պայմաններին կամ 3-րդ կետով սահմանված նախնական որակավորման գործընթացին համապատասխան:

5.2. Այնուամենայնիվ, քննություն ընդունողները պետք է ենթարկվեն 4-րդ կետով սահմանված կանոնավոր վերահսկողության, եւ նրանց նկատմամբ պետք է կիրառվեն որակի ապահովման ընթացակարգեր:

ՀԱՎԵԼՎԱԾ V

4(4)(Բ) ՀՈԴՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆԸ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում, որպեսզի.

- հաստատեն եւ վերահսկեն 7(1)(դ) հոդվածով նախատեսված վերապատրաստման գործընթացը կամ
- կազմակերպեն 7(1)(դ) հոդվածով նախատեսված՝ գործնական վարման հմտությունների եւ վարքագծի քննություն:

2.1. Վարորդների վերապատրաստման տեսողությունը.

- առնվազն 7 ժամ է:

3. Վարորդների վերապատրաստման դասընթացի բովանդակությունը

Վարորդի համար նախատեսված վերապատրաստման դասընթացների ավարտին վարորդը ձեռք կբերի II հավելվածի 2–րդ եւ 7–րդ կետերում ներկայացված գիտելիքը, հմտություններն ու վարքագիծը: Հատուկ ուշադրություն է հատկացվում՝

- տրանսպորտային միջոցի շարժման դինամիկային, անվտանգության չափանիշներին, տրակտորային փոխադրամիջոցին եւ կցորդին (կապակցող մեխանիզմին), ճիշտ լցավորմանը եւ պաշտպանիչ հարմարանքներին:

Գործնական մասը ներառում է հետեւյալ վարժությունների կատարումը՝ տրանսպորտային միջոցի ընթացքի արագացում, դանդաղեցում, շրջադարձ, արգելակում, երթեւեկության գոտու փոփոխություն, արգելակում/խուսափողական գործողություն, կցորդի ճոճում, մեխանիկական տրանսպորտային միջոցից կցորդը կապազերծելն ու կրկին կցորդելը, կայանելը.

- վերապատրաստման դասընթացի յուրաքանչյուր մասնակից պետք է կատարի գործնական վարժությունները եւ ցույց տա հանրային օգտագործման ճանապարհների վրա վարելու իր հմտություններն ու վարքագիծը.

– ուսուցման համար օգտագործվող տրանսպորտային միջոցների համակցություններն ընկնում են այն կարգի վարորդական վկայականի ներքո, որի համար մասնակիցները դիմել են:

4. Գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման նպատակով անցկացվող քննության տեւողությունն ու բովանդակությունը

Քննության տեւողությունը եւ տրանսպորտային միջոցով անցած տարածությունը պետք է բավարար լինի՝ գնահատելու համար 3-րդ կետով սահմանված՝ գործնական վարման հմտությունները եւ վարքագիծը:

ՀԱՎԵԼՎԱԾ VI

«Ա» ԿԱՐԳԻ ՄՈՏՈՑԻԿԼԵՏՆԵՐԻ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆԸ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ (ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ)

1. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում, որպեսզի.
 - հաստատեն եւ վերահսկեն 7(1)(գ) հոդվածով նախատեսված վերապատրաստման գործընթացը կամ
 - կազմակերպեն 7(1)(գ) հոդվածով նախատեսված՝ գործնական վարման հմտությունների եւ վարքագծի քննություն:
2. Վարորդների վերապատրաստման տեւողությունը.
 - առնվազն 7 ժամ է:
3. Վարորդների վերապատրաստման դասընթացի բովանդակությունը
 - Վարորդների վերապատրաստման դասընթացում ընդգրկված են II հավելվածի 6-րդ կետում նշված բոլոր հայեցակետերը.
 - յուրաքանչյուր մասնակից պետք է կատարի վերապատրաստման դասընթացի գործնական վարժությունները եւ ցույց տա հանրային օգտագործման ճանապարհների վրա վարելու իր հմտություններն ու վարքագիծը.
 - ուսուցման համար օգտագործվող մոտոցիկլետները դասվում են վարորդական վկայականի այն կարգին, որի համար մասնակիցները դիմել են:
4. **Գործնական վարման հմտությունների եւ վարքագծի ստուգման նպատակով անցկացվող քննության տեւողությունն ու բովանդակությունը**

Քննության տեւողությունը եւ տրանսպորտային միջոցով անցած տարածությունը պետք է բավարար լինի՝ գնահատելու համար սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված՝ գործնական վարման հմտությունները եւ վարքագիծը:

ՀԱՎԵԼՎԱԾ VII

Մաս Ա

ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶՎԱԾ ԵՎ ՀԵՏԵՎԱԲԱՐ ՓՈՓՈԽՎԱԾ ՀՐԱՀԱՆԳԸ

(նշված՝ 17-րդ հոդվածում)

Խորհրդի 91/439/ԵՏՀ հրահանգ (1)	(ՊՏ L 237, 24.08.1991թ., էջ 1)
Խորհրդի թիվ 94/72/ԵՀ հրահանգ	(ՊՏ L 337, 24.12.1994թ., էջ 86)
Խորհրդի թիվ 96/47/ԵՀ հրահանգ	(ՊՏ L 235, 17.09.1996թ., է ջ 1)
Խորհրդի թիվ 97/26/ԵՀ հրահանգ	(ՊՏ L 150, 07.06.1997թ., էջ 41)
Հանձնաժողովի թիվ 2000/56/ԵՀ հրահանգ	(ՊՏ L 237, 21.09.2000թ., էջ 45)
Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003/59/ԵՀ հրահանգ, միայն 10-րդ հոդվածի 2-րդ պարբերություն	(ՊՏ L 226, 10.09.2003թ., էջ 4)
Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1882/2003 կանոնակարգի (ԵՀ) միայն II հավելվածի 24-րդ կետը	(ՊՏ L 284, 31.10.2003թ., էջ 1)
(1) 91/439/ԵՏՀ հրահանգը փոփոխվել է նաեւ հետեւյալ ակտով, որը ուժը կորցրած չի ճանաչվել՝ 1994 թվականի	

«Անդամակցության մասին» ակտ

Մաս Բ

ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ՓՈԽԱՏԵՂՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏՆԵՐԸ

(նշված՝ 17-րդ հոդվածում)

Հրահանգ	Փոխատեղման վերջնաժամկետ	Կիրառման ամսաթիվ
91/439/ԵՏՀ հրահանգ	1994 թվականի հուլիսի 1	1996 թվականի հուլիսի 1
94/72/ԵՀ հրահանգ	-	1995 թվականի հունվարի 1
96/427/ԵՀ որոշում	-	1996 թվականի հուլիսի 16
96/47/ԵՀ հրահանգ	1996 թվականի հուլիսի 1	1996 թվականի հուլիսի 1
97/26/ԵՀ հրահանգ	1998 թվականի հունվարի 1	1998 թվականի հունվարի 1
2000/56/ԵՀ հրահանգ	2003 թվականի սեպտեմբերի 30.	2003 թվականի սեպտեմբերի 30, 2008 թվականի սեպտեմբերի 30 (II հավելվածի 6.2.5 կետ) և 2013 թվականի սեպտեմբերի 30 (II

		հավելվածի 5.2 կետ)
2003/59/ԵՀ հրահանգ	2006 թվականի սեպտեմբերի 10	2008 թվականի սեպտեմբերի 10 (ուղեորափոխադրումների դեպքում) և 2009 թվականի սեպտեմբերի 10 (բեռնափոխադրումների դեպքում)

ՀԱՎԵԼՎԱԾ VIII

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

91/439/ԵՏՀ հրահանգ	Սույն Հրահանգ
1(1) հոդված, առաջին նախադասություն	1(1) հոդված, առաջին նախադասություն
1(1) հոդված, երկրորդ նախադասություն	—
-	1(2) հոդված
1(2) հոդված	2(1) հոդված
-	2(2) հոդված
1(3) հոդված	-
2(1) հոդված	1(1) հոդված, երկրորդ նախադասություն
2(2) հոդված	3(1) հոդված
	3(2) հոդված
	3(3) հոդված
2(3) հոդված	-
2(4) հոդված	-
3(1) հոդված, առաջին ենթապարբերություն, ներածություն	4(1) հոդված, առաջին նախադասություն
-	4(2) հոդված, առաջին պարբերությ

-	4(2) հողված, երկրորդ պարբերույթ
3(1) հողված, 1-ին ենթապարբերություն, 1-ին պարբերույթ	4(3) հողված, առաջին պարբերույթ
3(1) հողված, 1-ին ենթապարբերություն, 2-րդ պարբերույթ	4(4)(բ) հողված, 1-ին ենթապարբերություն
3(1) հողված, 1-ին ենթապարբերություն, 3-րդ պարբերույթ	4(4)(բ) հողված, երկրորդ ենթապարբերություն
3(1) հողված, 1-ին ենթապարբերություն, 4-րդ պարբերույթ	4(4) (գ) հողված
3(1) հողված, 1-ին ենթապարբերություն, 5-րդ պարբերույթ	4(4)(գ) հողված
3(1) հողված, 1-ին ենթապարբերություն, 6-րդ պարբերույթ	4(4)(է) հողված
3(1) հողված, 1-ին ենթապարբերություն, 7-րդ պարբերույթ	4(4)(ժ) հողված
3(1) հողված, 1-ին ենթապարբերություն, 8-րդ պարբերույթ	4(4)(ժա) հողված
3(2) հողված, առաջին ենթապարբերություն, ներածություն	-
3(2) հողված, 1-ին ենթապարբերություն, 1-ին պարբերույթ	4(3)(ա) հողված
3(2) հողված, 1-ին ենթապարբերություն, 2-րդ պարբերույթ	4(4)(ա) հողված
3(2) հողված, 1-ին ենթապարբերություն, 3-	4(4)(դ) հողված

րդ պարբերույթ	
3(2) հոդված, 1-ին ենթապարբերություն, 4-րդ պարբերույթ	4(4) (ե) հոդված
3(2) հոդված, 1-ին ենթապարբերություն, 5-րդ պարբերույթ	4(4) (ը) հոդված
3(2) հոդված, առաջին ենթապարբերություն, 6-րդ պարբերույթ, ներածություն	4(4)(թ) հոդված
3(2) հոդված, 1-ին ենթապարբերություն, 6-րդ պարբերույթ, 1-ին ենթապարբերույթ	-
3(2) հոդված, 1-ին ենթապարբերություն, 6-րդ պարբերույթ, 2-րդ պարբերույթ	-
3(3) հոդված, ներածություն	-
3(3) հոդված, առաջին պարբերույթ	4(1) հոդված, 3-րդ նախադասություն
3(3) հոդված, 2-րդ ենթապարբերույթ, 1-ին ենթապարբերույթ	4(3) հոդված, 2-րդ պարբերույթ
3(3) հոդված, 2-րդ պարբերույթ, 2-րդ ենթապարբերույթ	-
3(3) հոդված, երրորդ պարբերույթ	4(3) հոդված, առաջին պարբերույթ
3(3) հոդված, 4-րդ պարբերույթ	4(4) հոդված, 1-ին պարբերույթ
3(3) հոդված, 5-րդ պարբերույթ	4(4) հոդված, 2-րդ պարբերույթ

-	4(3) հողված
3(4) հողված	-
3(5) հողված	-
3(6) հողված	4(5) հողված, 1-ին նախադասություն
-	4(5) հողված, երկրորդ նախադասություն
4-րդ հողված	5-րդ հողված
5(1) հողված	6(1) հողված
5(1)(ա) հողված	6(1)(ա) հողված
5(1)(բ) հողված	6(1)(բ) հողված
5(2) հողված, ներածություն	6(2) հողված, ներածություն
5(2)(ա) հողված	6(2)(ա) հողված
5(2)(բ) հողված	6(2)(բ) հողված
-	6(2) (գ) հողված
-	6(2)(դ) հողված
-	6(2) (ե) հողված
-	6(2)(զ) հողված
5(3) հողված	-
5(4) հողված	6(4) հողված
6(1) հողված, ներածություն	4(1) հողված, երկրորդ նախադասություն

6(1)(ա) հոդված, 1-ին պարբերույթ	4(3)(ա) հոդված, 3-րդ պարբերույթ
6(1)(ա) հոդված, 2-րդ պարբերույթ	4(4)(ա) հոդված, 2-րդ պարբերույթ
6(1)(բ) հոդված, 1-ին պարբերույթ	4(3)(բ) հոդված, 2-րդ պարբերույթ
	4(3)(գ) հոդված, 2-րդ պարբերույթ
6(1)(բ) հոդված, 2-րդ պարբերույթ, 1-ին այլընտրանքային տարբերակ	4(4)(բ) հոդված, 5-րդ ենթապարբերություն
6(1)(բ) հոդված, 2-րդ պարբերույթ, 2-րդ այլընտրանքային տարբերակ	4(4)(գ) հոդված, 2-րդ պարբերույթ
6(1)(բ) հոդված, 3-րդ պարբերույթ, 1-ին եւ 2-րդ այլընտրանքային տարբերակ	4(4)(ե) հոդված, 2-րդ պարբերույթ
6(1)(բ) հոդված, 3-րդ պարբերույթ, 2-րդ եւ 3-րդ այլընտրանքային տարբերակ	4(4)(ե) հոդված, 3-րդ պարբերույթ
6(1)(գ) հոդված, 1-ին պարբերույթ, 1-ին եւ 2-րդ այլընտրանքային տարբերակ	4(4)(Ժա) հոդված, 2-րդ պարբերույթ
6(1)(գ) հոդված, 1-ին պարբերույթ, 3-րդ եւ 4-րդ այլընտրանքային տարբերակ	4(4)(թ) հոդված, 2-րդ պարբերույթ
6(2) հոդված	4(6) հոդված, 1-ին ենթապարբերություն
-	4(6) հոդված, 2-րդ ենթապարբերություն
6(3) հոդված	4(6) հոդված, 3-րդ եւ 4-րդ

	Ենթապարբերություն
7(1) հոդված, ներածություն	7(1) հոդված, ներածություն
7(1)(ա) հոդված	7(1)(ա) հոդված
-	7(1)(բ) հոդված
-	7(1) (գ) հոդված
-	7(1)(դ) հոդված
7(1)(բ) հոդված	7(1) (ե) հոդված
7(2) հոդված	-
7(3) հոդված	-
-	7(2) հոդված
-	7(3) հոդված
7(4) հոդված	7(4) հոդված
7(5) հոդված	7(5)(ա) հոդված
-	7(5)(բ) հոդված
-	7(5) (գ) հոդված
-	7(5)(դ) հոդված
7 ա(1) հոդված	-
7 ա(2) հոդված	8-րդ հոդված
7(բ) հոդված	9-րդ հոդված
-	10-րդ հոդված

8-րդ հոդված	11-րդ հոդված
9-րդ հոդված	12-րդ հոդված
10-րդ հոդված	13(1) հոդված
-	13(2) հոդված
11-րդ հոդված	14-րդ հոդված
12(1) հոդված	-
12(2) հոդված	-
12(3) հոդված	15-րդ հոդված
-	16-րդ հոդված
13-րդ հոդված	17-րդ հոդված, 1-ին ենթապարբերություն
-	17-րդ հոդված, 2-րդ ենթապարբերություն
-	18-րդ հոդված
14-րդ հոդված	19-րդ հոդված
Հավելված I	-
Հավելված Iա	Հավելված I
Հավելված II	Հավելված II
Հավելված III	Հավելված III
-	Հավելված IV
-	Հավելված V

-	Հավելված VI
---	-------------

(1) ՊՏ C 112, 30.04.2004թ., էջ 34:

(2) Եվրոպական պառլամենտի 2005 թվականի փետրվարի 23-ի եզրակացություն (ՊՏ C 304 E, 01.12.2005թ., էջ 202), Խորհրդի 2006 թվականի սեպտեմբերի 18-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 295 E, 05.12.2006թ., էջ 1) եւ Եվրոպական պառլամենտի 2006 թվականի դեկտեմբերի 14-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել): Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 19-ի որոշում:

(3) ՊՏ L 237, 24.08.1991թ., էջ 1: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 284, 31.10.2003թ., էջ 1):

(4) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23: 2006/512/ԵՀ որոշմամբ փոփոխված որոշում (ՊՏ L 200, 22.07.2006թ., էջ 11):

(5) ՊՏ L 124, 09.05.2002թ., էջ 1: Վերջին անգամ Հանձնաժողովի 2005/30/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 106, 27.04.2005թ., էջ 17):

(6) ՊՏ L 226, 10.09.2003թ., էջ 4: Խորհրդի 2004/66/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 168, 01.05.2004թ., էջ 35):

(7)

(8) ՊՏ L 370, 31.12.1985թ., էջ 1: Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 561/2006 կանոնակարգով (ԵՀ) ուժը կորցրած ճանաչված կանոնակարգ (ՊՏ L 102, 11.04.2006թ., էջ 1):

(9) ՊՏ L 370, 31.12.1985թ., էջ 8: Վերջին անգամ թիվ 561/2006 (ԵՀ) կանոնակարգով փոփոխված կանոնակարգ:

(10) «Վարորդական վկայականների մասին» Խորհրդի 91/439/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ Հանձնաժողովի 2000 թվականի սեպտեմբերի 14-ի 2000/56/ԵՀ հրահանգ (ՊՏ L 237, 21.09.2000թ., էջ 45):

(11) ՊՏ L 199, 31.07.1985թ., էջ 56: